սին գաւիթին մէջը արգիլուած էր՝ բանե-
2 Ա.յսպէս կ'ըսէ Տէրը [2]որ ասա հոնկէ չինեց, Տէ-
րը՝ որ զանիկա հաստատելու համար զանիկա
3 առեղծեց, [3]որուն անունը Եհովայ է ։ [4]Ինծի
կանչէ, ու քեզի պատասխան տամ, և քեզի
մեծ ու խորին բաներ պատմեմ, որ դուն չես
4 գիտեր ։ Վասն զի ասա քաղաքին տուներուն
համար, ու Յուդայի թագաւորներուն ասա-
նելուն համար՝ որոնք [5]պատնէշներէն ու սու-
բերէն փլած են, խօսեցաւ Տէր Աստուածը
5 այսպէս կ'ըսէ. [6]Քաղդէացւոց դէմ պատե-
րազմ բնելու կու գան, և ան փոխանակ մեռած
մարդոց դիերովը պիտի լեցուին, որոնք իմ
բարկութեանովս ու սրտմտութեանովս պիտի
զարնեմ. վասն զի ես ասա քաղաքէն իմ երեսս
ծածկեցի՝ անոնց բոլոր չարութեանը համար ։
6 Ահա [7]անոր առողջութիւն ու բժշկութիւն պի-
տի բերեմ ու զանոնք պիտի բժշկեմ, և խա-
ղաղութեան ու ճշմարտութեան առատու-
7 թիւն անոնց պիտի յայտնեմ ։ Ու [8]Յուդային գե-
րութիւնը ու Իսրայէլին գերութիւնը պիտի
դարձընեմ, ու զանոնք [9]առջիներէն պէս պիտի
8 հաստատեմ ։ Ու անոնց ինծի գէմ գործած
բոլոր անօրէնութիւններէն [10]զանոնք պիտի սրբեմ,
ու անոնց ինծի գէմ բրած [11]բոլոր անօրէնու-
9 թիւններն ու յանցանքներն պիտի ներեմ ։ Ու
[12]ասկից ինծի ուրախութեան անուն, փառք
ու պարծանք պիտի ըլլայ երկրիս բոլոր ազ-
գերուն մէջը՝ որոնք պիտի լսեն ան ամէն բա-
րիքը՝ որ ես անոնց պիտի ընեմ. և [13]պիտի
վախնան ու դողան ան ամէն բարիքին ու ամէն
յաջողութեանը համար՝ որ ես ասա [14]ընե-
մի պիտի ։
10 Տէրը այսպէս կ'ըսէ. Ձա անդաստ մէջ՝ [15]ո-
րուն համար դուք կ'ըսէք թէ Աւերակ է ու անա-
սունէ զուրկ է՝ [16]Յուդայի քաղաքներուն մէջ
և Յուդայի քաղաքներուն մէջ ու երուսաղէ-
մի փողոցներուն մէջ, որոնք անասնոյ ու ան-
բնակ ու անասունէ զուրկ եղած են, [17]անոնց
11 ցան են, նորէն պիտի լսուի [18]Ցնծութեան ձայն,
և ուրախութեան ձայն, փեսային ձայն, ու

ֆ Գէ · է · 30 · 31 · իգ · 11 · Եզեկ · ը · 5 · 6 ։
= Գէ · է · 31 · ԺԹ · 3 ։
ի Դան · Ժը · 21 · գ Թագ · Ժա · 33 ։
ո Գր · է · 31 ։
պ Հր · 24 ։
ր Ը Օր · է · 3 · Գէ · իգ · 3 · իԹ · 14 · ը · 15 · Եզեկ · լՀ · 31 ։
ս Գէ · իգ · 7 · լ · 33 · ը · 33 ։
տ Գէ · իգ · 7 · Եզեկ · Ժա · 19 · 20 ։
ց Ես · Ծէ · 3 · Գէ · ը · 31 ։
ւ Գէ · ը · 33 ։
փ Գէ · ը · 9 · Ա՛ֆ · գ · 17 ։
ք Գէ · իգ · 8 · ը · 33 · Ամ՛ֆ · Բ · 15 ։
օ Գէ · ը · 33 ։
ֆ Գէ · ը · 33 · Հ՛ր · 11 ։
ռ Գէ · ը · 34 ։
ս Գէ · Ժէ · 26 ։
վ Գէ · է · 37 ։
տ Գէ · է · 3 · ը · 44 · Հ՛ր · 11 ։
ց Ես · ս · 28 · Գէ · իգ · 6 · լ · 30 · ը · 4 · 33 · իգ · 10 ։
ւ Եզէկ · ՀԱ · 21 ։
փ Եզեկ · լէ · 21 · Ձ՛ար · Ժգ · 1 · Եզր · Բ · 13 · 14 ։
ք Գէ · լ · 34 · Մ՛ար · ե · 18 ։
օ Ես · կր · 7 · Գէ · Ժգ · 11 ։
ֆ Տ՛ես Ես · ֆ · 3 ։
ռ Գէ · ը · 43 ։
ս Գէ · ե · 34 · Ժգ · 9 · իե · 10 · Ցաք · Ժը · 23 ։

հաթաի ձայն, նաև անունք ձայնի՝ որոնք Տէրոջ
առնեն զդահաբեան ընծանէ բնութենի՝ կ'ըսէն,
զդահոցիք զօրաց Տէրոջմէն, ինչու որ Տէրը
բարի է, ինչու որ անոր ողորմութիւնը յաւի-
տեան է. հանիզի աս երկրին գերիներէն նորէն
առջի վիճակին պիտի դարձնեմ, կ'ըսէ Տէրը։
12 Զօրաց Տէրը այսպէս կ'ըսէ. Ա՛ն տեղս որ մէջ՝
որ ամրդի ու անասնի, դարի բլլալով՝ անա-
պատ դարձած է, և անոր ամէն քաղաքնե-
րուն մէջ՝ նորէն հօտեր պառկեցնող հովիւ-
13 ներու բնակարաններ պիտի բլլան։ Լեռնա-
յին քաղաքներուն մէջ, դաշտային քաղաք-
րուն մէջ, ու Հարաւային քաղաքներուն մէջ,
և Բենիամինի երկրին մէջ, ու Երուսաղէմին
չրջակայ տեղերուն և Յուդայի քաղաք-
րուն մէջ հօտերը դարձեալ նորէն հաշիւին
ձեռքէն պիտի անցնին, կ'ըսէ Տէրը։
14 Ահա օրեր կու գան՝ կ'ըսէ Տէրը, որ խո-
րհրդի տանը Հաստատ և Յուդայի տանը Հաստատ
15 բառն խօսքս պիտի կատարեմ։ Ա՛ն օրե-
րը ու ա՛ն ժամանակը Դաւիթին արդարու-
թիւնն չառաջեցնեմ մը պիտի բուսցնեմ. և անիր-
կա երկրի վրայ իրաւունք ու արդարութիւն
16 պիտի բլլի։ Ա՛ն օրերը Յուդա պիտի ազատի,
ու Երուսաղէմ ապահովութեամբ պիտի բնա-
կի. և ասոր Տէրը անունը որով պիտի կոչուի,
17 Տէրը մեր արդարութիւնն է։ Վասն զի Տէրը
այսպէս կ'ըսէ. Դաւիթէն Իսրայէլի տանը
աթոռին վրայ նստող մարդ պակաս պիտի
18 չբլլայ. Ու Ղեւտացի քահանաներէն ող-
ջակէզ, հացի ընծայ ու զոհ մատուցանող
մարդ յաւիտեան պակաս պիտի չբլլայ իմ առ-
ջեւս։
19 Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եկաւ՝ ըսե-
20 լով. Տէրը այսպէս կ'ըսէ. Թէ որ ցորեկուան
ուխտս ու գիշերուան ուխտս կրնաք աւրել,
որ ցորեկը ու գիշերը իրենց ժամանակովը
21 չբլլան. Իմ ծառային Դաւիթին հետ ունե-
ցած ուխտս ալ պիտի աւրուի, որ իր աթոռին
վրայ թագաւորութիւն բնելու որդի չունենայ-
անանկ ալ ինծի ծառայութիւն բնող Ղեւտացի
22 քահանաներուն հետ։ Ինչպէս
որ Երկինքի զօրքերը չեն համրուիր ու ծովուն
աւազը չչափուիր, իմ ծառային Դաւիթին
սերունդը և ինծի ծառայութիւն բնող Ղե-
ւտացիներուն այնպէս պիտի չատցնեմ։
23 Եւ Տէրոջը խօսքը Երեմիայի եկաւ՝ ըսե-
24 լով. Չե՞ն տեսներ որ ասոնք ժողովուրդը ինչ կը
խօսի ու կ'ըսէ, Տէրը իր ընտրած երկու ազ-
գատոհմերը երեսէ ձգեց. ու անոնք իմ ժո-
ղովուրդս կ'անարգեն, մինչև զանիկա իրենց
25 առջեւը ազգ չտեսնելով։ Տէրը այսպէս կ'ըսէ.
Թէ որ ցերեկուան ու գիշերուան հետս ըրած
չնիմ, և երկինքին ու երկրիս կանոն-
26 ները չդրած չնիմ. Յակոբին ու իմ ծառային
Դաւիթին սերունդն ալ երեսէ պիտի ձգեմ,
որ ձէ չտրուի սերունդէն Աբրահամին,
Իսահակին ու Յակոբին սերունդին վրայ իշ-
խողներ չդնեմ. վասն զի դարձը անոնց գերու-
նը պիտի դարձընեմ ու անոնց պիտի ողոր-
միմ։

ԳԼ· ԼԴ

1 Երբոր կը նախատինի Սեդեկիան ու երուսաղէմի գերե-
լիները։ 8 Իշխանները ու ժողովուրդը իրենց ծառաները ար-
ձակելէն ետև՝ նորէն ետիս կը ստիպեն ծառաները կրկին
ազատելուն։ 12 Երեմիա Հրէից անհնազանդութեամբ համա-
կը մեղադրելուն իր անունը ու Սեդեկիա իրենց թշնամիներուն
ձեռքը պիտի մատնուի։

1 Երբոր Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագա-
ւորը իր բոլոր զօրքովը, ու իր իշխանու թիւնե-
ռակը եղող երկրին բոլոր թագաւորութիւն-
ներովը, և բոլոր ժողովուրդներով երուսա-
ղէմի վրայ ու անոր բոլոր քաղաքներուն վրայ
պատերազմ կ'ընէր, Տէրոջը կողմանէ Երե-
միային ատ խօսքը եղաւ՝ ըսելով,
2 Իսրայէլին Տէր Աստուածը այսպէս կ'ըսէ.
Գնա՝ Յուդայի Սեդեկիա թագաւորին խօսէ
ու անոր ըսէ. Տէրը այսպէս կ'ըսէ. Ահա ես
քաղաքը Բաբելոնի թագաւորին ձեռքը պիտի
3 տամ, ու զանիկա կրակով պիտի այրէ. Եւ
դուն անոր ձեռքէն պիտի չազատիս, հապա
անշուշտ պիտի բռնուիս ու անոր ձեռքը պի-
տի տրուիս. և քու աչքերդ Բաբելոնի թա-
գաւորին աչքերը պիտի տեսնեն, ու անոր
բերանը քու բերնիդ հետ պիտի խօսակցի, ու
4 Բաբելոն պիտի երթաս. Բայց Տէրոջը խօսքը
մտիկ ըրէ, ով Սեդեկիա Յուդայի թագաւոր.
Տէրը քեզի համար այսպէս կ'ըսէ. Դուն սրով
5 պիտի չմեռնիս. Դուն խաղաղութեամբ պիտի
մեռնիս. և ինչպէս որ հրեզմ առաջ եղող
քու հայրերուդ՝ առջի թագաւորներուն հա-
մար խունկ ծխեցին, Ընոյնպէս ալ քեզի հա-
մար պիտի ծխեն, ու վա՛յ, տէր իմ, բսելով
հրու վրայ պիտի ողբան, վասն զի ես խօսքը
6 ես խօսեցայ, կ'ըսէ Տէրը։
Ա՛ն Երեմիա մարգարէն ատ բոլոր խօսքերը
Յուդայի Սեդեկիա թագաւորին խօսեցաւ Երու-
7 սաղէմի մէջ. Եւ Բաբելոնի թագաւորին
զօրքը Երուսաղէմի ու Եամ ու Յուդայի





բոլոր քաղաքներուն դէմ՝ Լաքիսին ու Ազեկային դէմ պատերազմ կ՚ընէր. վասն զի Յուդայի քաղաքներէն պարսպաւոր քաղաքներ ասոնք մնացեր էին։

8 Տէրոջը կոչմանէ երեմիայուն եղած խօսքն է՝ երբոր Սեդեկիա թագաւորը երուսաղէմի մէջ եղող բոլոր ժողովուրդին հետ ուխտ բրաւ
9 որ ազատութիւն քարոզեն, Որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր աղախինը՝ Եբրայեցի մարդը ու Եբրայեցի կնիկը ազատ արձակէ, Ու ոչ մէյնիւ ալ մէկ մարդ մը իր
10 Հրեայ եղբայրը չծառայեցնէ. Ու հնազանդեցան բոլոր իշխանները ու բոլոր ժողովուրդը՝ որոնք այն ուխտին մէջ մտան, որ ամէն մարդ իր ծառան ու ամէն մարդ իր աղախինը ազատ արձակէ, և ալ զանոնք չծառայեցնէ. հնազանդեցան և զանոնք արձակեցին.
11 Բայց ետքէն նորէն դարձան, ու իրենց ազատ թող տուած ծառաները ու աղախինները նո՛ր դարձուցին, և զանոնք բռնագաւեցին որ ծառաներ ու աղախիններ ըլլան։
12 Ու Տէրոջը խօսքը երեմիայուն եղաւ Տէրոջմէն՝ ըսելով.
13 Այնպէս կ՚ըսէ Տէր Աստուածը Իսրայէլին Տէր Աստուածը. Ես ձեր հայրերուն հետ ուխտ բրի՝ գանոնք Եգիպտոսի երկրէն ծառայութեան տանէն հանած օրս, ու ըսի,
14 Իւրաքանչիւր եբրայեցի եղբայրը՝ որ քեզի ծախուած է, ու վեց տարի քեզի ծառայեր է, զանիկա քովէդ ազատ արձակես. բայց ձեր հայրերը ինծի մտիկ չբրին ու ականջնին չդրին։
15 Ձեր դուք այսօր դարձաք, ու ամէն մարդ իր ընկերին ազատութիւն քարոզելով՝ իմ առջեւս ուղիղ եղածը բրիք, և իմ անունիս ուխտ բրիք՝ տան մէջ՝ որուն վրայ իմ անունս կոչուած է. Բայց նորէն դարձաք ու իմ անունս պղծեցիք. ու ամէնքդ ալ ձեր ազատ արձակած՝ իրենց կամացը նորէն ծառաներ ու աղախիններ ընել դարձուցիք, ու զանոնք բռնագաւեցիք՝ որ ձեզի ծառաներ ու աղախիններ ըլլան։
17 Ասոր համար Տէրը այսպէս կ՚ըսէ. Դուք ինծի մտիկ չբրիք, որ Ցնծի ամէն մէկը իր եղբօրը համար ու ամէն մէկը իր ընկերին համար ազատութիւն քարոզէ. ահա ես ձեզի համար, կ՚ըսէ Տէրը, սուրին, ժանտախտին ու սովին ազատութիւն կը քարոզեմ՝ ու ձեզ երկրիս բոլոր թագաւորութիւններուն մէջ
18 Ղեզութեան պիտի մատնեմ։ Ես զարարակը երկու բի կտրելով ու անոր կտորներուն մէջէն անցնելով՝ իմ առջեւս ըրած ուխտերուն
նաեւ խօսքերը չկատարող, Ե՛ իմ ուխտս զանց
19 ընող մարդ իկը պիտի մատնեմ, Աւրհնեալ Յուդայի իշխանները ու Երուսաղէմին իշխանները, պարսատականներն ու քահանաները ու երկրին բոլոր ժողովուրդը՝ որոնք զոտակին
20 կտրնելուն միջէն անցան, Զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը պիտի մատնեմ, և անոնց դիները երկնից թռչուններուն ու երկրի գազաններուն կերակուր պիտի ըլլան։ Ես Յուդայի Սեդեկիա թագաւորը ու անոր իշխանները՝ իրենց թշնամիներուն ձեռքը ու իրենց հոգին փնտռողներուն ձեռքը և Քաղդէացւոց բանակին թագաւորին զօրքերուն ձեռքը պիտի մատնեմ։
22 Ահա ես հրամայեցնեմ, կ՚ըսէ Տէրը, ու զանոնք նո՛ր քաղաքը նորէն բերեմ, և անոր դէմ պատերազմ պիտի բնեն՝ ու զանիկա պիտի առնեն ու կրակով այրեն. և Յուդայի քաղաքները անբնակ ամայութեան պիտի դարձնեմ։

ԳԼՈՒԽ

1 Երեմիա Ռեքաբեանց հնազանդութիւնը յիշելով։ 12 կը գովաբանէ Հրէից անհնազանդութիւնը։ 18 Ետուսած կ՚ուխտէ նմին Ռեքաբեանները իրենց հնազանդութեանը համար։

1 Յուդայի թագաւորին Յովսիային որդւոյն Յովակիմին օրերը Տէրոջը կոզմանէ երեմիային
2 եղած խօսքն է, որ ըսաւ, Ելի՛ Ռեքաբեանց տունը գնա ու անոնց հետ խօսէ, և զանոնք Տէրոջը տունը մէկ ննջեղանակ մը տար, ու անոնց
3 գինի խմցուր։ Ես Փարատաբիտային որդւոյն երեմիայուն որդին Ցեզոնիան ու անոր եղբայրները և բոլոր որդիները ու Ռեքաբեանց բո-
4 լոր տունը առի. Ես զանոնք Տէրոջը տունը տարի Սեդոմայի որդւոյն Մաասիա Ղանանացիին մեծնեակին վրայ եղող իշխանները ան-նեակին քովի Աստուծոյ մարդուն Յեզդոպիայի
5 որդւոյն Ասնային որդւոյը մեծնեակը. Ու Ռեքաբեանց տանը որդւոյը առջեւը գինեով լեցուն ամաններ ու գաւաթներ դրի, և անոնց ըսի,
6 Գինի խմեցէք։ Ու անոնք ըսին, Գինի չենք խմեր. քանզի մեր հայրը՝ Ռեքաբի որդին Յովնադաբ մեզի պատուիրեց ու ըսաւ, Դուք
7 ու ձեր որդիքը յաւիտեան գինի չխմէք. Ես տուն չշինէք ու սերմ չցանէք և այդի չունենաք ու չտանաք, հապա ձեր բոլոր օրերը վրաններու մէջ բնակիք. Որպէս զի ձեր պանդխտեան եղած երկրին վրայ շատ օրեր ապրիք։
8 Ու մեր հօրը Ռեքաբի որդւոյն Յովնադաբին բոլոր մեզի հրամայածին պէս անոր խօսքը մտիկ բնելով՝ մեր բոլոր օրերուն մէջ՝ մենք,

---

ր դ Թագ. ժբ. 15։ ժթ. 8։ բՄՆ. ժա. 3։
ր Նէհ. խ. 3։ Գաղ. իե. 10։ Հմր. 14։
ր Գաղ. ժ. 11։
ր Գաղ. իե. 39–48։
ր Ձեռ հմր. 31։ Գէ. ի. 2։
ր Նէհ. խա. 2։ իգ. 10։ բ Օր. ժէ. 12։
ր դ Թագ. իգ. 2։
Գէնէմ. ժ. 23։
ր Գէ. է. 10։
ր Գէ. է. 9։ Գաղ. ժթ. 13։
ր Գաղ. իբ. 1։ ժթ. 13։
ր Գէ. իգ. 21։ 36։
ր բ Օր. իբ. 23–64։
Գէ. իթ. 15։
ր Ձեռ Ծն. ժէ. 30։ 17։
ր Գէ. ե. 33։ ժէ. 4։ ժթ. 7։
ր Ձեռ գէ. իե. 2։ 11։
ր Գէ. իե. 2։ 10։
ր դ Թագ. ժ. 33։ Գէ. իթ. 15։
ր Գէ. ի. 2։ 13։ ժբ. 7։ 13։
ր Գէ. ի. 11։ իգ. 4։
ր դ Թագ. ժբ. 3։ իե. 13։ ՄՆ. բ. 18։ 19։
ր դ Թագ. ժ. 33։
ր Նէհ. ի. 14։ Եփես. բ. 9։
ր Գէ. ի. 11։ իգ. 4։
ր Գէ. ի. 11։ իգ. 4։
ր Գէ. ի. 11։ իգ. 4

մեր կեսիկները, մեր ոտաքները ու մեր ոտ-
9 ֆիկները գիտե չունք խաղք. եւ բնակելու հա-
մար առանք չունք չիներ, ու այդի և ագա-
10 րակ ու անբաղ չունք առանար. Հայոց վրան-
ներու մէջ կը բնակիմք, ու հնազանդ ուիմուն
ընելով՝ մեր հօրը Յովնադաբին բոլոր մեզի
11 հրամայածը՝ ի գործ կը դնենք. Բայց երբոր
Նաբուքոդոնոսոր թագաւորը ասորեստանեաց
կերրը եկաւ, ըսինք, եկէք՝ Երուսաղէմ գոր-
ծին երթանք ու Ասորոց գործին երեսէն երա-
սանքէ երթանք. այսպէս երուսաղէմի մէջ
կը բնակինք.

12 Եւ Տէրոջը խօսքը երեմիայեան եղաւ՝ ըսելով,
13 Զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը այսպէս
կ'ըսէ. Գնա, Բուզային ծառոյդ ու Երուսաղէ-
մի բնակիչներուն ըսէ, Իմ խօսքերս մտիկ
ընելու համար չեք ընդունիր, կ'ըսէ
14 Տէրը. Ուստի որդւոյն Յովնադաբին իր
որդւոյդ գիտէ չխզելու համար պատուիրած
խօսքերը հաստատ պահեցան. վասն զի ի-
րենց հօրը հրամանին հնազանդ ուիմուն ընելով՝
մինչև աս օրս չին խմեր. Բայց ձէ՛ և ես ձեզի
խօսեցայ՝ կանուխ կելլելով ու խօսելով, սա-
15 կայն ինծի մտիկ չըրիք. Եւ իմ բոլոր ծառա-
ներս մարգարէները ձեզի խրկեցի՝ կանուխ
կելլելով ու խրկելով, ու ըսի, Ամէն մարդ իր
չար ճամբայէն դառնայ, և բարի գործերը
ըրէք, ու ուրար աստուածներու ետեւէ մի եր-
թաք՝ որ անոնց ծառայութիւն ընէք, որպէս
զի ձեզի ու ձեր հայրերուն տուած երկրիս
մէջը բնակիք. բայց ձեր ականջը չդներիք ու
16 ինծի մտիկ չըրիք. Եւ Յովնադաբին որդւոյն
Յովնադաբին որդիքը՝ իրենց հօրը պատուի-
րած հրամանը հաստատ պահեցին, բայց սա
17 ժողովուրդը ինծի մտիկ չըրաւ. Ասոր համար
զօրաց Տէր Աստուածը՝ Իսրայէլին Աստուածը
այսպէս կ'ըսէ. Ահա ես Բուզային՝ ու Երու-
սաղէմի բոլոր բնակիչներուն վրայ պիտի բե-
րեմ՝ ան բոլոր չարիքը՝ որ անոնց համար խո-
սեր էի, վասն զի անոնց խօսեցայ, բայց մտիկ
չըրին, ու անոնց կանչեցի, բայց պատասխան
չտուին.

18 Ու երեմիա Ռեքաբեանց տանը ըսաւ, Զօ-
րաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը այսպէս կ'ը-
սէ. Որովհետեւ ձեր հօրը Յովնադաբին պա-
տուէրը մտիկ ըրիք, ու անոր բոլոր հրամանն-
ները պահեցիք, և ձեզի ամէն պատուիրածին
19 պէս ըրիք, Ասոր համար զօրաց Տէրը՝ Իսրա-
յէլին Աստուածը այսպէս կ'ըսէ. Ռեքաբեան
Յովնադաբին մէջը իմ առջեւս կայնող մարդ
պակաս պիտի չըլլայ.

ԳԼ. ԼԶ

1 Ա. եղաւ որ Յուդայի թագաւորին Յովսիա-
յի որդւոյն Յովակիմին չորրորդ տարին Տէրոջը
կողմանէ այս խօսքը եղաւ երեմիայի՝ ըսելով,
2 Քեզի՝ ինկ գիրքի առնելիր ու ա՛ռ, ու ՚անոր
վրայ գրէ այն բոլոր խօսքերը՝ որ քեզի հետ
խօսեցայ Իսրայէլի և Յուդայի վրայով ու բոլոր
այն օրէն խօսեցայ Իսրայէլի վրայով ու Յուդայի վրա-
յով և ՚բոլոր ազգերուն վրայով խօսեցայ ի
3 ՚կարելի է որ Յուդայի տունը լսէ այն բոլոր
չարիքը՝ որ ես կը մտածեմ անոնց ընելու, որ-
պէսզի դարձի մարդ իր չար ճամբայէն դա-
նայ, և ես անոնց անօրէնութիւնը ու մեղքը
ներեմ.

4 Ու երեմիա ՚Նէրիայի որդին Բարուքը կան-
չեց. և ՚Բարուք երեմիայէն բերնէն Տէրոջը
անոր բոլոր խօսքերը՝ որ գիրքի առ-
5 ին գրեց. Ու երեմիա Բարուքին պա-
տուիրեց ու ըսաւ, Ես — չեմ արգիլուած
6 եմ, Տէրոջը տունը երթալու կարող չեմ. Ու-
րի դուն երթա, ու ՚ծոմապահութեան օրը
Տէրոջը տունը մէջ ժողովուրդին ականջներուն
իմ բերնէս գրած առնիկ Տէրոջը խօսքերը
կարդա, ու նաեւ իրենց քաղաքներէն ելող
բոլոր Յուդայի ականջներուն զանոնք կար-
7 դա. ՚գուցէ ՚Տէրոջը առջեւը խնդալով ազօթք
բնեն, և ամէն մարդ իր չար ճամբայէն դա-
նայ. քանզի մեծ է այն բարկութիւնը ու սրբա-
ցումութիւնը որ Տէրը աս ժողովուրդին համար
8 խօսեցաւ. Ու Նէրիայի որդին Բարուք երե-
միա մարգարէին բոլոր իրեն հրամայածին պէս
ըրաւ, և այն գիրքին Տէրոջը խօսքերը կար-
դաց Տէրոջը տունը մէջ.

9 Ու եղաւ որ Յուդայի թագաւորին Յովսի-
այի որդւոյն Յովակիմին հինգերորդ տարին՝
իննսերորդ ամիսը բոլոր Երուսաղէմի ժողո-
վուրդին, ու Յուդայի քաղաքներէն Երուսա-
ղէմ եկող բոլոր ժողովուրդին՝ Տէրոջը առջեւը
10 ծոմապահութիւն քարոզուեցին. Եւ Բարուք
Սափան գպիրին որդւոյն Գամարիայեին տնէն
կը Տէրոջը տունը ՚նոր գրաւը մտնելուր՝ վերի
գաւիթին մէջ բոլոր ժողովուրդին ականջնե-
րուն այն գիրքէն երեմիային խօսքերը կար-
դաց.

11 Եւ Սափանի որդւոյն Գամարիայեին որդին

Միքիա երբոր դիրքին Եհեզքիա բոլոր խօսքե-
12 րը լսեց, թագաւորին առնեը զգիրին անհնա-
կը իջաւ. և ամէն բոլոր իշխանութիւնքը եղեսա-
ւիա զգիրը, ու Անմոյիայի որդին Դազոյիա,
ու Աքթորի որդին Եղնաթան, և Յաւիանի
որդին Գաւնդրիա, ու Ասեռեայի որդին Ա-
զեկիա, և բոլոր իշխանութիւնքը Հայն նասեր էին։
13 Ո՞ Միքիա անոնց պատմեց ամէն բոլոր խօս-
քերը որ լսեր էր՝ երբոր Բարուք ժողովուր-
դին ականջներուն ամէն գիրքին կը կարդար։
14 Եւ բոլոր իշխանութիւնքը Բաւսիի որդւոյն Սելե-
միայի որդւոյն Նաթանիայիին որդին Յուդիին
Բարուքին խրկեցին՝ ըսելով, Ժողովուրդին
ականջներուն կարդացած առնդ Ձեռքդ առ
ու հոս եկուր. ուստի Ներիայի որդին Բարուք
15 առնդր Ձեռքը առաւ ու անոնց գնաց։ Եւ
անոնք ըսին անոր, Կ՚ապաշխնէ՞ նասկ ու մեր
ականջներուն — կարդա զանիկա։ Եւ Բարուք
16 անոնց ականջներուն կարդաց։ Ու երբոր ամ-
բոլոր խօսքերը լսեցին՝ վախով իրարու կը նա-
յեին. ու Բարուքին ըսին, Անշուշտ առ բո-
լոր խօսքերը Թագաւորին պիտի պատմենք։
17 Եւ Բարուքին հարցուցին ու ըսին, Շնորհք
ըրէ՝ պատմէ մեզի Ի՞նչ ինչպէս գրեցիր առ
18 խօսքերը անոր բերնէն։ Եւ Բարուք անոնց
ըսաւ, Ան խօսքերուն ամէնը անիկա ինձի
բերնով արտասանեց, ու ես գանոնք մելանով
19 առ գրքին մէջ գրեցի։ Ա՞նասնոր իշխանները
Բարուքին ըսին, Գնա պահուըռ՝ Ի՞ դուն
և Ի՞ երեմիան, և ոչ ըլլայնդ մարդ չը-
գիտնայ։
20 Ո՞ անոնք պահը Թագաւորին մնան, բայց
առնդր եզիսաման գիրքին անհնակին մէջ պա-
հեր էին. և առ բոլոր խօսքերը Թագաւորին
21 ականջներուն պատմեցին։ Եւ Թագաւորը խրը-
կեց Յուդին որ առ առնդր առնէ. ու զանի-
կա եզիսաման գիրքին անհնակէն առաւ. և
Յուդի զանիկա Թագաւորին ականջներուն ու
Թագաւորին քովը կացնող բոլոր իշխանութեան
22 ականջներուն կարդաց։ Եւ ինհնըրդ ամիսը
ըլլալով Թագաւորը Ձմեռնատունը մէջ նստած
23 էր, ու առջեը վառած կրակարան կար։ Ո՞
երբոր Յուդի երեք կամ չորս էրես կարդաց,
զանիկա դանէրնով կտրեց ու կրակարանի կրա-
կին մէջ նետեց, մինչև որ բոլոր առնդր կրակա-
24 րանի կրակին մէջը հատաւ։ Եւ Թագաւորը ու
անոր բոլոր ծառաները՝ որոնք առ բոլոր խօս-
քերը կը լսէին, չվախցան, ոչ ալ Ի՞հանդերձ
25 նին պատռեցին. թէպէտև Եղնաթան, Դա-
զոյիա ու Գաւնդրիա Թագաւորին ազաչեցին
որ առնդր չայրէ, բայց անոնց մտիկ չըրաւ։
26 Եւ Թագաւորը՝ Թագաւորի որդւոյն Յերա-
մեէլին ու Եզրիելի որդւոյն Սարայիային ու
Աբդիելի որդւոյն Սելեմիային հրամայեց, որ
բարուք գրիչը ու երեմիա մարգարէն բռնե-
նեն. բայց Տէրը զանոնք պահեց։
27 Ե՞ Թագաւորը առ առնդր ու երեմիայի
բերնէն Բարուքին գրած խօսքերը այրելէն
ետքը՝ Տէրոջը խօսքը եղաւ երեմիային՝ ըսե-
28 լով, Նորէն դուն, քեզի ուրիշ առնդ մը
առ, ու անոր վրայ գրէ առ բոլոր առջի խօս-
քերը՝ որ Յուդայի Յոսիկիմ Թագաւորին ա-
29 րած առջի առնդրն Յեհոյակիմ Թագաւորին ա-
յրեց. Ե՞ Յուդայի Յոսիկիմ Թագաւորին ըսէ.
Տէրը այսպէս կ՚ըսէ. Դուն առ առնդր այրեցիր, ըսելով Թէ
Ինչո՞ւ համար անոր վրայ գրեցիր Թէ Բաբի-
լոնի Թագաւորը անպատճառ պիտի գայ, ու
առ երկիրը պիտի ապրէ, և անկէ մարդը ու
անասունը պիտի վերցնէ։
30 Ա՞նոր համար Տէրը Յուդայի Յոսիկիմ Թա-
գաւորին վրայով այսպէս կ՚ըսէ. Ի՞նկիա Դա-
ւիթի աթոռին վրայ նստող մարդ պիտի չու-
նենայ. և անոր մեռելը ցորկին ատեն մէջ՝
31 ու գիշերը ցուրտին մէջ պիտի ձգուի։ Ե՞ ան-
անոր և անոնց սերունդը ու անոր ծառաներուն հայ-
ցելու Թէ՝ պիտի բնեմ իրենց անօրէնութիւնը
համար. և անոնց վրայ ու Երուսաղէմի բնակ-
չոցը վրայ ու Յուդայի մարդոց վրայ պիտի
բերեմ՝ առ ամէն չարիքը որ Ո՞անոնց խօսեցայ,
և անոնք մտիկ չըրին։
32 Ո՞ երեմիա մէկ ուրիշ առնդր մը առաւ, ու
զանիկա Ներիայի որդւոյն Բարուք գրիչին
առաւ. և անոր անոր վրայ երեմիային բեր-
նէն՝ Յուդայի Յոսիկիմ Թագաւորին կրակով
այրած գիրքին բոլոր խօսքերը գրեց. ու ա-
նոնց վրայ անոնց պէս ուրիշ շատ խօսքեր
աւելցաւ։

ԳԼ. ԼԱ.

1 Ե՞ Յոսիայի որդին Սեդեկիա Թագաւորը
Յոսիկիմի որդւոյն Ք՚ոնիայի տեղը Թա-
գաւորեց, որն որ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր
Թագաւորը Յուդայ վրայ Թագաւոր դրաւ։
2 Բայց անիկա ու անոր ծառաները ու երկրին
ժողովուրդը Տէրոջը երեմիա մարգարէին Ձեռ-
քովը խօսած խօսքերը մտիկ չըրին։
3 Ո՞ Սեդեկիա Թագաւորը Սելեմիային որդին
Յուքաղը ու Մաասիային որդին Սոփոնիա
քահանան երեմիա մարգարէին խրկեց՝ ըսե-
լով, Ձնորհք ըրէ՝ մեզի համար մեր Տէրը Ա-
4 ստուծոյն աղօթք ըրէ։ Ա՞ն ժամանակը երեմիա

ե Տիս. Ա՞մաս. գ. 13. | ի Գլ. իբ. 20. | ա. Կամ անոնց համար
ի գ Թագ. իբ. 11. | Գլ. իբ. 19. | —
Նա. լէ. 33. լճ. 1. | Գլ. իգ. 24. |

ա գ Թագ. իգ. 17. | իբ. 24. Նա. | ֆ Գլ. իա. 1. 3. իմ.
բ Մն. լէ. 19. Գլ. | բ Մն. լէ. 13. 14. | 33. ծբ. 44.

ժողովուրդին մէջ կը մնանէք կ'ելլէք · ու զանի-
5 կա ուխտին բանալը գրած չէին · Ու եղիպտացին
ւփարաւոնին գործը կ'ըլլար · ու երուսաղէմի
պաշարող զօրագնացներէն երբոր անոնց լուրը
լսեցին , երուսաղէմին վրայէն քաշուեցան ·
6 Ու Տէրոջը խօսքը երեմիա մարգարէին ե-
7 գաւ՝ ըսելով , Իսրայէլին Տէր Աստուածը այս-
պէս կ'ըսէ · Ինծի հարցնելու համար չէնք
ինծի խրկող Յուդային թագաւորին այսպէս
ըսէք · Ահա ձեզի օգնութեան համար ելլող
փարաւոնի զօրքը իր երկիրը կը դիմաց պիտի
8 գառնայ · Ու՝ Քաղդէացիք պիտի գառնան և
աս քաղաքին դէմ պատերազմ պիտի ընեն ,
ու զանիկա պիտի առնեն և զանիկա կրակով
9 այրեն · Տէրը այսպէս կ'ըսէ · Մի խաբէք ձեր
անձերնիդ՝ ըսելով թէ Քաղդէացիք անշուշտ
մեզմէ պիտի երթան , վասն զի պիտի չերթան ·
10 Ւթանզի թէև ձեզի հետ պատերազմ ընող
Քաղդէացւոց բոլոր զօրքը զարնէք , ու անոնց-
մէ հոն մէկ մարդ վիրաւորուած մնայ թէ մի-
նակներ , անոնց ամէն մէկը իր վրանէն ելլելով՝
աս քաղաքը կրակով պիտի այրեն ·
11 ՅՈւ երբոր Քաղդէացւոց զօրքը փարաւոնի
զօրքին պատճառաւ երուսաղէմէ վրայէն
12 քաշուեցան , երեմիա երուսաղէմէն ելաւ որ
բնիկներուն երկիրը երթայ , ու անկէ ժո-
13 ղովուրդին մէջը չ՚ բաժինը առնէ · Ու երբոր
անիկա բնիկներուն դուռնը էր , հոն Ջնանէիայի
որդւոյն Սկեզիիայի որդին՝ Երիա անունով
ոստիկան մը կար · և անիկա երեմիա մար-
գարէն բռնեց ու ըսաւ , Դուն Քաղդէացւոց
14 կողմը կ'անցնիս · Ու երեմիա ըսաւ , Սուտ է ,
ես Քաղդէացւոց կողմը չեմ անցներ · բայց անի-
կա անոր մտիկ չըրաւ · ու Երիա բռնեց ե-
րեմիան ու զանիկա իշխաններուն տարաւ ·
15 Եւ իշխանները երեմիայէն զարհուրցան ու զա-
նիկա ծեծեցին ւև բանտարկեցին Յոնաթանին
գրիչին տանը մէջ · վասն զի անոնք բանտ
բրեր էին ·
16 Երբոր երեմիա ւբանտը ու խուցերուն մէջ
17 ըր մնաւ , ու հոն շատ տևեն նստաւ , Սեդե-
կիա թագաւորը հրեշ խրկեց՝ զանիկա առաւ ,
և թագաւորը իր տանը մէջ գաղտուկ անոր
հարցուց ու ըսաւ , Արդեօք Տէրոջմէ մէկ
խօսք մը կայ · Ու երեմիա ըսաւ , կայ · Նաև
ըսաւ , Դուն բաբելոնի թագաւորին ձեռքը
18 պիտի տրուիս · Ու երեմիա ըսաւ Սեդեկիա
թագաւորին , Քեզի կամ ծառաներուդ կամ
աս ժողովուրդին գէմ ի՞նչ մեղք գործեցի որ
19 դուս բանտը գրիք · Եւ ա՞ր են ձեր մարգա-
բէներդ՝ որ ձեզի մարգարէութիւն ըրին ու
ըսին , Բաբելոնի թագաւորը ձեր վրայ ու աս
20 երկրին վրայ պիտի չգայ · Եւ հիմա կ'ազա-
չեմ՝ ով ուր իմ թագաւոր , մեզի ըրէ՛ թագ
իմ ազաչանքս ընդունելի ըլլայ ·
ու զիս Յոնաթանին գրչին տանը չտիրայ ·
21 խրկեր , որ հոն չմեռնիմ · Եւ Սեդեկիա թա-
գաւորը հրամայեց , ու երեմիան բանտին
գաւիթը դրին · ու ամէն օր հացագործնե-
րուն փողոցէն մէկ կտոր հաց կու տային
անոր , մինչև որ քաղաքին հացը բոլորովին
հատաւ · ու երեմիա բանտին գաւիթին մէջ
կը նստէր ·

ԳԼ · ԼՐ

1 Երեմիա մէկ ուրիշ բարբառով մը Մեզրիային գրածը կը
ցուցնէ · 2 Ընդհանրապէս ազատութիւն կը տան ,
նոյ անոր համար · 11 Երեմիա գերութենէն քեզ-
լով թագաւորին հետ կը յարգուի զանիկա որ հնազանդի քաղ-
դեացւոց · ու էր հետզ ապառն · 14 Թագաւորին պատուե-
րին համաձայն իշխանները կը պահեն երեմիա զրան
խուցերուներէն ·

1 Եւ Ասոմանէն որդին Սափատիա ու Փա-
շուրի որդին Գեդոդիա և Սեդեկիային որդին
ՀԱմարիա ու Մեզրիային որդին ւՓաշուր ու Երե-
միային բոլոր ժողովրդեան հետ խօսած խօս-
2 քերը լսեցին , որ բաւ , Տէրը այսպէս կ'ըսէ ·
ՀԱն քաղաքիս մէջ կնստի արով , սովով ու
մահաբերով պիտի մեռնի · իսկ քաղդէա-
ցւոց ելլողը ոչ պիտի մեռի , և անոր կեանքը
իրեն աւարի մը պէս պիտի ըլլայ ու պիտի
3 ապրի · Տէրը այսպէս կ'ըսէ · ՅԱն քաղաքը
անպատճառ Բաբելոնի թագաւորին զօրքին
ձեռքը պիտի տրուի , ու զանիկա պիտի առ-
4 նէ · Եւ իշխաններէն թագաւորին բուին , Կ'ա-
զաչենք՝ Հիոդ աս մարդը մեռցուի , քանի որ
աս քաղաքիս մէջ մնացած պատերազմական
մարդոց ձեռքերը ու բոլոր ժողովրդին
ձեռքերը կը թուլցնէ՝ անոնց ասանկ խօսքեր
խօսելով · վասն զի աս մարդը աս ժողովուր-
դին խաղաղութիւնը չփնտռեր , հապա անոր
5 չարիքը · Եւ Սեդեկիա թագաւորը ըսաւ ,
Ահա անիկա ձեր ձեռքն է , որովհետև թա-
գաւորը ձեր գործը կարողութիւն մը չունի ·
6 ՅՈւ երեմիան առին , և զանիկա թագաւորին
որդւոյն Մեզրիային գաւթը նետեցին , որ բան-
տին գաւիթին մէջ էր , ու երեմիան չուան-
ներով իջեցուցին · և ան գաւթին մէջ ջուր
չկար , հապա մինակ տիղմ · ու երեմիա տիղ-
մին մէջը կ'ընկղմէր ·
7 ւԵւ՝ Քաղդէացւոց տանէր Հզոզ Եբեդմելէքին
Նեբրիներէն Արդեմելէք լսեց որ երեմիան գաւթը
ձգեցին · ու թագաւորը Բնիամինի դուռը կը
8 նստէր · Եւ Արդեմելէք թագաւորին տանէն
9 ելաւ , ու թագաւորին խօսեցաւ ու ըսաւ , Ով
տէր իմ թագաւոր , աս մարդիկը գէշ ըրին՝
ամէն ինչ որ երեմիա մարգարէին ըրին՝ զա-

ւ Տէր · ը Քաղ · խդ · ։ ։ Գէ · խո · ։ ։ ։ Գէ · ըզ · ։ ։ ։ Գէ · ը · ։ ։ ։ Գէ · ը · ։ ։ ։ Գէ · ը

Նիկա գաւրք Նաեղիմ. քանզի քաղաքս մէջ
ալ հաց չմնաւ երկրին՝ անիկա իր ան-
10 դր անօթամնէին ոպետի ժողովրդեան։ Եւ քա-
գաւորը եբհոմպայի Աբդ Եմելեքին հրամայեց
ու ըսաւ, Ասկէ քեզի հետ երեսուն մարդ
առ, ու երեմիա մարգարէն գուբէն հանէ՝
11 քանի որ մեռած չէ։ Եւ Աբդ Եմելեք իր հե-
տը առաւ մարդիկը, ու քագաւորին առանը
չուխնայուներն տակը գնաց, և անկէ պատառած
լաթեր ու հին լաթեր առաւ, և պաճուճ չոր-
12 ւաներով գուբը երեմիայի իջեցուց։ Եւ Ե-
բհոմպայի Աբդ Եմելեքը երեմիային ըսաւ,
Այս պատառած ու հին լաթերը թևերուդ տակը
չուխնայուրնէն տակէն գիր։ Ու երեմիա այնպէս
13 ըրաւ։ Եւ երեմիան չուխնայուրով քաշեցին,
և գուբէն գուբը հանեցին։ Ու երե-
միա Բաղտոն գաւիթին մէջ նստաւ։
14 Եւ Սեդեկիա քագաւորը հաղ խրկեց՝ ու
երեմիա մարգարէն իր քովը առաւ Տէրոջը
առանը եղող երրորդ մուտքը. և քագաւորը
երեմիային ըսաւ, Քեզի մի բան մը պիտի
15 հարցնեմ, ինծի բան մի պահեր։ Եւ երե-
միա ըսաւ Սեդեկիային, Թէ որ քեզի պատ-
միմ, չէ՞ որ դիս անշուշտ պիտի մեռցնես.
և թէ որ քեզի խրատ տամ, ինծի մտիկ պիտի
16 չընես։ Բայց Սեդեկիա քագաւորը երեմիա-
յին գաղտուկ երդում ըրաւ ու ըսաւ, Կեն-
դի աս հոգին առնդծող Տէրը կենդանի է՝ որ
քեզ պիտի չմեռցնեմ, և քեզ պիտի չմատ-
նեմ աս մարդոց ձեռքը՝ որոնք քու հոգիդ
17 կը փնտռեն։ Եւ երեմիա Սեդեկիային
ըսաւ, Զօրաց Տէր Աստուածը՝ Իսրայէլին Ա-
ստուածը այսպէս կ'ըսէ. Թէ որ Բաբիլոնի քա-
գաւորին իշխաններուն կելլես, քու հոգիդ
ազդ պիտի ապրի, և աս քաղաքը կրակով պի-
տի չայրի. Հապա դուն ու քու տունդ ազդ
18 պիտի ապրիք. Բայց թէ որ Բաբիլոնի քագա-
ւորին իշխաններուն չելլես, անաստուններ աս
քաղաքը գաղդէացւոց ձեռքը պիտի տրուի,
ու զանոնք կրակով պիտի այրեն. և դուն
19 անոնց ձեռքէն պիտի չազատիս։ Ու Սեդե-
կիա քագաւորը երեմիային ըսաւ, Գաղդէա-
ցւոց կողմը անցած Հրէաներէն կը վախնամ.
չըլլայ որ զիս անոնց ձեռքը տան, ու ինծի
20 հետ անարգանօք վարուին։ Ու երեմիա ըսաւ,
Պիտի չտան. կ'ազաչեմ՝ Տէրոջը խօսքը մտիկ
ըրէ որ քեզի պիտի բանամ, որպէս զի քեզի
21 ազէկ բլլայ ու քու անձդ ապրի։ Բայց թէ
որ երկար չուզես, Տէրոջը ինծի ցուցուցած
22 բանը աս է. Ահա Յուդայի քագաւորին տուն-
ը ձեռացած բոլոր կիներուն քաղդէացւոց
իշխաններուն պիտի տարուին. ու ան
ընդհարձ պիտի բանին, քու բարեկամներդ քեզ

Հրապուրեցին ու քեզ յաղթեցին. ոտքերդ
սիղմի մէջ ընկղմելուն պէս՝ անոնք ետ քա-
23 շուեցան։ Եւ բոլոր կիներդ ու տղաք-
ներդ գաղդէացիներուն պիտի հանուին. դուն
ալ անոնց ձեռքէն պիտի չազատիս, հապա
բաբիլոնի քագաւորին ձեռքովը պիտի բռը-
նուիս. և դուն պատճառ պիտի բլլաս որ
24 աս քաղաքը կրակով այրի։ Ու Սեդեկիա
ըսաւ երեմիային, Ան խօսքերը մարդ մի չի-
25 մանայ, ու դուն պիտի չմեռնիս։ Եւ թէ որ
իշխանները քեզի հետ խօսիլս լսեն ու քեզի
գան ու քեզի ըսեն, Հիմա քագաւորին հետ
ի՞նչ խօսեցար՝ մեզի պատմէ. մեզմէ մի պա-
հեր, ու քեզ չմեռցնենք. և քագաւո-
26 րը քեզի հետ ի՞նչ խօսեցաւ. Անոնց ա-
նոնց ըսես, Ինծ քագաւորին առջևը ազա-
չանք ըրի, որ զիս Յովնաթանին տունը դա
27 յնարկէ, որ հոն մեռնիմ։ Եւ բոլոր իշխաննե-
րը երեմիային եկան ու անոր հարցուցին. և
անոնց պատմեց ան ամէն խօսքերուն համե-
մատ՝ որ քագաւորը պատուիրեր էր. ու ա-
նոր խօսակցին դադրեցան. վասն զի բանը
28 չլսուեցաւ։ Ու Երեմիա բանտին գաւի-
թին մէջ կը նստէր՝ մինչև երուսաղէմին առ-
նուած օրը. ու երբոր երուսաղէմ առնուե-
ցաւ՝ անիկա հոն էր։

ԳԼՈՒԽ ԼԹ

1 Երուսաղէմ կ'առնեն։ 4 Սեդեկիային աչքերը կը հանեն։ ու Բաբիլոն կը տանին։ 8 Քաղաքը կը կործանի։ 9 մնացուրդը գերի կը տարուի։ 11 Նաբուզարադան պատուիրէ որ երեմիային ազէկ խնամք ընեն։ 15 Եբեդ Եմելեքին խոստանալով ընդհանրապէս։

1 Յուդայի Սեդեկիա քագաւորին իններ-
որդ տարին տասներորդ ամսուն՝ Բաբիլոնի Նաբու-
գոդոնոսոր քագաւորը իր բոլոր զօրքովը ե-
2 րուսաղէմի դէմ, ու զանիկա պաշարեցին։ Սե-
դեկիային մեհտասներորդ տարին չորրորդ
ամսուն՝ տասնուն ինների քաղաքին գետը հեղ-
3 րուեցաւ. և Բաբիլոնի քագաւորին բոլոր
իշխաններն՝ այսինքն Ներգեղասարասար, Սա-
մեզարնեբու, Սարսեքիմ Ներքիսնապետ,
Ներգեղասարասար մոգպետը, ու Բաբիլոնի
քագաւորին բոլոր մնացած իշխաններն եկան
միջին դուռը նստան։

4 Որ երբոր Յուդայի Սեդեկիա քագաւորը
ու բոլոր պատերազմական մարդիկը զանոնք
տեսան՝ փախան ու քաղաքէն գիշերով քա-
գաւորի պարտէզին ճամբայովը երկու պարիս-
պին միջի դուռէն ելան. ու ինքը գաւառի
5 ճամբան ելաւ. Եւ քաղդէացւոց զօրքը անոնց
հետևէն ինկան, ու երիքովի գաւառներուն մէջ
Սեդեկիային հասան և զանիկա բռնեցին, ու

• Կամ՝ արդէն կը մեռ-
նի։
ր Տես՝ ԽԴ։ 3։
ս Տես՝ ԽԶ։ 21։
տ Ես՝ ԽԶ։ 16։
ւ Տես՝ ԼԲ։ 3։
փ Թագ։ Խգ։ 13։
ք Տես՝ ԼԲ։ 4։ ԼԳ։ 3։
Հմմ։ 23։
օ Թագ։ Լ։ 4։
ֆ Տես՝ ԼԲ։ 3։
ա Թագ։ Խ։ 10։
բ Հմմ։ 13։
գ Նշէր։ ասս քաղաքը
կրակով պիտի այ-
րեն։
դ Տես՝ ԼԲ։ 4։ խոս։ 10։
ե Հմմ։ 13։
զ Տես՝ ԼԲ։ 30։
է Տես՝ ԼԶ։ 11։ ԼԹ։ 14։
— Թագ։ Խե։ 1—4։
թ Տես՝ ԽԲ։ 4—7։
ժ Թագ։ Խե։ 4։
ի Տես՝ ԼԲ։ 17։
լ Կամ՝ Սարսեքիմ։ Նե-
րգեղասարասար։
խ Թագ։ Խե։ 4։
ծ Տես՝ ԼԲ։ 4։ ԼԳ։ 23։
կ Տես՝ ԼԲ։ 3։
հ Թագ։ Խե։ 7։ Եզ։
ձ Տես՝ ԼԲ։ 4։ ԼԳ։ 23։

լեռնէն երկիրը Բերզայի մէջ՝ Բարխլիայի նա-
6 տուզոզանոցը իագաւորին առջեւ հանելցին,
որ անոր գաւառաւանը աւեր։ Եւ Բարխլիայի
իագաւորը Բերզայի մէջ՝ Սէզ եկեղեցին ազա-
րը անոր աչքերուն առջեւը մորթեց. ու Բա-
րխլիայի իագաւորը Բուզայի բոլոր ազնուա-
7 կաններն ալ մորթեց։ Եւ Սէզ եկեղեցին աչքերը
կուբացուց, ու գաղթական չղմանելով կապեց
8 որ Բարխլիան տանի։ Եւ Քազդէացիք Կրակով
այրեցին իագաւորին տունը ու ժողովուրդին
տաղերը, ու երուսաղէմին պարիսպներն փըլ-
9 ցուցին։ Եւ Նաւուզարզան գաւազարը
քաղաքին մէջ մնացած ժողովուրդին մնացոր-
դը, ու իրեն ինկած փախստականներն, և ժո-
ղովուրդին ուրիշ մնացորդներն Բարխլիան գերի
10 տարաւ։ Ու Նաւուզարզան գաւազարը Բու-
զայի երկրին մէջ իագաւոց ժողովուրդին ազ-
քատաներէն՝ որոնք բան մը չունէին. և նոյն
օրը անոնց այգիներ ու արտեր տուաւ։

11 Ու Բարխլիայի Նաւուզոզանոցը իագաւորը
երեմիային համար Նաւուզարզան գաւազարին
12 ետին պատուիրեց ու ըսաւ. Զանիկա առ և
աչքդ անոր վրայ բլլայ, ու անոր ամենևին
չարիք մի հատցըներ, հապա ինչ որ քեզի լսէ՝
13 անոր այնպէս ըրէ։ Եւ Նաւուզարզան գաւա-
զարը ու Նաւուսազարեան նէրգէլնեռգլոռը
ու Նէրգէզարասար մեզպետը և Բարխլիայի
իագաւորին բոլոր նախարարները հղտ խրկե-
14 ցին, Ու երեմիան իրանները գաւխիէն առին
ու զանիկա Սափանի որդւոյն Աքիկամի որ-
գւոյն Գոզոզիայեցի առին, որ զանիկա տուներ
առանի։ ու անիկա ժողովուրդին մէջը բնակե-
ցաւ։

15 Եւ Տէրոջը խօսքը եղաւ երեմիային, երբոր
անիկա բանտին գաւխիէն մէջը արդիլուած
16 էր, ըսելով, Գնա Եբեդմելեքին
խօսէ ու ըսէ, Զօրաւոր Տէրը՝ Իսրայէլին Ա-
ստուածը այսպէս կ'ըսէ. Ահա ես սա քաղաքիս
վրայով չարութիւն պիտի գործեմ
չարիքի և չէ թէ բարիքի համար. ու անոր օրը
17 քու առջեւդ պիտի կատարուին։ Եւ
անոր օրը քեզ պիտի ազատեմ, կ'ըսէ Տէրը, ու
պիտի չտրուիս անոնց ձեռքը՝ որոնց երե-
18 սէն դուն կը վախնաս։ Վասն զի քեզ անշուշտ
պիտի ազատեմ, ու սրով պիտի չիյնաս. և
քու կեանքդ քեզի աւարի մը պէս պիտի բլ-
լայ, քանզի հնձիդ ապաւինեցար, կ'ըսէ Տէրը։

ԳԼ. Խ

1 Ան խօսքը որ Տէրոջը կողմանէ երեմիային
եղաւ, Նաւուզարզան գաւազարը զանիկա
Ռամայէն արձակելէն ետքը. (երբոր Բարխ-
լիան տարուազ էրուսաղէմի ու Բուզայի բոլոր
գերիները մէջ զանիկա չղմանելով կա-
պած առեր էր։)

2 Եւ գաւազարը երեմիան առնելով՝ անոր
ըսաւ, Քու Տէր Աստուածդ սա տեղս այս վրայ
3 սա չարիքը խօսած է. Ու Տէրը ընդ-
ու բերաւ
ու իր խօսքին պէս բրաւ, քանզի Տէրոջը
դէմ մեզք գործեցիք և անոր ձայնին մնիկ
4 չըրիք. ու սա բանը ձեզի եղաւ. Եւ հիմա
ահա այսօր քու ձեռքերուդ չղմաններէդ քա-
կեցի. հիմ որ ինծի հնար Բարխլիան երթալը
քու աչքիդ առջեւը ազեկ է՝ եկուր, ու իմ աչ-
քերս քու վրադ պիտի բլլայ. բայց թէ որ ինծի
հնար Բարխլիան երթալը քու աչքիդ դէշ կ'ե-
րեւնայ՝ դանդ ըրէ. ահա բոլոր երկիրը քու
առջեւդ է, ուր որ քեզի ազեկ ու հաճոյ կ'ե-
5 րեւնայ երթալու՝ հոն դնա։ Իսաւ ետ Բար-
խլիան իագաւորին՝ Գեդոզոնեսորին
վրայ դրած Սափանի որդւոյն Աքիկամին որ-
դին Գոզոզիայեցի որ՝ այն Աքիկամին որ-
դին Գոզոզիան դնա ետ չդարձած՝ անոր դնա
ու անոր հետ ժողովուրդին մէջը բնակէ. և
կամ ուր որ քեզի ազեկ կ'երեւնայ երթալու՝ հոն
դնա. ու դաւազարը անոր պաշարներ ու
6 պարգեւ տուաւ և զանիկա արձակեց։ Ու Բե-
րեմիա Մատփա գնաց Աքիկամի որդւոյն Գո-
զոզիայեցին, և անոր հետ՝ երկրին մէջ մնա-
ցած ժողովուրդին մէջտեղը բնակեցաւ։

7 Ու գաշար եղող բոլոր զօրավարները՝ ի-
րենք ու իրենց մարդիկը երբոր լսեցին իմ
Բարխլիայի իագաւորը Աքիկամի որդին Գոզո-
զիան երկրին վրայ դրած եղաւ, և Բարխլիան չբրաւած
մարդիկը ու կիներն ալ և տղաքներն ու Երը-
8 կրին ազքատներէն անոր չտարածներէն,
Մատփա եկան Գոզոզիային. այսինքն Նաթանիայի որ-
դին Իսմայէլ, ու կարէհի որդիքը՝ Յոհանան
ու Յոնաթան, և Թանհումեթի որդին Սա-
րայիա, ու Նետոփաթացի Եփային որդիքը ու
Մաքաթիի որդին Յեզոնիա՝ իրենք և իրենց
9 իրենց մարդիկը։ Եւ Սափանի որդւոյն Աքի-
կամին որդին Գոզոզիա անոնց ու անոնց մար-
դոցը երդում բրաւ ու ըսաւ, Քաղդէացւոց
ծառայութիւն ընելէն մի վախնաք. ապա եր-
կրին մէջ բնակեցէք և Բարխլիայի իագաւորին
ծառայութիւն բրէք, ու ձեզի ազեկ պիտի
10 բլլայ։ Եւ ես ահա Մատփայի մէջ կը բնակիմ,
որ մեզի եկող Քաղդէացիներուն առջեւը կե-
նամ. ու գուք գինի և ամառնային պտուղ
ու եղ ժողվեցէք, ու ձեր անոթներուն մէջը
դրէք, և ձեր քաղաքներուդ տակը եղած քաղաք-

---

1 Երեմիա Նաւուզարզանէն ազատ իագ արձակուիլ՝ Գոզոզիային
քովը կ'երթայ։ 2 Յաւուած Հրեաներէն ոչ անոր քովը կը մնայ,
այլ ին։ 13 Յոհանան իսմայելին գաւանութիւնը կը յայտ-
նէ։ բայց Գոզոզիա անոր չհաւատար։

ի. Գ Թագ. իգ. 33։
ա. Նգէկ. ծբ. 12։ Բազ. ԳԼ. 16։ Հես։
բ. Գ Թագ. իե. 9։ Գէ. լբ. 18։ ծբ. 13։
գ. Հիւ. 10։ 11։ Հես։ Տիս Ծան. լե. 36։
դ. Գ Թագ. իե. 9։ Գէ. լբ. 18։ ծբ. 13։
ե. Գ Թագ. իե. 11։ Հես։ Գէ. ծբ. 12։
զ. Գէ. իգ. 11։
է. Գէ. իե. 1։
ը. Գէ. լբ. 7. 12։
թ. Դատ. իբ. 12։
ժ. Գ Թագ. իե. 22։ Հես։
ի. Գէ. լբ. 10։
ժա. Գէ. իգ. 11։
ժբ. 40։
—
ժգ. Գէ. լբ. 14։
ժդ. Գէ. ծ. 7։
ժե. Օբ. իբ. 34. 35։
Դատ. իբ. 11։
ժզ. Գէ. լբ. 12։
ժէ. Ծան. ե. 13։
ժը. Գ Թագ. իե. 22։ Հես։
ժթ. Գէ. լբ. 14։
ի. Դատ. ե. 1։
ի ա. Գ Թագ. իե. 23։ Հես։
ի բ. Գէ. լբ. 10։
ի գ. Գէ. իե. 1։

11 Ներան մէջ բնակեցէք ։ Ու Մոաբի մէջ և Ամմոնի որդւոցը մէջ ու Եդոմի մէջ և ամէն երկիրներու մէջ եղող Հրէաստանի մէջ ձեացարդ խոստացեր է, ու անոնց վրայ Մափանի որդւոյն Աքիկամին որդի Գոզոպիան
12 գրեր է, Բոլոր Հրէաները ամէն իրենց գըրուած տեղերէն գարձան, ու Յուդայի երկիրը՝ Մասիա Գոզոպիային եկան, և խիստ չատ գինի ու ամառնային պտուղներ ժողվեցին ։
13 Ե՛ կարէի որդի Յովհանան ու գաղար և զոզ բոլոր զօրավարները Մասիա եկան Գո-
14 գոպիային ։ Ու անոր ըսին ։ Գիտե՞ս որ Ամմոնի որդւոցը Բաալիս Նաթանիա-
մի որդին խոստկէր խրկեց քեզ մեռցնելու Համար ։ բայց Աքիկամի որդի Գոզոպիա ա-
15 նոնց չհաւատաց ։ Ե՛ կարէի որդի Յովհանան Մասիայի մէջ Գոզոպիային հետ գաղտուկ խօսեցաւ ու ըսաւ ։ Հիմա երթամ ու Նաթանիայի որդին խոստկէր գարնեմ, ու մարդ չիմանայ ։ ինչո՞ւ անոկա քեզ մեռցնէ, ու քովդ ժողված բոլոր Հրէաները ցրուին, և
16 Յուդայի մնացորդը կորսուի ։ Ու Աքիկամի որդի Գոզոպիա կարէի որդւոյն Յովհանանին ըսաւ ։ Ատ բանը մի ըներ ։ վասն զի դուն Իսմայէլին վրայով սուտ կը խօսիս ։

ԳԼ ։ ԽԱ.

1 Խոստկէր Նէթոփաթեան Գոզոպիան և ուրիշները պատմելով կը խօսի մնացորդին հետ Իսմայէլին երկիրը երթալ ։ 11 Յովհանան գերիները կ՚ազատ ու փոքը կ՚երթայ որ Եգիպտոս փախչի ։

1 Ու եղաւ որ եօթներորդ ամսուն մէջ Թագաւորական սերունդէն եղող Եղիսամային որդւոյն ՝Նաթանիային որդի Իսմայէլ Թագաւորին նախատրաններովը ու իր հետը տասը մարդով Մասիա եկաւ Աքիկամին որդւոյն Գոզոպիային ։ ու հոն ալ կերան
2 Մասիայի մէջ ։ Ե՛ Նաթանիային որդի Իսմայէլ ու իր հետը եղող տասը մարդը ելան ։ և Սափանի որդւոյն Աքիկամին որդի ՝Գոզոպիան սրով զարկին, ու մեռցուցին զանիկա՝ որն որ Բաբիլոնի Թագաւորը երկրին վրայ
3 դրեր էր ։ Նաև Գոզոպիային հետ Մասիայի մէջ եղող բոլոր Հրէաները և հոն գտնուած քաջ էացի պատերազմականները Իսմայէլ կոտրեց ։
4 Ու եղաւ որ Գոզոպիան մեռցնելէն հետը՝
5 հետեւեալ օրը գէռ մարդ չիմացած ։ Սիւքէմէն ։ Սիլովէն ու Սամարիայէն ՝ութսուն հոգի ածխած և հանգ երձեին պատառած ու իրենց մարմինները վրայ կտրածներ բրած ուխտուն մարդ
6 կան ։ և անոնց ձեռքը բնծաներ ու ննդրեակ կար՝ ՝Տէրոջը տունը տանելու Համար ։ Ե՛ Նաթանիային որդի Իսմայէլն եկաւ գանոնք գիմաւորելու ։ անիկա գացած ատեն լալով կ՚երթար ։ ու երբոր անոնց Հասաւ՝ անոնց ըսաւ ։ Աքիկամի որդւոյն Գոզոպիային
7 եկէք ։ Ու եղաւ որ երբ անոնք քաղաքին մէջտեղը եկան ։ Նաթանիային որդի Իսմայէլ զանոնք մորդ ոչնով գանոնք մեռցուց ։
8 յուց ։ փոսին մէջը Տասը ։ Ե՛ անոնց մէջը տասը մարդ գտան եղաւ որ Իսմայէլին ըսին, Մեզ մի մեռցներ, վասն զի մենք գաշտը գըրենք, գարիւ, եղի ու մեղրի ժամակ չունինք ։ ուստի անիկա զանոնց բրաւ, և գանոնք իրենց եղբայրներուն մէջ չմեռցուց ։
9 Ու ան փոսը՝ որուն մէջ Իսմայէլ Գոզոպիային ՝պատճառաւ բոլոր մեռցուցած մարդոց դիները դնեաց, Նոյնն էր ՝որ Ասա Թագաւորը չիներ էր՝ Իսրայէլի Բաասա Թագաւորին երեսէն չխնամելու Համար ։ Նաթանիային որդի Իսմայէլ զանիկա մեռցիներով լեցուց ։
10 Ե՛ Իսմայէլ Մասիայի մէջ եղող ժողովուրդը գերի բոլոր միացորդը գերի բրաւ՝ Հիմայեան աղջիկները ու Մասիայի մէջ միացած բոլոր ժողովուրդը, որոնց վրայ ՝Նաբուգոդոնոսոր գօշճապետը Աքիկամի որդի Գոզոպիան վիճակացու գրեր էր ։ և Նաթանիային որդի Իսմայէլ զանոնք գերի առնելով՝ գնաց ՝Ամմոնի որդւոցը անցնելու ։
11 Ե՛ կարէի որդի Յովհանան ու անոր հետ եղող ՝բոլոր զօրավարները՝ երբոր Նաթանիային որդւոյն Իսմայէլին բրած բոլոր չարութիւնը
12 լսեցին ։ Իրենց բոլոր մարդիկը առին ։ ու Նաթանիային որդւոյն Իսմայէլին հետ պատերազմելու գացին ։ և գանիկա ՝գտան մեծ չատ
13 Ջուրերուն քովը գտան ։ Ու Իսմայէլին հետ եղող բոլոր ժողովուրդը՝ երբոր կարէի որդի Յովհանանը ու անոր հետ եղող բոլոր զօրավարները տեսան՝
14 մարնեցր առան՝ ու բախտացան ։ Ե՛ Իսմայէլին Մասիայէն գերի քշած բոլոր ժողովուրդը երեսին գարձուցին, ու հոս գառնալով՝ կա-
15 րէի որդւոյն Յովհանանին գացին ։ Բայց Նաթանիային որդի Իսմայէլ ութը մարդով Յովհանանին երեսէն վխտաւ, ու Աամոնի որդւոյն գնաց ։
16 Ե՛ կարէի որդի Յովհանան ու անոր հետ եղող բոլոր զօրավարները՝ Նաթանիային որդի Իսմայէլէն հետ բերած ժողովուրդին բոլոր միացորդը Մասիայէն առին՝ Աքիկամի որդւոյն Գոզոպիային մեռցուելէն հետը, այսինքն զաբաւանէն հետ բերած պատերազմող կօրիճներ, ու կիներն ու տղաքներ ու ներքինի-
17 ները ։ Ու գացին բնակեցան քովը եղող

---

1 Տէր ։ խոս ։ 12 ։ | Գէ ։ խ ։ 8 ։ | բ Օբ ։ ժգ ։ 1 ։ Եսա ։ ժէ ։ 1 ։
2 գ Թագ ։ խե ։ 25 ։ | դ Ղե ։ ԺՀ ։ 27 ։ 35 ։ | 3 ՝՝Թագ ։ ա ։ 7 ։
4 Տէր գէ ։ խա ։ 12 ։ | Գէ ։ խ ։ 8 ։ | բ Մն ։ ժգ ։ 6 ։
5 Նոյ հետը | 2 Գէ ։ խգ ։ 6 ։ | 3 Գէ ։ խ ։ 7 ։ 8 ։ 12 ։
4 գ Թագ ։ ժէ ։ 22 ։ | 4 Գէ ։ խ ։ 7 ։ | 5 Գէ ։ խ ։ 12 ։
6 գ Թագ ։ խե ։ 25 ։ | 5 Գէ ։ խ ։ 12 ։

ւգառնալոյ պատիժ ոչինչ մնալոյ նոցա, որ երթան
18 ետ իսրայել տունն Յուդայ երեսաց, գոլոց
գի ես առաքեցի զնոսա. քանզի նախանձոյին
որդիք իսրայելի զբարիսեցիսն իմացաւ արիւն
բիւր վրայ գոյր Աբիկամի որդւոյ Գոզոզեան
մեռցուցեր էր։

ԳԼ· ԽԸ

1 Բահանայ կը խնդրէ երեմիայէն, որ Տէրոջ հարցնէ, ու կը
խոստանայ իր պիտի հնազանդի անոր կամքը։ 7 Երեմիա
կ'իմացնէ անոր որ երկրի հետ ուխտած մէջ Յուն. ապահով
պիտի ըլլան։ 12 իսկ իր որ երկրացոց երթան. պիտի կոր.
ուին։ 19 կը յանդիմանէ անոնց կեղծաւորութիւնը, որ Տէ.
րոջը բան կը հարցընեն ու ճիշդ չունին կատարելու։

1 Եւ բոլոր զօրավարներըն ու կարէն որդին
Յոհանանայ և Յովնէլայն որդին Եհոնիա ու բո-
լոր ժողովուրդն ազգոխէն մինչև մեծ մատ-
2 ցան ։ Ու երեմիա մարգարէին ըսին, Մեր խընդ-
դիրքը քու առջեդ ընդունելի ըլլայ ։ ու
Աստուծոյ համար՝ այսինքն ամբոլոր ժողովրդեան-
բուն համար քու Տէր Աստուծոյդ ազօթք
բրէ ։ վասն զի Հշատնէն քիչ մնացինք ։ ինչպէս
3 որ աչքերդ մեզ կը տեսանին ։ Ու քու Տէր Ա-
ստուածդ Աստը երթալու ճամբան ու մեր բնա-
4 յութիւնը իմացընէ ։ Ու երեմիա մարգ-
գարէն անոնց ըսաւ ։ լսեցի. ահա Տէր
Աստուծոյն ազօթք կ'ընեմ ձեր խօսքերուն
համեմատ, և Հտէրը ձեզի համար ինչ պա-
տասխան որ տայու բլլայ՝ ձեզի կ'իմացընեմ.
5 չձեզմէ բան մը չեմ պահեր ։ Ու անոնք երե-
միայէն ըսին ։ Հտէրը մեր մէջը ճշմարիտ ու
հաւատարիմ վկայ բլլայ՝ թէ որ չընենք ան
ամէն բաներուն համեմատ՝ որոնց համար քու
6 Տէր Աստուածդ քեզ մեզի պիտի խրկէ ։ թէ
բարի և թէ չար՝ մեր Տէր Աստուծոյն ձայնին
պիտի հնազանդինք ։ որուն որ քեզ կը խրկենք,
որպէս զի մեր Տէր Աստուծոյն ձայնին հնա-
զանդելով՝ մեզի ազէկ բլլայ ։
7 Եւ աւասր օրէն եղաւ Տէրոջը խօսքը եղաւ
8 երեմիայի ։ Ու կարէն որդին Յոհանանայ և
անոր հետ եղող բոլոր զօրավարները ու պըզ-
տիկէն մինչև մեծ՝ բոլոր ժողովուրդը կան-
9 չեց ։ Ու անոնց ըսաւ ։ Իսրայէլին Տէր Ա-
ստուածը՝ որուն որ զուք զիս խրկեցիք ձեր
ազաչանքը անոր առջեւը հասուցանելու համար ։ որպէս
10 կ'ըսէ ։ Թէ որ չարաչահիք ասս երկրիս մէջ բը-
նակելու ։ Հես ալ ձեզ պիտի չքանդեմ ու պիտի
չփըցընեմ՝ և ձեզ պիտի անկնեմ ու պիտի չը-
խլեմ ։ վասն զի Հձեզի բրած չարիքիս վրայով
11 պղծացի ։ Մի վախնաք Բաբիլոնի թագաւորին
երեսէն՝ ուսկից որ կը վախնաք ։ անկէ մի վախ-
նաք ։ կ'ըսէ Տէրը ։ Հմեզի ձեզ անոր ձեռ-
քէն ազատելու համար ու ձեզ ապրեցընելու
12 համար՝ ես ձեզի հետ եմ՝ Ու Հձեզի ողոր-
միութիւններ Հտալ պիտի տամ՝ և անիկա ձե-
զի պիտի ողորմի ։ ու ձեզ ձեր երկիրը դար-
13 ձընէ ։ Բայց թէ որ Հըսկ ։ Ա՛ս երկրիս
մէջ չենք բնակիր ։ ու ձեր Տէր Աստուծոյն
14 խօսքը մտիկ չընելով՝ Հսկ ։ Չէ ։ հապա
եգիպտացոց երկիրը մտնենք ։ որ հոն պատե-
րազմ պիտի չտեսնենք ու փողի ձայն պիտի
չլսենք ։ և հացի համար սովամբ պիտի չմը-
15 նանք ։ ու հոն պիտի բնակինք ։ Ուրեմն հի-
մա Տէրոջը խօսքը մտիկ ըրէք ։ ով Յուդայի
մնացորդը ։ Զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուա-
ծը այսպէս կ'ըսէ ։ Հթէ որ զուք Հձեր երես-
ները շիտկէք եգիպտոս մտնելու ։ ու հոն
16 պանդխտանալու երթաք ։ Աստուն որ սուրը՝
Հսովից որ կը վախնաք ։ հոն եգիպտացոց
երկրին մէջ ձեր վրայ պիտի գայ ։ և ան սովը՝
ուսկից որ գուք կը զարհուրիք ։ հոն եգիպ-
տացոց երկրին մէջ ձեր ետեւէն պիտի պա-
17 շարէ ։ ու հոն պիտի մեռնիք ։ Ես ան ամէն
մարդիկը՝ որոնք իրենց երեսները կը շիտկեն
եգիպտոս երթալու՝ հոն պանդխտանալու հա-
մար ։ նայեա՛ սովով ու ժանտախտով պիտի
մեռնին ։ ու վրայ անոնց վրայ բերելու չարի-
քիս երեսէն անոնցմէ ոչ ոք պիտի ազատուի
պիտի չմնայ ։
18 Վասն զի զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուա-
ծը այսպէս կ'ըսէ ։ Ինչպէս որ իմ բարկութիւնս
ու սրտմտութիւնս Հերուսաղէմի բնակչացը
վրայ թափեցաւ ։ այնպէս ձեր վրայ պիտի
թափի իմ սրտմտութիւնս ։ երբոր եգիպտոս
մտնէք ։ և Հանէծքի ։ զարհուրանքի ։ նզովքի ու
նախատինքի Եռնչոյ պիտի բլլաք ։ ու միւրձին
19 ալ ասս տեսոց պիտի չտեսնէք ։ Ով Յուդայի
մնացորդներըն ։ Տէրը ձեզի համար՝ Հեգիպտոս
մի մտնէք՝ բսաւ ։ ----ն ազէկ գիտցէք որ
20 այսօր ձեզի վկայ կ'ընեմ՝ Հվասն զի
գուք ձեր հոգւոյն գէմ նենգաբար բրիք ։
երբոր դուս ձեր Տէր Աստուծոյն խրկեցիք՝
բսելով ։ Հմեզի համար մեր Տէր Աստուծոյն
ազօթք բրէ ։ ու մեր Տէր Աստուծոյն ամէն
բանէ որ մեզի պատմէ ։ ու պիտի բնենք ։
21 Ես ալ այսօր ձեզի պատմեցի ։ ու դուք մը-
տիկ չրրիք ձեր Տէր Աստուծոյն ձայնէ ։ ու
ան ամէն Հետերջ որուն համար դուս ձեզի խրբ-
22 կեց ։ Ես հիմա ազէկ գիտցէք որ Հզուք որ-
բոյ ։ սովով ու ժանտախտով պիտի մեռնիք
ան տեղը՝ ուր որ կ'ուզէք երթալ հոն պան-
դխտանալու համար ։

---

1 բ Յեռ· ԺԹ· 37· 38։ 2 Գէ· Խ· 1։ — 3 Գէ· Խ· 3· 12· Խա· 11։ 4 ա՛ՅՈ· Ե· 3· ԺԸ· 19· Նա· յէ· 4։ 5 Ա՛Ո· 4· 16։ 6 Գ՛Ա· Խգ· 21։ 7 Բէր· բ· 21։ 8 Յեր· բ· 21։ 9 ա՛ՅՈ· Իր· 14։ Գէ՛ր· Ե· 19։ 10 Ե՛ր· բ· 30։ 11 բ Օր· գ· 3։ Գէ· Ե· 25։ 12 Գէ· Խգ· 6· ԼՐ· 23· ԼԳ· 7։ 13 բ Օր· բբ· 36։ Գէ· ԺԸ· 3։ 14 Նա· Խգ· 1։ Հբ· ա՛ՄՈ· բ· 21։ 15 Ա՛Ո· 24· 46։ 16 Գէ· Խգ· 18։ 17 բ Օր· ԺԸ· 16։ Գէ· Խգ· 13· 15· 18։ 18 Դ՛ա· Խ· 21։ Հբ· Ա՛Ո· 4· 16։ 19 Գէ· Խգ· 19։ Հմ· 22։ 20 Տ՛ա· գէ· Խգ· 14· 23։ 21 Գէ· Ե· 23։ 22 Գէ· Ժբ· 12· Խգ· 8· ԽԲ· 28։ 23 Խգ· 13· Յա· բ· 23։ 24 բ Օր· ԺԸ· 16։ 25 Հմ· 3։ 26 Հմ· 17· Եզեկ· գ· 11։ —

Գլ. ԽԹ

1 Բան զոր եղեւ առ Երեմիա ի Տեառնէ՝ եւ ասէ՝
2 Ա՛ռ քեզ գրքոյր մի, եւ գրեա՛ ի նմա զամենայն բանս զոր խօսեցայ ընդ քեզ վասն Իսրայէլի եւ վասն Յուդայ, եւ վասն ամենայն հեթանոսաց, յաւուրց որ խօսեցայ ընդ քեզ ի սկզբանէ թագաւորութեան Յովսիայ մինչեւ ցայսօր ամ։
3 Գուցէ լուիցեն տունք Յուդայ զամենայն չարիս զոր ես խորհիմ առնել նոցա, եւ դարձցին իւրաքանչիւր ոք ի ճանապարհէ իւրմէ չարէ, եւ թողցէ ես զանօրէնութիւնս նոցա եւ զմեղս նոցա։
4 Կոչեաց Երեմիա զՎարուք որդի Նարիայ, եւ գրեաց Վարուք ի գրքոյր զամենայն բանս Տեառն զոր խօսեցաւ ընդ Երեմիա։
5 Եւ պատուիրեաց Երեմիա Վարուքայ՝ եւ ասէ՝ Ես արգելեալ եմ, եւ ոչ կարեմ մտանել ի տունն Տեառն։
6 Դու մտեր՝ եւ կարդասցես ի գրքոյրն զոր գրեցեր ի բերանոյ իմոյ զբանս Տեառն յականջս ժողովրդեանն ի տանն Տեառն յաւուր պահոց, եւ զամենայն ժողովուրդն Յուդայ որ գան ի քաղաքաց իւրեանց կարդասցես զնոսա։
7 Գուցէ անկցի աղաչանք նոցա առաջի Տեառն, եւ դարձցին իւրաքանչիւր ոք ի ճանապարհէ իւրմէ չարէ, զի մեծ է բարկութիւն եւ սրտմտութիւն զոր խօսեցաւ Տէր ընդ ազգիս զայս։
8 Եւ արար Վարուք որդի Նարիայ համաձայն ամենայնի զոր պատուիրեաց նմա Երեմիա մարգարէ, կարդալ ի գրքոյրն զբանս Տեառն յականջս ժողովրդեանն ի տանն Տեառն։
9 Եւ եղեւ յամի հինգերորդի Յովակիմայ որդւոյ Յովսիայ թագաւորի Յուդայ, ամսեանն իններորդի, քարոզեցին ամենայն ժողովուրդ Երուսաղէմի եւ ամենայն ժողովուրդ որ գան ի քաղաքաց Յուդայ յԵրուսաղէմ առաջի Տեառն պահս։
10 Եւ կարդաց Վարուք ի գրքոյրն զբանս Երեմիայ յականջս ամենայն ժողովրդեանն ի տանն Տեառն ի սենեակի Գամարիայ գրագրի որդւոյ Սափանայ ի սրահին վերնում ի դրան նորոգ տանն Տեառն յականջս ամենայն ժողովրդեանն։
11 Եւ լուաւ Միքիա որդի Գամարիայ որդւոյ Սափանայ զամենայն բանս Տեառն ի գրքոյրն,
12 եւ իջեալ ի տունն արքունի ի սենեակ գրագրին՝ եւ ահա անդ էին ամենայն իշխանքն եւ Եղիսամա գրագիր եւ Դայիա որդի Սեմէայի եւ Եղնաթան որդի Աքբովրայ եւ Գամարիա որդի Սափանայ եւ Սեդեկիա որդի Անանեայ եւ ամենայն իշխանքն։
13 Եւ պատմեաց Միքիա զամենայն զոր լուաւ ի կարդալ Վարուքայ յականջս ժողովրդեանն ի գրքոյրն։
14 Եւ ամենայն իշխանքն առաքեցին առ Յուդի որդի Նաթանեայ որդւոյ Սեդեկիայ որդւոյ Քուսեայ առ Վարուք՝ եւ ասեն՝ Զգրքոյրն զոր կարդացեր յականջս ժողովրդեանն՝ առ զայն ի ձեռանէ քումմէ եւ եկ։ Եւ առեալ Վարուք որդի Նարիայ զգրքոյրն եկն առ նոսա։
15 Եւ ասեն ցնա՝ Նո՛ստ եղիր եւ կարդա՛ զայն յականջս մեր։ Եւ կարդաց Վարուք յականջս նոցա։
16 Եւ եղեւ իբրեւ լուան զամենայն բանս նոցա՝ երկեան ամենեքին ի միմեանց, եւ ասեն ցՎարուք՝ Ի մահ մեռցի՛ս դու եւ ամենայն ազգ քո, զի պատմելով պատմեցեր զբանս ի գրքոյրն յականջս ժողովրդեանն։
17 Եւ հարցին զՎարուք՝ եւ ասեն՝ Պատմեա՛ մեզ զի՞նչ կարդացեր յականջս ժողովրդեանն ի գրքոյրն։
18 Եւ ասէ ցնոսա Վարուք՝ Ի բերանոյ իմոյ կարդայր զամենայն բանս զայսոսիկ, եւ ես գրէի ի գրքոյրն զբանս Տեառն։
19 Եւ ասեն իշխանքն ցՎարուք՝ Գնա՛ եւ թագնեցո՛ զանձն քո դու եւ Երեմիա, եւ մի՛ ոք գիտասցէ զտեղի ուր իցէք։
20 Եւ մտեալ առ արքայն ի սրահն՝ եւ գրքոյրն ի սենեակի Եղիսամա գրագրի մնաց։ Եւ պատմեցին ականջս արքային զամենայն բանս։
21 Եւ առաքեաց արքայ զՅուդի առնել զգրքոյրն։ Եւ առեալ Յուդի ի սենեակէ Եղիսամա գրագրի՝ կարդաց յականջս արքային եւ յականջս ամենայն իշխանացն որ կային առ արքայ։
22 Եւ արքայ նստէր ի տան ձմերոցի ամսեանն իններորդի, եւ հուր ի հնոցի առաջի նորա վառեալ էր։
23 Եւ եղեւ իբրեւ կարդաց Յուդի երիս կամ չորս սեւեակս՝ կտրեաց զնոսա դանակաւ գրագրին, եւ արկանէր ի հուրն որ ի հնոցին, մինչեւ եղծաւ ամենայն գրքոյրն ի հրոյն որ ի հնոցին։
24 Եւ ոչ երկեան, եւ ոչ պատառեցին զհանդերձս իւրեանց ամենեքին եւ ոչ ամենայն ծառայքն որ լուան զամենայն բանս զայսոսիկ։
25 Եւ Եղնաթան եւ Դայիա եւ Գամարիա աղաչէին զարքայ զի մի՛ այրեսցէ զգրքոյրն, եւ ոչ լուաւ նոցա։
26 Եւ պատուիրեաց արքայ զԵրաքմեէլ որդի արքային եւ զՍարայիա որդի Ազրիելի եւ զՍեղեմիա որդի Աբդեելի առնել զՎարուք գրագիր եւ զՅերեմիա մարգարէ, եւ թագուցին զնոսա Տէր։
27 Եւ եղեւ բան Տեառն առ Երեմիա՝ յետ այրելոյ արքային զգրքոյրն եւ զբանս զոր գրեաց Վարուք ի բերանոյ Երեմիայ՝ եւ ասէ՝
28 Դարձեալ առ զքեզ գրքոյր մի, եւ գրեա՛ ի նմա զամենայն բանս առաջինս զոր էին ի գրքոյրն զոր այրեաց Յովակիմ արքայ Յուդայ։
29 Եւ զՅովակիմ արքայ Յուդայ ասասցես՝ Այսպէս ասէ Տէր՝ Դու այրեցեր զգրքոյրն զայն՝ եւ ասացեր՝ Ընդէ՞ր գրեցեր ի նմա՝ եւ ասացեր՝ Արդարեւ գալով եկեսցէ արքայ Բաբելացւոց եւ աւերեսցէ զերկիրս զայս, եւ ապականեսցէ ի նմանէ զմարդ եւ զանասուն։
30 Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր վասն Յովակիմայ արքայի Յուդայ՝ Ոչ եղիցի նմա որ նստցի ի գահոյ Դաւթի, եւ դիակունք նորա արձակեալք եղիցին ի տապարի ցերեկի եւ ի սառնամանեաց գիշերի։
31 Եւ հատուցից ի վերայ նորա եւ ի վերայ զաւակի նորա եւ ի վերայ ծառայից նորա զանօրէնութիւնս նոցա, եւ բերից ի վերայ նոցա եւ ի վերայ բնակչաց Երուսաղէմի եւ ի վերայ այրուց Յուդայ զամենայն չարիս զոր խօսեցայ ընդ նոսա, եւ ոչ լուան։
32 Եւ առեալ Երեմիա զայլ գրքոյր՝ եւ տուեալ Վարուք գրագրի որդւոյ Նարիայ՝ եւ գրեաց ի նմա ի բերանոյ Երեմիայ զամենայն բանս գրքոյրն զոր այրեաց Յովակիմ արքայ Յուդայ ի հրոյ, եւ յաւելան ի նոսա բանք բազումք որպէս նախ։

Գլ. ԽԹ

1 Երեմիա կը նկարագրէ Բաբելի առեւտրական իրենց կապուտաճախութեան համար։ 11 Եգիպտոսի մէջ կապուտաճախութեան միջոցը գործածելուն կը նմանցնէ, 12 Հրէից կռապաշտութիւնը, 22 որուն համար Երեմիա ապառնիով կ՚ըսէ անոնց, 23 եւ ան ապառնիներէն կատարեալ Հոմն Եգիպտոսի կործանումը կը գրէ։

1 Եգիպտոսի երկրին մէջ բնակող բոլոր Հրէաներուն համար, այսինքն՝ Մագդոլ, Տափնաս, Մեմփիս եւ Պաթրոսի երկրին մէջ բնակողներուն համար երեմիային եղած խօսքն է, որ բաւ ,
2 Զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը այսպէս կ՚ըսէ. Դուք տեսաք ան ամէն չարիքը որ եղաւ զիրենք վրայ ու բոլոր Յուդայի քաղաքներուն վրայ տեսէք. և ահա անոնք այսօր ամայութիւն են, ու անոնց մէջը բնակող չկայ,
3 Իրենց արարքներուն համար զորս գործեցին՝ զիրենք բարկացնելու համար, երթալով ծխելու եւ ուրիշ աստուածներու պաշտաւնեալ ըլլալու, որոնք ոչ իրենք ճանչցեր էին՝ ոչ դուք ոչ ալ ձեր հայրերը։
4 Եւ խրկեցի իմ բոլոր ծառաներս մարգարէները՝ կանուխ ելլելով ու խրկելով, և ըսի, Ա՛ռ պիղծ գործդ ինձ ընէք, որ ես կ՚ատեմ։
5 Բայց ան ոչ լսեցին ու ականջնին չդնեցին՝ որ իրենց չարութիւններէն դառնան, և ուրիշ աստուածներու խունկ չծխեն։ Ուստի իմ սրտմտութիւնս ու բարկութիւնս թափեցաւ, և Յուդայի քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն մէջ բորբոքեցաւ. ու անոնք ասոր օրուան նման աւերակ ու անապատ եղան։
7 Հիմայ եղան։ Եւ հիմա զօրաց Տէր Աստուածը այսպէս կ՚ըսէ. Ինչո՞ւ համար դուք ձեր հոգւոյն դէմ ասանկ մեծ չարութիւնը կը գործէք, որ Յուդայի մէջէն երկիւղ ու կիսիկը, ազգն ու կաթնակը մնանուկը կտրուին ըլլաք, այնպէս որ ձեզի մնաց։
8 ցորդ մը չմնայ. Ձեր ձեռացը գործերովը զիս սրդոդցընելով, և ուրիշ աստուածներու խունկ ծխելով Եգիպտոսի երկրին մէջ, ուր որ դուք մնաք հոն պատրաստելու համար, որպէս զի ձեր անձը կտրուընցընէք, ու երկրին բոլոր ազգերուն մէջը անէծք ու նախատինք

= Գլ. խբ. 1։
ե Գլ. խ. 11. 12։
զ Գլ. խա. 10։
է Գլ. չխ. 10. խ. 7։
ը Գլ. ր. 16. խդ. 1. Ժ՝ի Ես. ե՝ չոր։
թ Գլ. խդ. 13. խէ. 13։
ժ Գլ. խե. 9. խզ. 6. Տիտ. Եզեկ. խի. 13. 20։
ի Գլ. խդ. 13. խէ. 13։
ձ Գլ. ժե. 9. Ջոզ. ժ՝. 9։
ղ Գլ. խէ. 25։

= Եզ. ժգ. 9. Գլ. խգ. 14։
ե Գլ. ժի. 4։
զ Ր Օր. ժգ. 9. ը. 17։
է Ր Թագ. ւգ. 11. Գլ. ե. 11. զխ. 4. խգ. 19։
ը Գլ. խբ. 18։
թ Գլ. խե. 6. 7։
ժ Գլ. խբ. 18. Հռ. 15։

9 ըլլաք · Միթէ Յուդայի երկրին մէջ ու եւ
բուասպետի փողոցներուն մէջ ձեր հայրերուն
ըրած չարութիւնները, և Յուդայի թագա-
ւորներուն չարութիւնները, ու անոնց կնիկ-
ներուն չարութիւնները, և ձեր չարութիւն-
ները, ու ձեր կնիկներուն չարութիւնները
10 մոռցա՞ք · Անոնք մինչև այս օրս իրենց անձերը
չխոնարհեցուցին ու չվախցան, և ձեր առջևը
ու ձեր հայրերուն առջևը դրած օրէնքիս ու
11 պատուիրաններուս մէջ չքալեցին · Անոր
համար զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը
այսպէս կ՚ըսէ · Ահա ես դէմ կը հաստա-
տեմ իմ երեսս չարիքի համար, ու բոլոր Յու-
12 դան կորսնցնելու համար · Եւ պիտի առնեմ
Յուդայի մնացորդը՝ որոնք երեսնին հաստա-
տեցին եգիպտոսի երկիրը մտնելու՝ հոն պան-
դխտանալու համար · ու անոնք եգիպտոսի
երկրին մէջ պիտի հատնին · սրով, սովով պի-
տի իյնան — հատնին · պզտիկէն մինչև մեծը
սրով ու սովով պիտի մեռնին, և անէծքի,
զարմանքի, նզովքի ու նախատինքի ենթա-
13 պիտի ըլլան · Որ եգիպտոսի երկիրը բնա-
կողներուն այցելութիւն պիտի ընեմ, ինչպէս
որ Երուսաղէմին՝ սրով, սովով ու ժանտախ-
14 տով այցելութիւն ըրի · Եւ Յուդայի մնացոր-
դէն՝ որոնք եգիպտոսի երկիրը գացեր նա-
խատելու գաղթականելէն մնացորդ ու ազատուած
պիտի չլինայ, որ Յուդայի երկիրը դառնան,
ուր որ անոնք կը յուսան դառնալու · և հոն
բնակելու · վասն զի նրանցից փախչողները
միայն պիտի դառնան »
15 Եւ ան բոլոր մարդիկը՝ որ գիտէին թէ ի-
րենց կիներուն օտար աստուածներու խունկ
կը ծխէին, և բոլոր ներկայ եղող կիներուն՝ մեծ ժո-
ղով մը, ու եգիպտոսի երկիրը՝ Պա-
թրոսի մէջ բնակող բոլոր ժողովուրդը երե-
16 միային պատասխան տուին ըսելով, Ձէրոջը
անունովը մեզի խօսած խօսքից վրայով մենք
17 քեզի մտիկ չենք ըներ · Հապա անշուշտ մեր
բերնէն ելած ամէն խօսքը պիտի ընենք, երկ-
նից Թագուհիին խունկ ծխելով և անոր գի-
նիներս նուէրներ մատուցանելով, ինչպէս որ
ըրինք մենք ու մեր հայրերը, մեր թագա-
ւորները ու մեր իշխանները՝ Յուդայի քա-
ղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցներուն
մէջ, ու որ հացով կշտացանք և հանգիստ
18 եղանք ու չարիք մը չտեսանք · Սակայն ան
ատենէն՝ ի վեր՝ որ երկինից Թագուհիին խունկ
ծխելէն ու անոր գինիներս նուէրներ մատու-
ցանելէն ետ կեցանք, ամէն բանի կարօտ ե-
19 ղանք, և սրով ու սովով հատանք · Ու երբոր
երկինից Թագուհիին խունկ կը ծխէինք և ա-
նոր գինիներս նուէրներ կը մատուցանէինք,

մի՞թէ առանց մեր երիկնեռաեւ ձեռքերնիս՝ զանի-
կա պաշտելու համար բլիթներ չինեցինք,
ու անոր գինիները նուէրներ մատուցինք ·
20 Ու երեմիա բոլոր ժողովուրդին՝ երիկնե-
րուն և կիներուն, ու իրեն ատ պատաս-
խանը առած բոլոր ժողովուրդին խօսեցաւ
21 ու ըսաւ · Միթէ ան խունկը՝ որ Յուդայի
քաղաքներուն մէջ ու Երուսաղէմի փողոցնե-
րուն մէջ կը ծխէիք՝ դուք ու ձեր հայրերը,
ձեր թագաւորները ու ձեր իշխանները ու
երկրին ժողովուրդը, Տէրը չյիշե՞ց ու անոր
22 միտքը չինկա՞ւ · Եւ Տէրը ձեր չար գործե-
րուն — ձեր ըրած գարշութիւններուն՝ ալ
չկրցաւ համբերել · ուստի ձեր երկիրը աւեր-
ատատ, ամլուկ ու նզոված և անբնակ եղաւ,
23 ինչպէս որ այսօր կ՚երեւայ · Որովհետև դուք
խունկ ծխեցիք, ու Տէրոջը դէմ մեղք գոր-
ծեցիք, և Տէրոջը ձայնին հնազանդութիւն
չըրիք, ու անոր օրէնքին, պատուիրաննե-
րուն ու վկայութիւններուն մէջ չքալեցիք,
ուստի հասաւ ատ չարիքը ձեզի եկաւ, ինչ-
պէս որ այսօր կ՚երեւայ »
24 Ու երեմիա բոլոր ժողովուրդին ու բոլոր
կիներուն ըսաւ · Տէրոջը խօսքը մտիկ ըրէք,
դուք եգիպտոսի երկրին մէջ եղող բոլոր Յու-
25 դա · Զօրաց Տէրը՝ Իսրայէլին Աստուածը այս-
պէս կ՚ըսէ ու կ՚ըսէ · Դուք ու ձեր կնիկ-
ներդ ձեր բերնովը խօսեցաք, ու ձեր ձեռ-
քովը լիգործ գրիք, ու ըսիք, Անշուշտ ը-
րած ուխտերնիս պիտի կատարենք, այսինքն
երկինից Թագուհիին խունկ պիտի ծխենք, ու
11 · Ժոյա · Բ · 1 ·
ժբ · 8 · 9 ·
ղ Մատ · ժ · 11 ·
ճ ա Կոր · ժ · 27 ·
մ Մատ · ժ · 10 · ա
Կոր · Բ · 4 · Ես · ա
Տիմ · ե · 18 ·
յ Գլ · Բ · 8 ·
ն Մատ · գ · 8 · գ ·
17 · ժ · 1 · Հմր · 11 ·
շ Մատ · ժ · 14 · Գլ ·
Բ · 1 · Գործ · ժգ ·
չ Մատ · ժ · 22 · Մարկ ·
գ · 11 ·
ո Մատ · ժ · 1 ·
պ Մատ · ժ · 11 · Մարկ ·
գ · 11 ·
ջ Մատ · ժա · 21 ·
ռ Ելսկ · գ · 6 ·
ս Մատ · ժա · 23 ·
վ Դան · ժ · 4 · բ Օր ·
ա · 33 · Ես · ժգ ·
13 · Երեմ · ԻԱ · 23 ·
տ Տես Եսկ · Իգ · 30 ·
ր · 16 ·
ց Մատ · ժ · 40 · Մարկ ·
Բ · 26 · Ժող · ժգ ·
30 ·
ւ ա Թես · գ · 8 ·
փ Ժող · ե · 25 ·
ք Հմր · 1 ·
օ Ժող · ժբ · 21 · ժգ ·
11 · Ժոյա · Բ · 1 ·
ժբ · 8 · 9 ·
ֆ Մատ · ժգ · 18 · Գործ
Իգ · 1 ·

անելու ու բնաւ մէկ բան մը ձեզի պիտի չը-
20 վնասէ ։ Բայց զուք անոր վրայ մի ուրախա-
նաք որ ոգիները ձեզի կը հնազանդին ։
Հապա ուրախացէք որ ձեր անուները եր-
կինքը գրուած են ։
21 Ան նոյն ժամուն Յիսուս Հոգիով ուրախա-
ցաւ ու ըսաւ , Շնորհակալ եմ քեզմէ , ով
Հայր՝ Տէր երկինի և երկրի , որ սա բաները
ծածուկ պահեցիր խելամտութենէն և դիտու-
թենէն , ու տղոց յայտնեցիր . այո , ով Հայր ,
ինչու որ քու առջեդ սոսկալի հաճելի եղաւ ։
22 Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս , ու
մէկը չգիտեր ինչ ով է Որդին , բայց միայն
Հայրը . և ինչ ով է Հայրը , բայց միայն Որ-
դին , և անոր որուն որ Որդին կ՚ուզէ յայտ-
նել ։
23 Ու աշակերտներուն դառնալով առանձին
ըսաւ , Երանի աս աչքերուն որ ձեր տես-
24 սածները կը տեսնեն ։ Քանզի կ՚ըսեմ ձեզի ,
որ շատ մարգարէներ և թագաւորներ ու-
զեցին ձեր տեսածները տեսնել , ու չտեսան ,
և ձեր լսածները լսել , ու չլսեցին ։
25 Ու ահա մէկ օրինական մը եկաւ , ու զա-
նիկա փորձելով ըսաւ , Վարդապետ , ի՞նչ
բնեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ ։
26 Անիկա ալ ըսաւ անոր , Օրէնքին մէջ ի՞նչ
27 գրուած է . ինսո՞ր կը կարդաս ։ Պատասխան
առաւ անիկա ու ըսաւ , Քու Տէր Աստուա-
ծդ սիրես քու բոլոր սրտիդ ու քու բոլոր
անձիդ և քու բոլոր զօրութենիդ ու քու բո-
լոր միտքիդ , և ընկերդ ալ քու անձիդ
28 պէս ։ Ու ինքը ըսաւ անոր , Շիտակ պատաս-
խան տուիր . սոսկա ըրէ՝ ու պիտի ապրիս ։
29 Իսկ անիկա ուզելով ինքզինքը արդարացը-
նել՝ ըսաւ Յիսուսին , Բայց իմ ընկերս ո՞վ է ։
30 Պատասխան տուաւ Յիսուս ու ըսաւ , Մէկ
մարդ մը երուսաղէմէն Երիքով կ՚իջնէր , ու
աւազակներու չո՜ւ իյնաւ , որոնք մերկացու-
ցին զանիկա ու վիրաւորելով կիսամեռ թո-
31 ղուցին ու գացին ։ Ու պատահեցաւ որ քա-
հանայ մը ան ճամբայէն կ՚իջնէր , ու զանիկա
32 տեսնելով՝ անդիի կողմէն անցաւ ։ Նոյնպէս
ալ Ղեւտացի մը ան տեղը հասնելով՝ գնաց
33 ու տեսաւ , և անդիի կողմէն անցաւ ։ Բայց
Սամարացի մը որ ճամբորդութենէն կ՚ընէր ,
եկաւ անոր քովը , ու զանիկա տեսնելով խղ-
34 ճաց ։ Ու մօտեցաւ՝ անոր վէրքերը փաթթեց՝
վրան ձէթ և գինի թափելով , ու իր գրաս-
35 պին վրայ դնելով՝ տարաւ անիկա մէկ պան-
դոկ մը , և անոր հոգ տարաւ ։ Ու հետեւեալ
օրը երբոր կ՚ելլէր անկէ , երկու դահեկան
հանեց պանդոկապետին տուաւ և անոր ըսաւ ,
Հոգ տար անոր , ու ինչ որ աւելի ծախք
բնես , ես դառնալուս ես քեզի կը վճարեմ ։
36 Հիմա ան երեքէն ո՞րը քեզի կ՚երեւնայ ընկեր
37 իրեն եղած աւազակներուն չո՜ւշ իյնողին ։ Ան ա-
նիկա ըսաւ , Ան որ անոր գթութիւնը ըրաւ ։
Յիսուս ըսաւ անոր , Գնա՝ դուն ալ այնպէս ըրէ ։
38 Ու եղաւ որ երբ անոնք կ՚երթային , ինքը
գիւղ մը մտաւ , և մէկ կնիկ մը Մարթա ա-
39 նուն զանիկա իր տունը ընդունեց ։ Ու ա-
նիկա քոյր մը ունէր , որուն անունը Մարիամ
էր , որ նաեւ Յիսուսի ոտքերուն քովը նըս-
40 տաւ , ու անոր խօսքերը լսելով կ՚ընէր ։ Բայց
Մարթա շատ սպասաւորութիւնով զբաղած
էր , ինկաւ անոր քովը ու ըսաւ , Տէր , քու
հոգդ չէ՞ , որ իմ քոյրս միս միտկէ ինծուց
սպասաւորութիւնն ալ ։ ուստի ասոր ըրուցէ
41 որ ինծի օգնէ ։ Պատասխան տուաւ Յիսուս
ու ըսաւ անոր , Մարթա , Մարթա , դուն
շատ բաներու համար հոգ ընելով կը տագ-
42 նապիս ։ Բայց մէկ բան մը պէտք է , և Ma-
րիամ՝ ան ապիկ բաժինը ընտրեց , որ իրմէ
պիտի չառնուի ։

ԳԼ ՝ ԺԱ

1 Ե՛ւ եղաւ որ մէկ տեղ մը աղօթք կ՚ընէր ։ ու երբոր դադարեցաւ , իր աշակերտներէն մէկը բսաւ իրեն , Տէր , մեզի աղօթք ընել սորվեցուր , ինչպէս որ Յովհաննէս ալ իր աշակերտներուն սորվեցուց ։ 2 Եւ բսաւ անոնց , Երբոր աղօթք կ՚ընէք՝ բսէք , Ով Հայր ՙմեր՝ որ երկինքն ես , քու անունդ սուրբ ըլլայ ։ քու թագաւորութիւնդ գայ ։ ՙքու կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրի-
3 վրայ ։ Մեր ամէն աւուր հացը օրէ օր մեզի
4 տուր ։ Եւ մեզի ներէ մեր մեղքերը , ինչու որ մենք ալ կը ներենք ամէն մարդու՝ որ մեզի պարտական են ։ ու մեզ փորձութեան մի տաներ , ՙհապա չազատես մեզ չարէն ։՚՚
5 Ե՛ւ բսաւ անոնց , Ձեզմէ ո՞վ է ան որ բա-
րեկամ մը ունենայ , ու կէս գիշերուան մէջ երթայ անոր և բսէ անոր , Բարեկամ , ինծի
6 երեք նկաւեակ փոխ տուր . ինչու որ իմ մէկ բարեկամս ճամբայէ ինծի եկաւ , ու բան մը
7 չունիմ անոր առջեւը դնելու ։ Անիկա ալ ներ-
սէն պատասխան տայ և բսէ , Ինծի մի յոգ-

ոՅհ ։ ԺԸ ։ 38 ։ Ա՜ոչ ։ ը Մ՜ատ ։ ժա ։ 25 ։ | ը Մ՜ատ ։ ժգ ։ 16 ։
ԿԺ ։ 29 ։ Եր ։ գ ։ | = Մ՜ատ ։ ԻԸ ։ 18 ։
ե ։ Դան ։ ԺԸ ։ 1 ։ | Ցովհ ։ գ ։ 35 ։ ե ։
Փիլ ։ գ ։ 3 ։ Երբ ։ | 27 ։ ԺԿ ։ 2 ։
ԺԸ ։ 23 ։ Ցոյս ։ ԺԳ ։ | = Ցովհ ։ ա ։ 18 ։ գ ։
ը ։ ի ։ 18 ։ Իսա ։ 27 ։ | 44 ։ 46 ։
ը Մ՜ատ ։ ԺԳ ։ 25 ։ | ը Մ՜ատ ։ ԺԳ ։ 16 ։
= Մ՜ատ ։ ԻԸ ։ 15 ։
ը Մ՜ատ ։ ԺԲ ։ 16 ։ ԻԲ ։
35 ։
ը Ը Օր ։ գ ։ 3 ։
= Ղկ ։ ԺԲ ։ 15 ։

ը Ցովհ ։ գ ։ 3 ։
= Ցովհ ։ ԺԱ ։ 1 ։ ԺԲ ։
3 ։
ը = Կոր ։ ի ։ 28 ։ Եռ ։
ը Գէ ։ ը ։ 25 ։ Գոր ։
ԻԲ ։ 3 ։
= Մ՜ատ ։ գ ։ 9 ։
= Ա՜ռաք ։ Յառնն ։

նեցրներ, որպէն գաւառը գոցուած է, ու որ-
զաքս իմ քաղա անկոպիսի մէջ են. չեմ կրնար
8 հլլել ու փեզի հաղ տալ. Ձեզի կ'ըսեմ, †թէ
և բարեկամութիւնն համար չելլէ ասդ անոր,
ասկայն անոր թեռնուածութիւն համար պիտի
9 հլլէ ու պէտք եղածը տայ անոր. †կա ալ
կ'ըսեմ Ձեզի, խնդ ըներէք և պիտի ապրիք ձեզ-
պէ, փեռուներէք ու պիտի գտնէք, †---ը
10 գարկէք և պիտի բացուի ձեզի. վասն զի
ամէն ոք որ կը խնդրէ՝ կ'առնէ, և ոք որ կը
փեռուի՝ կը գտնէ, և ոք որ †---ը կը գարնէ՝
11 պիտի բացուի անոր. †Ձեզմէ ո՞վ է այն հայրը՝
որմէն իր որդին հաց որ ուզէ, մինէ քար
պիտի տայ անոր. կամ թէ որ ձուկ ---ի, մի-
12 թէ ձուկին տեղը օձ պիտի տայ անոր. կ-
կամ թէ որ հաւկիթ ուզէ, միթէ կարիճ պի-
13 տի տայ անոր. Ուստի եթէ դուք որ չար
էք՝ ձեր զաւակներուն ապէկ ընծաներ տալ
գիտէք, որչափ աւելի Ձեր Հայրը երկինքէն
Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը
խնդրեն։
14 †Ու դեւ մը կը հանէր, և անիկա համր էր.
ու եղաւ որ երբ դեւը եղաւ, համրը խոսաց
15 ցաւ, և ժողովուրդները զարմացան. Բայց
անոնցմէ մէկ քանիները ըսին, †Աստիկա դե-
ւերուն Բէեզեղբուզ իշխանին միջոցով դեւե-
16 րը կը հանէ. Ուրիշներն ալ փորձելով †եր-
17 կինքէն նշան մը կ'ուզէին անկէ. †Բայց ին-
քը †գիտնալով անոնց խորհուրդները՝ ըսաւ
անոնց, Ամէն Թագաւորութիւն իրեն դէմ
բաժնուած՝ կ'աւերի, և տուն մը †իրեն դէմ
18 †---ը՝ կը կործանի. Հապա թէ որ Սատա-
նան իրեն դէմ բաժնուած է, անոր Թագաւո-
րութիւնը ինչպէ պիտի կենայ. որովհետև
կ'ըսէք թէ Բէեզեղբուզով դեւերը կը հանեմ՝
19 իսկ թէ որ ես Բէեզեղբուզով դեւերը կը հա-
նեմ, ձեր որդիքը ինչո՞վ կը հանեն. ասոնք
անոնք պիտի լլան ձեր դատաւորներ։
20 †Բայց թէ որ ես Աստուծոյ մատովը կը հանեմ
դեւերը, ապեսն Աստուծոյ Թագաւորութիւնը
21 ձեր վրայ հասած է. †Երբոր զօրաւոր †---ը
մը զէնքերը վրան առած՝ իր տունը կը
պահպանէ, անոր բաներն խաղաղութեան մէջ
22 կը մնան. †Բայց երբոր անկէ աւելի զօրաւորը
վրան գալով յաղթէ զանիկա, անոր զէնքերը
կ'առնէ՝ որոնց ինքը յուսացեր էր, և անկէ
23 ---ը կողոպուտը կը բաժնէ. †Ան որ իմ հետս
չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ
չժողվեր՝ ցիրուցան կ'ընէ։
24 †Երբոր պիղծ ոգին մարդէ մը կ'ելլէ, ան-
ջուր տեղեր անցք կը պտըտի, հանգստութիւն

կը փնտռէ, ու երբոր չգտնէ՝ կ'ըսէ, Դառ-
25 նամ դառնամ իմ տունս՝ ուրկից որ եկայ. և
կու գայ՝ ըննե- մաքրուած ու յարդարուած
26 կը գտնէ. Անատնիը կ'երթայ և իր հետ
կ'առնէ եօթը ուրիշ ոգիներ իրմէ աւելի չար,
ու մտնելով հոն կը բնակին, և ան մարդուն
վերջը առջինէն գէշ կ'ըլլայ։
27 Ու եղաւ որ երբ անիկա ասս բաները կը խո-
սէր, ժողովուրդին միջէն մէկ կնիկ մը ձայնը
վերցուց ու ըսաւ անոր, †Երանի ան որովայ-
նին՝ որ քեզ կրեց, և ան ծիծերուն՝ որ քեզի
28 կաթ տուին։ Ըս ինքը ըսաւ, †Ա՛նանաւ անոք
թէ երանի անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն
ու կը պահեն։
29 †Ու երբոր ժողովուրդները հոծ ժողով կը դի-
զուէին, սկսաւ ըսել, Ա՛ս ազգը չար է. նշան
կ'ուզէ, և †---ը նշան պիտի չտրուի անոր,
30 բայց միայն Յովնան մարգարէին նշանը. †Որով-
հետև ինչպէս որ Յովնան Նինուէացիներուն նշան
եղաւ, անանկ ալ Որդի մարդոյ սա ազգիս
31 պիտի ըլլայ. †Հարաւի թագուհին դատաս-
տանին ժէ սա ազգին մարդոցը դէմ պիտի ել-
լէ, ու պիտի դատապարտէ զանիկա, ինչու որ
երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին իմաստու-
թիւնը լսելու. և ահա Սողոմոնէն մեծ մէկը
32 կայ հոս. Նինուէի մարդիկը դատաստանին
ժէ սա ազգին դէմ պիտի կանգնին, ու պիտի
դատապարտեն զանիկա, ինչու որ Յովնանին
քարոզութիւնովը զղջմի եկան. և ահա Յով-
նանէն մեծ մէկը կայ հոս։
33 †Ա՛ոկը ճրագը չվառեր՝ ծածուկ տեղ մը
դներ, ոչ ալ գրուանի տակ, հապա աչսա-
նակին վրայ, որ ներս մտնողները լոյսը տեսնեն։
34 †Ա՛մարմնին ճրագը աչքն է. ուստի երբոր աչ-
քդ պարզ է, բոլոր մարմինդ ալ լուսաւոր
կ'ըլլայ. բայց երբոր ---ը վատ է, մարմինդ
35 ալ մութ կ'ըլլայ. Ուրեմն զգոյշ կեցիր, որ
36 քու մէջդ եղած լոյսը խաւար չըլլայ. Ուրդ-
թէ որ քու բոլոր մարմինդ լուսաւոր է, և
մութ մաս մը չունի, բոլորն ալ լուսաւոր կ'ըլ-
լայ, ինչպէս երբոր ճրագ մը իր փայլատու-
թիւնովը քեզ կը լուսաւորէ։
37 Ու երբոր --- †---ը կը խոսէր, փարիսեցի
մը կ'ապաչէր անոր՝ որ իր տունը ճաշ ուտէ.
38 անիկա ալ մտաւ՝ անգան նստաւ. †Իսկ փարի-
սեցին երբոր տեսաւ՝ զարմացաւ, որ նախ չը-
39 լուացուեցաւ ճաշէն առաջ. Եւ †Տէրը ըսաւ
անոր, Հիմա դուք՝ փարիսեցիներ, գաւա-
թին ու պնակին դուրսի գին կը մաքրէք, ձեր
ներսի գին յափշտակութիւնով և չարու-
40 թիւնով լեցուն է. Անխելքներ, ան որ դուրսը

---

† Գէ· ժբ· ։ Եա· ։ ‡ Ա՛ա· Ե· ։ Ը· ։ Ա՛ա· ժբ· ։ ԺԱ· ։ Ա՛ա· ժա· ։ ԺԱ· ։ Ա՛ա· ժա· ։ Ա՛ա· ժբ· ։ Ա՛ա· ժբ· ։ Ա՛ա· ժբ

41 սիրեր բրաւ՝ ներսինն ալ ինքը չբրաւ։ Վա-
կայն ձեզ մէջը եղածներէն ողորմութիւն
առէք, և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ
42 ձեզի։ Բայց վայ ձեզի փարիսեցիներուդ՝ որ
անանուխին ու փիգնեայնին և բոլոր խոտերէն
ներբան առանոդը կը վճարէք, ու դատը կ'ը-
նէք իրաւունքը և Աստուծոյ սէրը. առանք
43 պէտք էր ընել, և անոնք չձգել։ Վայ ձեզի
փարիսեցիներուդ՝ որ ժողովարաններուն մէջ
առաջին աթոռները կը սիրէք, ու շուկաներ-
44 բուն մէջ բարեներըը։ Վայ ձեզի, կեղծաւոր
դպիրներ ու փարիսեցիներ, որ անյայտ գե-
րեզմաններու նման էք, որոնց վրայէն մար-
դիկ կը քալեն ու չեն գիտեր։
45 Եւ օրինականներէն մէկը պատասխան ա-
ռաւ բսաւ անոր, Վարդապետ, աս խօսքերը
46 գրուցելով մեզ ալ վար կը գարնես։ Եւ ա-
նիկա բսաւ, Ձեզ ալ վայ օրինականներուդ,
որ ատենուս գժուար բեռներ կը բեռցնէք
մարդոց, ու դուք մէկ մատովիդ ան բեռ-
47 ներուն չէք դպչիր։ Վայ ձեզի՝ որ մարգա-
բէներուն գերեզմանները կը շինէք, ու ձեր
48 հայրերը սպաննեցին զանոնք։ Ուրեմն կը
վկայէք և հաւանութիւն կու տաք ձեր հայ-
րերը բրածներուն. ինչու որ իրենք սպաննեցին
զանոնք, ու դուք անոնց գերեզմանները կը
49 շինէք։ Անոր համար ալ Աստուծոյ իմաստու-
թիւնը բսաւ, Պիտի խրկեմ անոնց մարգա-
բէներ ու առաքեալներ, և անոնցմէ որը պիտի
50 սպաննեն ու որը հալածեն. Որպէս զի աշխար-
հի սկիզբէն հետէ թափուած բոլոր մարգա-
բէներուն արիւնը աս ազգէն պահանջուի,
51 Աբելէն արիւնէն մինչև Զաքարիայէն արիւնը,
որ սեղանին ու տաճարին մէջտեղը կորսուե-
ցաւ. Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աս ազգէն պի-
52 տի պահանջուի։ Վայ ձեզի օրինականներուդ՝
որ գիտութեան բանալին վերցուցիք. դուք
չմտաք, և մտնողներն ալ արգիլեցիք։
53 Ու երբոր աս բաներըը անոնց կը գրուցէր,
գպիրներըը ու փարիսեցիներըը սկսան խիստ
գժուարիլ, և շատ բաներու վրայով անոր
54 բերնէն խօսք փնտռել. Եւ անոր դարան
պատրաստելով՝ կը փնտռէին թէ ինչպէս Ա-
նոր բերնէն բան մը որսան, որ անոր վրայով
ամբաստանութիւն ընեն։

ԳԼ. ԺԲ

1 Ա.ս միջոցին երբոր բիւրաւոր ժողովուրդներ
գիրար ժողմուեցան՝ մինչև որ միկզմիկ կը կո-
խէին, Ակսաւ ըսել իր աշակերտներուն,
Պիտի առաջ ինքզինքնիդ զգոյշ պահեցէք
փարիսեցւոց խմորէն, որ է կեղծաւորութիւն.
2 Ինչը ոչ բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չը-
յայտնուի, և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի.
3 Ուստի ինչ որ մնիմ ականջի գրուցիցիք, անի-
կա լոյս անկոր պիտի բուի. և ան որ ներքին
սենեակներուն մէջ ականջի խօսեցաք, տա-
4 նիքներուն վրայ պիտի քարոզուի. Բայց
ձեզի՝ իմ բարեկամներուս կը գրուցեմ, Մի
վախնաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն,
ու անկէ ետև աւելի բան մը ընելու կարող-
5 չ ըլլան. Բայց ցուցնեմ ձեզի թէ որմէ
պիտի վախնաք. Անկէ վախցէք՝ որ սպաննե-
լէն ետև իշխանութիւն ունի գեհենը ձգե-
6 լու. այո կ'ըսեմ ձեզի, Անկէ վախցէք. Չէ՞
որ հինգ ճնճղուկը երկու դանկի կը ծախուի,
և անոնցմէ մէկը մոռցուած չէ Աստուծոյ
7 առջեւին. Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ
համրուած է. ուրեմն մի վախնաք, Քան-
զի դուք շատ ճնճղուկներէն աւելի արժէք էք.
8 Եւ ձեզի կ'ըսեմ, Ամէն ով որ պիտ կը գա-
նէ մարդոց առջեւը, Որդին մարդոյ ալ ա-
նիկա պիտի գաւանի Աստուծոյ հրեշտակնե-
9 րուն առջեւը. Բայց ան որ պիտ մարդոց առ-
ջեւը կ'ուրանայ, ուրացուած պիտի ըլլայ Ա-
10 ստուծոյ հրեշտակներուն առջեւը. Եւ ամէն
ով որ Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ, պիտի
ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին
դէմ հայհոյութիւն կ'ընէ, պիտի չներուի ա-
11 նոր. Ու երբոր ձեզ ժողովարաններըը՝ և իշ-
խանութիւններու ու պետութիւններու առ-
ջեւը տանին, հոգ մի ընէք թէ ինչ-
պէս կամ ինչ պատասխան պիտի տաք, կամ
12 ինչ պիտի ըսէք. Վասն զի Սուրբ Հոգին պի-
տի սորվեցնէ ձեզի նոյն ժամուն՝ ինչ որ
պէտք է խօսիլ.
13 Ժողովուրդին մէջէն մէկը բսաւ անոր, Վար-
դապետ, գրուցէ եղբօրս, որ հետ ինծի ժա-
14 ռանգութիւնը իմ հետս բաժնէ. Ան ալ բսաւ
անոր, Արդ, ո՞վ դիս ձեր վրայ դատաւոր
15 կամ բաժին ընող դրաւ. Եւ բսաւ անոնց,
Նայեցէք և զգուշացէք ագահութիւնէն. ին-
չու որ մարդուս առատացած քներուն աւելնա-

1 Ջրխաւս իր աշակերտներուն կը պատմէր կեղծաւորութիւն
նէ զգոյշ կենալ. ու չվախնալ իր վարդապետութենը գո-
րծելէն. 13 Անձամբ ամբարներ չունել. Մատաղ հարուստին
առակովը կը պատմէր ժողովրդոց որ զգոյշ ըլլան ագահու-
թենէ. 22 Պետք չէ որ չմտածենք հոգ ունենանք աշխարհային
բաներու վրայ. 31 այլ Աստուծոյ թագաւորութենը խնդրենք

2 Ես. ծբ. 7. Դան. 7 · 37 · Գլ. ժբ. 33 · — Մատ. իգ. 23 · — Մատ. իգ. 6 · Մարկ. ժբ. 38. 39 · 3 Մատ. իգ. 27 · — Ա-ղ. ե. 9 · 5 Մատ. իգ. 4 · 7 Մատ. իգ. 29 · — Մատ. իգ. 34 · 8 Դան. 7 · 8 · — Մատ. ժգ. 6 · Մարկ. ը. 38 · 9 Մատ. իգ. 33 · — Մատ. ժգ. 6 · Մարկ. ը. 13 · 10 Մատ. իբ. 31 · 11 Մատ. ժ. 19 · Մարկ. ժգ. 11 · Գլ. ի. 14 · 12 Ելից. դ. 12 · Մատ. ժ. 20 · Մարկ. ժգ. 36 · 13 Մատ. ժգ. 11 · 14 Ելից. ժե. 13 · Մատ. ժ. 38 · Մարկ. ը. 34 · Մատ. ժ. 33 · 15 Մատ. ժգ. 11 · Մարկ. ը. 17 · Ե. 26 · Ա Թագ. ը. 23 · Եսթ. ա. 8 · Մատ. ժ. 33 · 16 Մատ. ժգ. 11 · Մարկ. ը. 38 · Մատ. ժ. 20 · Մարկ. ժգ. 11 · Գլ. ի. 14 · 17 Մատ. ժ. 38 · Մարկ. ը. 34 · Մատ. ժգ. 11 · Գլ. ի. 14 · 18 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 · 19 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 · 20 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 · 21 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 · 22 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 · 23 Մատ. ժ. 39 · Մարկ. ը. 35 ·

16 լէն [illegible] չէ իր կեանքը։ Ուստի մէն ալ խօ-
անցաւ անանց՝ բանիով։ Մէկ հարուստ մարդ ու
17 մը արտերը առատ բերքեր տուին։ Եւ ինքը
կը մտածէր ինքնիրեն ու կ՚ըսէր, Ի՞նչ ընեմ,
վասն զի տեղ չունիմ, որ հոն իմ բերքերս
18 ժողվեմ։ Եւ ըսաւ, Ա՛յս ընեմ. իմ ամբարներս
քակեմ ու ալ աւելի մեծ շինեմ, և հոն ժող-
19 վեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս. Եւ
իմ անձիս բանիմ, Ո՛վ անձս, շատ բարիքներ
ունիս շատ տարիներու համար ժողված.
20 Հանգչէ, կեր, խմէ և ուրախ եղիր։ Բայց
Աստուած ըսաւ անոր, Անմիտ, այս գիշեր
հոգիդ քեզմէ պիտի պահանջուի. Ուստի ան
զոր պատրաստած բաներդ որո՞ն պիտի լի-
21 լայ։ Այսպէս է անիկա որ իր անձին համար
գանձ կը դիզէ, և Աստուծոյ չհարստանար։
22 Եւ ըսաւ իր աշակերտներուն, Ասոր համար
կ՚ըսեմ ձեզի, Հոգ մի ընէք ձեր կեանքին
համար՝ թէ ինչ պիտի ուտէք, ոչ ալ մարմի-
23 նին համար՝ թէ ինչ պիտի հագնիք. Ինչ-ը
կեանքը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝
24 հագուստէն։ Նայեցէք ագռաւներուն, որ ոչ
կը սերմանեն և ոչ կը հնձեն, որոնք ոչ չու-
մարաններ ունին՝ ոչ ալ ամբարներ, և Աս-
տուած անոնք կը կերակրէ. դուք ո՛րչափ ա-
25 ւելի լաւ էք քան զանոնք։ Եւ ձեզմէ ո՛վ
կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ կան-
26 գուն մը աւելցընել։ Հապա թէ որ ամենափոքր
բանին կարող չէք, ուրիշ բաներուն համար
27 ինչո՞ւ հոգ կ՚ընէք։ Նայեցէք շուշաններուն՝
ինչպէս կ՚աճին. ոչ կ՚աշխատին և ոչ կը մա-
նեն, բայց ձեզի կ՚ըսեմ որ Սողոմոն ալ իր բո-
լոր փառաւորութիւնովը մէկուն
28 պէս չհագուեցաւ։ Ուստի թէ որ խոտը որ այս-
օր գաշտի մէջ է՝ ու վաղը փուռը կը ձգուի,
Աստուած անանկ կը հագուեցնէ, ո՛րչափ ա-
29 ւելի ձեզ, թերահաւատներ։ Ալ դուք մի
փնտռէք թէ ինչ պիտի ուտէք և ինչ պիտի
30 խմէք, ու մի չփոթիք. վասն զի աս բոլոր
բաները աշխարհիս ազգերը կը փնտռեն. ու
ձեր Հայրը գիտէ որ աս բաները ձեզի պէտք
31 են։ Բայց դուք Աստուծոյ թագաւորութիւ-
նը խնդրեցէք, և աս բոլոր բաներն ալ ձեզի
32 պիտի տրուին։ Մի վախնար, պզտիկ հօտ, հնա-
չու որ ձեր Հայրը հաճեցաւ որ թագաւորու-
33 թիւնը ձեզի տայ։ Վաճառեցէք ձեր առացուած-
քը և ողորմութիւն տուէք. [illegible] ձեզի չհինցա-
ղու քսակներ պատրաստեցէք, — երկինքը՝
չպակսիլու գանձ մը, ուր ոչ գողը կը մօտենայ
34 և ոչ ցեցը կ՚ապականէ, Քանզի ձեր գանձը

ուր որ է, անդամ ալ հոն պիտի ըլլայ։
35 Ձեր մէջքերը գոտեպատած ըլլան, Ու ճրագ-
36 ները վառած. Եւ դուք ան մարդոց նմանի՝
որ իրենց տիրոջը կը սպասեն՝ թէ ե՛րբ պիտի
դառնայ հարսնիքէն. որ երբ գայ և [illegible]
37 զարնէ, իսկոյն բանան անոր։ Երանի՜ ան ծա-
ռաներուն, որ տէրը երբոր գայ՝ գտնէ զար-
թուն պիտի գտնէ. Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ
ինքը գոտին մէջքը պիտի կապէ ու անոնց
նստեցնէ սեղան, և առաջ անցնելով սպա-
38 սաւորութիւն պիտի ընէ անոնց։ Եւ թէ որ
[illegible] երկրորդ պահուն գայ, կամ երրորդ
պահուն գայ ու անանկ գտնէ, երանելի են
39 ան ծառաները։ Բայց սա գիտցէք, որ եթէ
տանուտէրը գիտնար թէ որ ատեն գողը կու
գայ, արթուն կը կենար ու թող չէր տար որ
40 իր տունը ծակեն։ Ուրեմն դուք ալ պատ-
րաստ կեցէք, քանզի Որդի մարդոյ կու գայ
անանկ ժամու մէջ որ դուք չէք կարծեր։
41 Եւ Պետրոս ըսաւ անոր, Տէր, առ առակը
42 մեզի՞ կ՚ըսես թէ ամենուն ալ։ Եւ Տէրը ըսաւ,
Ո՞վ է ան հաւատարիմ ու խելացի տնտես
անտես որ, զոր տէրը իր գերդաստանին վր-
րայ պիտի դնէ, որ ատենին ուտելիքը
43 տայ։ Երանի է ան ծառային, զոր որ իր տէրը
եկած ատենը անանկ ըրած պիտի գտնէ։
44 Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, որ իր բոլոր ունե-
45 ցածին վրայ պիտի կեցցնէ զանիկա։ Հապա
թէ որ ան ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ
տէրս իր գալը կ՚ուշացընէ. և սկսի ծառա-
ներուն ու ազախիններուն ծեծել, և ուտել ու խը-
46 մել ու գինովնալ, Ան ծառային տէրը պիտի
գայ անոնց մէկ օր մը որ չսպասէր, և անոնց մէկ
ժամ մը որ չգիտեր, և զանիկա մէջտեղէն պի-
տի կտրէ, ու անոր բաժինը անհաւատարիմ-
47 ներուն հետ պիտի դնէ։ Եւ ան ծառան՝ որ
իր տիրոջը կամքը գիտէ ու չպատրաստուեր,
ոչ ալ անոր կամքը կ՚ի գործ կը դնէ, շատ ծեծ
48 պիտի ուտէ։ Բայց ան որ չգիտեր ու ծեծի
արժանի բան մը կ՚ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ.
որուն որ շատ տրուեցաւ, շատ պիտի ուզուի
անկէ, և որուն որ աւելի յանձնուեցաւ, ալ
աւելի պիտի պահանջուի անկէ։
49 Կրակ ձգելու եկայ երկրիս վրայ, ու
ի՞նչ կ՚ուզեմ թէ որ արդէն բորբոքած է։
50 Բայց մկրտութիւն մը ունիմ մկրտուելու, և
ինչպէս կը տագնապիմ մինչև որ կատարուի։
51 Կը կարծէք թէ ես երկրիս վրայ խաղաղու-
թիւն տալու եկայ. Ձեզի կ՚ըսեմ՝ Չէ, Հա-
52 պա բաժանում ես. Ինչու որ ասկէ ետև մէկ

[illegible]

ասեն ամէն հինգը չորսը բաժնուած պիտի բլլան,
53 երկուքը երկուքին ու երկուքը երկուքին. Հայրը պիտի բաժնուի որդիին, և որդին հօրմէն, մայրը աղջիկէն ու աղջիկը մօրմէն, կեսուրը իր հարսէն ու հարսը իր կեսուրէն։
54 Եւ բաւ ժողովուրդներուն, Երբոր արեւմուտքին կողմէն ամպ մը եղած կը տեսնէք, շուտ մը կ՚ըսէք թէ Ձնծրեւ պիտի գայ, և
55 անանկ կ՚ըլլայ։ Ու երբոր հարաւային հովը կը փչէ, կ՚ըսէք թէ Տաք պիտի բլլայ, և ա-
56 նանկ կ՚ըլլայ։ Կեղծաւորնե՛ր, երկիրն ու երկնից երեսը փնտռելը գիտէք, հապա ատ ժա-
57 մանակը ի՞նչպէս չէք փնտռեր։ Եւ ինչո՞ւ
58 դուք ձեզմէ չէք արուներ իրաւունքը։ Երբոր գաղտ քու տանիդ հետ իշխանին երթալու բլլաս, ճամբուն մէջ անկէ ազատելու համար ջանք բրէ, որ չըլլայ թէ քեզ դատաւորին առջեւ քաշէ, ու գատաւորը դահիճին ձեռքը տայ քեզ, ու դահիճն ալ բանտը
59 դնէ։ Քեզի կ՚ըսեմ, բնաւ պիտի չելլես անկէ՝ մինչեւ որ վերջին լուման չվճարես։

ԳԼ· ԺԳ

1 Քրիստոս ապաշխարութիւն կը քարոզէ։ Գալիլեացւոց և սիլոամցիներուն կրած պատիժը չէնշով։ 6 Ընդունայն թզենիին առակը։ 11 Կիսամեռ կինը կը բժշկէ։ 18 Մանանեխի հատիկն և խմորին առակներովը կը յայտնէ չէնշումնաբնութեան խորհուրդը։ Նեղութիւններէ ետքը բնակութեան օրհնութիւն։ 22 Կը խրատէ նեղ դռնէն մտնելու ջանք ընել։ 31 Եւ կը յանդիմանէ Հերովդէսը ու Երուսաղէմը։

1 Եւ ամէնէ առաւելապէս նեղուելով՝ պատմեցին անոր Գալիլեացւոց վրայով, որոնց արիւնը Պիղատոս իրենց զոհերուն հետ
2 խառնեց։ Եւ Յիսուս պատասխան տալով ըսաւ անոնց, Կը կարծէ՞ք որ այն Գալիլեացիները նե՛րը բոլոր Գալիլեացիներէն աւելի մեղաւոր
3 էին, որ ասանկ բաներ քաշեցին։ Չէ՛, կ՚ըսեմ, Չէ։ Հապա թէ որ չապաշխարէք, ա-
4 մէնքդ ալ անանկ պիտի կորսուիք։ Կամ թէ այն տասնեւութը հոգին որոնց վրայ Սիլոամին աշտարակը ինկաւ, և անոնք մեռցուց, կը կարծէ՞ք որ անոնք երուսաղէմի մէջ բնակած բոլոր մարդոցմէն աւելի պարտապուր էին։
5 Չէ՛, կ՚ըսեմ, Չէ։ Հապա թէ որ չապաշխարէք, ամէնքդ ալ նոյնպէս պիտի կորսուիք։
6 Ա՛ս առակն ալ բաւ։ Մարդ մը իր այգիին մէջ անկաւած թզենի մը ունէր, ու ե-
7 կաւ անկէ պտուղ փնտռելու, և չգտաւ։ Ուստի բաւ այգեպանին, Ահա երեք տարի է որ կու գամ այս թզենիին վրայ պտուղ փնտռելու, ու չեմ գտներ։ Զայն ատիկա կտրէ, ինչո՞ւ
8 հինցնէ հանապազ գետինը խափանէ։ Անիկա պատասխան տալով ու անոր բաւ, Տէր, այս
9 տարի ալ ասիկա թող տուր, մինչեւ որ աստը բոլորտիքը բրիւմ ու քրիք դնեմ, Եւ թէ որ պտուղ տայ՝ լաւ, հապա թէ չէ՝ գալ տարին կտրես ասիկա։
10 Եւ ինքը Ժողովարաններուն մէկուն մէջ կը-
11 րաւէր ատեն։ Եւ ահա հոն կին մը կար, որ հիւանդութեան ոգի մը ունէր տասնեւութը տարիէ ի վեր, ու կծկուած էր
12 և ամենեւին չէր կրնար շիտակ կեցնել։ Ու Յիսուս զանիկա տեսնելով՝ իրեն կանչեց և ըսաւ անոր, Կնիկ, դուն քու հիւանդութենէ
13 ազատուած ես։ Ու ձեռքը անոր վրայ դրաւ. և իսկոյն շիտակուեցաւ ու փառք
14 կու տար Աստուծոյ։ Իսկ Ժողովարանին իշխանը պատասխան առաւ բարկանալով՝ որ Յիսուս շաբաթի օրը բժշկեց, և բաւ Ժողովուրդին, Վեց օր կայ որոնց մէջ արժան է գործ գործել, ուստի ան ո՛րեէ նո՛ւիզ բժշկուե-
15 ցէք, և՛ ո՛չ թէ շաբաթի օրը։ Ա՛ռաւելն Տէրը պատասխան առաւ անոր ու բաւ, Կեղծաւոր, Ձեզմէ ամէն մէկը շաբաթի օրը իր եզը կամ էշը մսուրէն չաղձկե՞ր՝ որ տանի
16 ջուր տայ։ Հապա ասիկա որ Աբրահամի սերնդեկ էր, որ սատանան տասնեւութը տարի կապած էր, չէր վայելր որ շաբաթի
17 օրը ան կապէն արձակուի։ Եւ ա՛ս բաները որ բաւ, իրեն հակառակ կեցողները ամէնքն ալ ամիսով ձեացին. ու բոլոր ժողովուրդը կ՚ուրախանար ան ամէն փառաւոր գործքերուն համար՝ որ անկէ կ՚ըլլային։
18 Ուրեմն բաւ, Աստուծոյ թագաւորութիւնը ի՞նչ բանի կը նմանի, ու ի՞նչ բանի նմանցնեմ
19 զնա՛։ Անիկա նման է հատիկ մանանեխի՝ որ մարդ մը առաւ՝ իր պարտէզը ձգեց. և աճեցաւ ու մեծ ծառ եղաւ. ու երկնից թռչունները անոր ճիւղերուն վրայ բնակեցան։
20 Դարձեալ բաւ, Աստուծոյ թագաւորու-
21 թիւնը ի՞նչ բանի նմանցնեմ։ Խմորի նման է, որն որ կնիկ մը առաւ՝ երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչեւ որ ամէնն ալ խմորեցաւ։
22 Եւ քաղաքներէն ու գիւղերէն պտրտելով կը սորվեցնէր, ու գէպ ի Երուսաղէմ ճամրայ
23 կ՚ընէր։ Եւ մէկը բաւ անոր, Տէր, փրկուո՞ղն են անոնք որ պիտի փրկուին։ Անիկա ալ ը-
24 սաւ անոնց, Ջանք բրէք որ նեղ դռնէն մտնէք, քանզի կ՚ըսեմ ձեզի որ շատերը մտնէ-
25 լու պիտի ուզեն և պիտի չկրնան։ Անկէ ետեւ որ տանտէրը ելլէ ու դուռը գոցէ, և դուրսի կողմը գուրբը կեցած, ու դուռը զարնել և բանալ, Տէր, Տէր, բացի մեզի. ան ալ պատասխան տալով պիտի քեզ ձեզի, Չգի-

---

* Մատ. ժգ. ե։
† Ընդհակ. իմ. ե։ Մատ. ի. ձ։
‡ Ա՛ղ. կր. ե։ Նե. ա. ե։
= Նե. ի. ե։ Մատ. իա. ժե։
? Մարկ. ժգ. ժե։ Գործ. ի. ժ։
÷ Նէ. ի. ե։
† Մատ. ժբ. ժ։ Մարկ. ե. ե։ Գէ. ե. ե։ ժգ. ե։
- Ելեալ դիշերաւորեալներ։
† Գէ. ժգ. ե։
? Գէ. ժբ. ե։
÷ Մատ. ի. ժե։ Մարկ. ե. ձ։ Ղկ. ի. ձ։
= Մատ. ժգ. ի։ Մարկ. ե. ձ։ Ղկ. ի. ձ։
† Մատ. ի. ժե։ Մարկ. ե. ձ։ Ղկ. ի. ձ։ Յհ. ի. ի։
- Ելեալ դիշերաւորեալներ։
† Մատ. կր. ե։ Նե. ա. ե։
? Մատ. իբ. ժ։
÷ Մատ. իբ. ժ։ Գէ. ե. ձ։
= Ելեալ դիշերաւորեալներ։
† Մատ. կր. ե։ Նե. ա. ե։
? Մատ. իբ. ժ։
÷ Գէ. ե. ձ։
= Ելեալ դիշերաւորեալներ։
† Մատ. կր. ե։ Նե. ա. ե։
? Մատ. իբ. ժ։
÷ Գէ. ե. ձ։
= Ելեալ դիշերաւորեալներ։

26 չեմ ճանչնար ուսկից էք։ Ամառտնե՛ր պիտի սկսիք ըսել, Մենք քու առջեդ կերանք ու խմեցինք, և դուն մեր փողոցներուն մէ-
27 ջը ուսուցուցիր։ Եւ անիկա պիտի ըսէ, Ձեզ զի կ՚ըսեմ, Ձեզ չեմ ճանչնար ուսկից էք, Հեռացէ՛ք ինձմէ բոլոր անիրաւութիւն
28 գործողնե՛րդ։ Հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճտել, երբոր տեսնէք Աբրահամ ու Իսահակ և Յակոբ ու բոլոր մարգարէները Աստուծոյ Թագաւորութեանը մէջ,
29 ու ձեզ դուրս հանած։ Եւ պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն և հիւսիսէն ու հարաւէն, ու պիտի բազմին Աստուծոյ Թագա-
30 ւորութեանը մէջ։ Եւ ահա կան յետիններ՝ որ առաջիններ պիտի ըլլան, ու կան առաջիններ՝ որ յետիններ պիտի ըլլան։
31 Նոյն օրը մէկ քանի փարիսեցիներ եկան ու բսին անոր, Ելիր ու գնա ասկէ, ինչու որ
32 Հերովդէս քեզ սպաննել կ՚ուզէ։ Եւ ինքը բսաւ անոնց, Գացէք, ան աղուէսին բսէք, Ահա ես դևեր կը հանեմ ու բժշկութիւններ կը կատարեմ այսօր և վաղը, ու երրորդ օրը
33 պիտի կատարեմ։ Սիայն թէ պէտք է որ այսօր ու վաղը և մէկալ օրը պտրտիմ, վասն զի կարելի չէ որ մարգարէ մը երուսաղէմէն
34 դուրս կորսուի։ Ով երուսաղէմ, երուսաղէմ, որ մարգարէները կը սպաննէիր, ու քեզի խրկուածները կը քարկոծէիր, քանի անգամ քու զաւակներդ ժողվել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձագերը թևերուն տակը կ՚ժողվէ, ու դուք չուզեցիք։
35 Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ։ Վասն ձեզի կ՚ըսեմ, որ ալ զիս պիտի չտեսնէք, մինչև գայ ան ժամանակը որ պիտի բսէք, Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ։

ԳԼ. ԻԳ

1 Եւ եղաւ որ երբ ինքը շաբաթի օր մը փարիսեցւոց գլխաւորներուն մէկուն տունը մը-
տաւ հաց ուտելու, ու անոնք անոր կը ապա-
2 սէին։ Եւ ահա հոն ջրգռնեալ մարդ մը կար
3 իր առջևը։ Եւ Յիսուս պատասխան առաւ՝ ու խօսեցաւ օրինականներուն ու փարիսեցի-
ներուն բսելով, Արժա՞ն է շաբաթի օրը բժշ-
4 կել։ Անոնք ալ լուռ կեցան։ Եւ ինքը բռնե-

1 Մտա · կ · ցց · իւ · մա · ի · ոգ։
2 Մտա · ը · ու ·
3 Մտա · ամ · ի · ա · ի · ոգ։
4 Ցոյ · գ · ա · Մտա · իւ · ա ·
5 Մտա · ը · ու · ամ · ոգ։
6 Ցոյ · կ · ի · ը · ոգ։
7 Մտա · ի · ոգ։
8 Մտա · իգ · ի · ոգ։
9 Ղկ · իչ · ցա · ցը ·

Ցոյ · կամ · ի · ա · ոգ։
Դառ · մ · ցէ · Մկր · գ · ոգ։
Ցոյ · ամը · ի · ոգ։
Մտա · իս · ա ·
Մտա · ժա · ու · Գլ ·

ամ · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Մտա · իս · ա ·
Մտա · ժա · ու · Գլ ·

5 նեց զանիկա, բժշկեց ու ճամբեց։ Եւ պատասխան տալով բսաւ անոնց, Ձեզմէ որուն էշը կամ եզը հորը իյնալու ըլլայ, ու չհա-
6 նի մը չհանէր անիկա շաբաթի օրը։ Եւ ասոր բնաւ չկրցան անոր պատասխան տալ։
7 Ասակ մը պրսցնց ան հրաւիրուած մարգարէ, երբոր տեսաւ թէ ինչպէս առաջին բազ-
8 մոցները կ՚ընտրէին, ու բսաւ անոնց, երբոր մէկ մը հարսնիքի հրաւիրես, առաջին բազմոցին վրայ մի նստիր. չըլլայ որ քեզմէ աւելի պատուական մէկն ըլլայ հրաւիրուած քո-
9 յդ անկէ. Եւ ան որ քեզ ու անիկա հրաւիրեց, գայ քեզի, Ասոր տեղ տուր, և անկէ ետև ամօթով յետին տեղը բռնել։
10 Հապա երբոր հրաւիրես, գնա յետին տեղը նստէ. որ երբ քեզ հրաւիրողը գայ քեզի բսէ, Բարեկամ, վեր հրամիր. անոնտն քու հետդ նստողներուն առջևը քեզի փառք կ՚ըլ-
11 լայ։ Վասն զի ամէն ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի. և ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ։
12 Ան ալ ինքը հրաւիրողին ալ բսաւ, երբոր ճաշ կամ ընթրիք կ՚ընես, մի կանչեր քու բարեկամներդ, ոչ ալ քու եղբայրներդ, և ոչ քու ազգականներդ, ու ոչ ան հարուստ դրացի-
ներդ, որ չըլլայ թէ անոնք ալ փոխարէնը քեզ
13 հրաւիրեն, ու քեզի հատուցում ըլլայ։ Հապա երբոր հացկերոյթ կ՚ընես, աղքատներ, պա-
14 կասուորներ, կաղեր ու կոյրեր հրաւիրէ. Եւ երանելի պիտի ըլլաս, ինչու որ անոնք չունին կրնար փոխարէնը քեզի հատուցանել. քանզի արդարներուն յարութիւնն առած ատենը փո-
խարէնը քեզի պիտի հատուցուի։
15 Եւ անոնց նստողներէն մէկը երբոր լսեց ասոնք բսաւ անոր, Երանի անոր որ Աստուծոյ Թագաւորութեանը մէջ հաց պիտի ուտէ։
16 Ան ինքը բսաւ անոր, Մէկ մարդ մը մեծ ընթ-
17 րիք ըրաւ ու շատ մարդիկ հրաւիրեց։ Եւ ընթրիքին ատենը խրկեց իր ծառան, որ հրա-
վիրուածներըն կանչէ ըսելշ, եկէք, ինչու որ
18 արդէն ամէն բան պատրաստ է։ Եւ ամէնքը մէկէն սկսան ետ քաշուիլ։ առջինը անոր բսաւ, Ես արտ մը ծախու առի, ու պէտք է որ ել-
լեմ անոնիկ անիկա. կ՚ազաչեմ քեզի՝ զիս հրա-
19 ժարուած անկէ։ Եւ միւսը բսաւ, Ես զոյգ եզ ծախու առի, ու կ՚երթամ որ անոնք փոր-
ձեմ. կ՚ազաչեմ քեզի՝ զիս հրաժարուած ան-
20 կէ։ Եւ միւսը բսաւ, Կնիկ առի, ու անոր հա-
21 մար չեմ կրնար գալ։ Եւ ան ծառան եկաւ ու իր տիրոջը պատմեց ասոնք բաները. անտունը բարկացաւ տանուտէրը ու բսաւ իր ծառային, Շուտով քաղաքին հրապարակներըն ու փողոց-

ամ · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Մտա · իս · ա ·
Մտա · ժա · ու · Գլ ·

15 ·
Ան · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Մտա · իս · ա ·
Մտա · ժա · ու · Գլ ·

Ցոյ · գ · ա · Գնա ·
ա · ի ·
Ղկ · ը · ոգ։
Ցոյ · ամ · ի · ոգ։
Մտա · իս · ա ·
Ան · ոգ։

Նեերը եղիր, և ապրասներըդ ու պահապաւոր-
22 Նեերը և կապերը ու կոյրերը հոս մնացուր։ Ուր-
ուան ալ լսաւ, ձեր, եղաւ ինչ որ հրամայեց-
23 ցիր։ ու տեսիւնն ունէր կոյս։ Եւ ուերը լսաւ
Յաւսիէն, էլիր ճամբաներըդ ու ցանկերը, և
ստիպէ՛ մտնել հոս մնալու, որ տունս լե-
24 ցուի։ Քանզի կ՛ըսեմ ձեզի Որ ան հրաւի-
րուածներէն մէկն ալ իմ ընթրիքիս համը պիտի
չառնէ։

25 Ու իր հետը շատ ժողովուրդներ կ՚երթա-
26 յին։ և դառնալով անոնց ըսաւ, Ոթէ որ մէկը
ինձի կու գայ, Ոու չատներ իր հայրը և մայրը,
ու կինը և զաւակները, ու եղբայրները և
քոյրերը, Ոնաև իր կեանքն ալ, չկրնար իմ
27 աշակերտս ըլլալ։ ՈԵւ ով որ իր խաչը չվեր-
ցնիր ու իմ ետևէս գար, չկրնար իմ աշա-
28 կերտս ըլլալ։ Ովասն ձեզմէ ո՞վ աշտա-
րակ մը շինել ուզելով, առաջ չնստիր ու հա-
շիւ չընար ծախքը, թէ անոնց բաւնցընելու
29 նուագ ունի։ Որ չըլլայ թէ երբ հիմը
ձգէ ու չկրնայ բաւնցընել, բոլոր տեսնողները
30 սկսին անոնց ծաղր ընել, Ե՛ւ ըսել թէ Այս
մարդը սկսաւ շինել ու չկրցաւ բաւնցընել։
31 կամ թէ ո՞ր թագաւոր ուրիշ թագաւորի մը
հետ պատերազմելու երթալով, առաջ չնստիր
ու խորհիր, թէ արդեօք տասը հազա-
րով կրնայ գէմ կենալ անոր՝ որ քսան հա-
32 զարով իր վրայ կու գայ։ Հապա թէ չէ՝ քա-
նի որ անիկա հեռու է, դեսպան խրկելով
33 խաղաղութիւն կը խնդրէ։ Ա՛հա ասանկ ալ
ձեր միջէն ամէն մէկը թէ որ իր բոլոր առա-
ջաւածքէն ետ չկենայ, չկրնար իմ աշակերտս
34 ըլլալ։ Ոաղը ապէկ բան է. բայց թէ որ
աղը իր համը կորսընցնէ՝ ինչո՞վ պիտի հա-
35 մեհատ։ Ոոչ հողին ու ոչ թրիքին տեղ օգտա-
կար կ՚ըլլայ, հապա անիկա դուրս կը նետուի։
Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ։

ԳԼ· ԺԵ

1 Ա Աղբեանց պրաբէն։ 2 կորսուած գրաքն 11 և անառակ որ.
գիքն առաքելքը։

1 Եւ բոլոր մեղաւորները ու մեզաւորները
2 անոր կը մտնէին իրմէն լսելու համար։ Եւ
փարիսեցիները ու գպիրները տրտունջ կ՚ընէին
ու կ՚ըսէին, Ա՛նիկա մեզաւորները կ՚ընդունի,
Ոու անոնց հետ կ՚ուտէ։

3 Եւ անոնց ասոր առակը խօսեցաւ անոնց՝ ը-
4 սելով, ՈՁեզմէ ո՞վ է ան մարդը՝ որ հարիւր
ոչխար ունենայ, և անոնցմէ մէկը որ կորսը-
ցընէ, իննսունինգը չ՚ձգեր անապատին մէջ
ու ան կորսուածին ետևէն երթար, մինչև որ
5 զանիկա գտնէ։ Ոու երբոր կը գտնէ՝ ուրախա-

6 Նստով իր ուսերուն վրայ կը դնէ զանիկա, Ե՛ւ
տունը գալով՝ կը կանչէ բարեկամները ու գրա-
ցիները, ու անոնց կ՚ըսէ, Ո՚բարի եղէք ինծի
հետ, ինչու որ իմ Ոկորսուած ոչխարս գտայ։
7 Ձեզի կ՚ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի
ըլլայ երկինքը մէկ մեղաւորի մը համար որ կ՚ա-
պաշխարէ, Ոքան թէ իննսունինգ արդարա-
րու համար՝ որ անոնց ապաշխարութիւն պէտք
8 չէ։ Կամ թէ ո՞վ է ան կնիկը որ տասը դրամ
ունենայ, ու թէ որ դրամ մը կորսընցնէ՝ ճրագ
չ՚վառեր, ու տունը մէջ աւել գարներ և զգու-
9 շութեամբ փնտռեր, մինչև որ գտնէ։ Ո՚ւ երբ-
որ կը գտնէ՝ կը կանչէ բարեկամները ու գրա-
ցիները, և կ՚ըսէ, Ո՚բարի եղէք ինծի հետ,
ինչու որ իմ կորսընցուցած դրամս գտայ։
10 Ա՛նանկ ե՛ս ձեզի կ՚ըսեմ, ուրախութիւն կ՚ըլ-
լայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւը մէկ մե-
զաւորի մը համար որ կ՚ապաշխարէ։

11 Եւ ըսաւ, Մէկ մարդ մը երկու որդի ու-
12 նէր։ Ո՚ւ անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ, Հայր,
ինծի ասոցուած բաժինը տուր
ինծի. ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը։
13 Եւ շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր
բաներըդ ժողվեց ու հեռու երկիր մը գնաց,
և հոն անառակութեամբ ապրելով իր ունե-
14 ցածը փճացուց։ Ո՚ւ երբոր ամէնը հատցուց,
այն երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ, ու
15 ինքը սկսաւ չքաւոր ըլլալ։ Եւ գնաց ան
երկրին քաղաքացիներէն մէկուն քովը մնաւ,
ան ալ իր արտերը խրկից զանիկա խոզեր
16 արածելու համար։ Եւ կը փափաքէր խոզե-
րուն կերած եղինջները իր փորը լեցընելու,
17 ու մէկը չէր տար անոր։ Եւ ինքզինքին գա-
լով ըսաւ, Քանի բանուորներ կան իմ հօրս
տունը հացով լեցուած, ու ես հոս սովամահ
18 կը կորնչիմ։ Ելլեմ երթամ իմ հօրս, և ը-
սեմ անոր, Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու
19 քու առջեւդ, Եւ ալ արժանի չեմ քու որ-
դիդ կոչուելու. զիս քու վարձկաններուդ
20 մէկուն պէս ըրէ։ Ո՚ւ ելաւ իր հօրը եկաւ.
Ոև դեռ որ ինքը շատ հեռու էր, հայրը տե-
սաւ զանիկա ու գութը շարժեցաւ, և վա-
զելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համ-
21 բուրեց զանիկա։ Որդին ալ ըսաւ անոր,
Հայր, մեղանչեցի երկինքի դէմ ու Ոքու առ-
ջեւդ, և ալ արժանի չեմ քու որդիդ կոչուե-
22 լու։ Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն, Հա-
նեցէք առաջին պատմուճանը ու հագցուցէք
անոր, և մատանի դրէք անոր ձեռքը, ու
23 կոշիկներ՝ անոր ոտքերը։ Եւ պարարտ զուա-
րակը բերէք՝ մորթեցէք, և ուտենք և ու-
24 րախ ըլլանք։ Ովասն որ աս իմ որդիս մեռած
էր ու ապրեցաւ, կորսուած էր ու գտնուե-

5 Ա Ասա· խա· 43· խը·
8· Գաբ· ժգ· 46·
6 բ Օր· ժգ· 6· լէ·
9· Աստ· ժ· 37·
7 Հասմ· բ· 13·
7 Ցաղա· ժբ· 11·
Աստ· ժգ· 44·
Աստ· բ· 34· Գէ·
բ· 23· բ Ջեմ· գ·
12·
8 Ընտ· իդ· 27·
Աստ· ե· 13· Աստ·
բ· 49·
—
= Աստ· բ· 18·
9 Գար· ժա· 3· Գաղ·
բ· 12·
10 Աստ· ժգ· 18·
11 = Գեն· բ· 19· 23·
Գէ· ե· 38·
Աստ· ժբ· 44·
Գաղ· բ· 58· Ելփես·
բ· 13· 17·
12 Աստ· դա· 4·
13 Հեր· 23· Ելփես·
բ· 1· ե· 14· Ցաղա·
գ· 1·

25 ցաւ. և սկսան ուրախ ըլլալ։ Ու անոր մէծ
որդին ագռաւին էր, ու երբոր կու գար ու
տանը մօտենար, նուագ ու պարեներուն ձայնը
26 լսեաւ։ Ձայներ լսեց, Ու ծառաներէն մէկը
իրեն կանչելով՝ կը հարցնէր թէ ատ ի՞նչ
27 է։ Անիկա ալ ըսաւ անոր, Եղբայրդ եկաւ,
ու հայրդ պարարտ զառապակը մորթեց, ընդու
28 որ ազէ առազէ ձեռք ձգեց զանիկա։ Իսկ ին
քը բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել.
ուստի իր հայրը դուրս ելլելով՝ կ'ապաչէր ա
29 նոր։ Եւ անիկա պատասխան ատոր ըսաւ
հօրը, Ահա այսչափ տարի է որ քեզի կը ծա
ռայեմ, ու բնաւ քու խօսքէդ դուրս չելայ,
ու ինծի երբէք մէկ ուլ մը չտուիր, որ իմ
բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի։
30 Բայց երբոր եկաւատ քու որդիդ՝ որ քու
առագաստդ բոկերու հետ կերաւ, անոր
31 մորթեցիր պարարտ զառապակը։ Եւ անիկա
ըսաւ անոր, Որդեակ, դուն միշտ իմ հետս
32 ես, ու իմ բոլոր ունեցածս քուկդ է. Պա
կասին պէտք էր ուրախ ըլլալ և խնդալ, Ին
չու որ ատ քու եղբայրդ մեռած էր ու ազ
ջընցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ։

ԳԼ. ԺԶ

1 Ընդհանուր առաքին առակը։ 14 Փրկուտոս կը յանդիմանէ զբ.
Ծանօթ փարիսեցոց կեղծաւորութիւնը։ 19 Հէնչառոր
մեծատունը և ազքատ Ղազարոսը։

1 Ան. իր աշակերտներուն ալ ըսաւ, Մէկ հա
րուստ մարդ մը կար, որ անուռնս մը ունէր,
և անոր վրայով գանգատ եղաւ իրեն՝ որպէս
2 թէ իր ունեցածը կը փճացընէ։ Ուստի կանչ
եց զանիկա ու ըսաւ անոր, Ի՞նչ է ատ որ
քեզի համար կը լսեմ. քու անուռնութեանդ
հաշիւը տուր, ինչու որ ալ չես կրնար անուռն
3 ոս ըլլալ։ Եւ անուռնը իր մտքին մէջ ըսաւ, Ի՞նչ
ընեմ, որովհետև իմ ուխտս անուռնութիւնը
ինծմէ կ'առնէ. Հողագործութիւնն չեմ կրնար
4 ընել, ու մուրալ կ'ամչնամ. Գիտեմ ինչ պիտի
ընեմ, որպէս զի երբոր ի՛ անուռնութենէս
5 մէրժուիմ՝ գիս իրենց առնեն ընդունին։ Եւ
իր տէրոջը պարտականներէն մէկիկ մէկիկ իրեն
կանչելով՝ ըսաւ առաջինին, Դուն իմ տէրոջս
6 պարտք ունիս։ Ան ալ ըսաւ, Հարիւր
մար ձէթ. և ըսաւ անոր, Բերդ առ ու
7 չուռազ նստէ յիսուն գրէ։ Յետոր մէուսին ըսաւ,
Դուն ալ ո՞րչափ պարտք ունիս. և անիկա
ըսաւ, Հարիւր քոր ցորեն. ու ըսաւ անոր,
8 Բերդ առ և ութսուն գրէ։ Ու տէրը անիրաւ
անուռնը գովեց, որ խելացութիւնով բրաւ.
վասն զի աս աշխարհիս որդիքը իրենց ցեղին
մէջ՝ լուսոյ որդիներէն աւելի խելացի են,
9 Եւ ես ալ ձեզի կ'ըսեմ՝ Անիրաւ մամոնայէն
ձեզի բարեկամներ ըրէք, որ երբ անիկա
պակսի, ձեզ յաւիտենական բնակարաններու
10 մէջ ընդունին։ Ան որ քիչ բանի մէջ հաւա
տարիմ է, շատի մէջ ալ հաւատարիմ է. և
ան որ քիչի մէջ անիրաւ է, շատի մէջ ալ
11 անիրաւ է. Ուստի եթէ որ անիրաւ մամոնայի
մէջ հաւատարիմ չեղաք, ճշմարիտ հարստու
12 թիւնը ո՞վ պիտի հաւատայ ձեզի։ Ու եթէ որ
օտարին բանին մէջ հաւատարիմ չեղաք, ձերը
13 ո՞վ պիտի տայ ձեզի։ Մէկ ծառայ մը չկրնար
երկու տէրերու ծառայութիւն ընել,
ինչու որ կամ մէկը պիտի ատէ և միսը սիրէ,
կամ միւսն պիտի յարի և միսը արհա
մարհէ. չէք կրնար ծառայել Աստուծոյ ու
մամոնայի։
14 Եւ փարիսեցիներն ալ որ արծաթասէր
էին, ատ ամէն բաներըը լսելով կը քամահրէին
15 զանիկա։ Եւ ըսաւ անոնց, Դուք էք որ մարդոց առջեւը ինքզինքնիդ կ'արդարացընէք,
բայց Աստուած գիտէ ձեր սիրտերը. ինչու
որ մարդոց մէջ բարձր եղածը Աստուծոյ
16 առջեւը պիղծ է։ Օրէնքը ու մարգարէները
մինչև Յովհաննէս էին. անկէ ետև Աստուծոյ
թագաւորութիւնը կը քարոզուի, և ամէն
17 մէկը անոր մէջը մտնելու կ'աշխատայ։ Դիւրին է որ երկինքը ու երկիրը անցնի, քան
18 թէ օրէնքէն մէկ նշանագիր մը իյնայ։ Ամէն
որ իր կնոջը արձակէ և ուրիշ մը առնէ՝ շնու
թիւն կ'ընէ, և ամէն որ երիկէ արձակուած
կնոջ մը առնէ՝ շնութիւն կ'ընէ։
19 Մէկ հարուստ մարդ մը կար, որ ծիրանի
ու բիսոզ կը հագնէր, և ամէն օր փառաւո
20 րապէս ուրախութիւն կ'ընէր։ Ու Ղազարոս
անուռնով ագռաւ մը կար վէրքերով լեցուն,
21 որ անոր դրանը առջեւը գրուած էր. Եւ կը
փափաքէր որ ան հարուստին սեղանէն իյնած
փշրանքներէն իր փորը լեցնէ. Նաև շուներն
22 ալ կու գային և անոր վէրքերը կը լզէին։ Ու
եղաւ որ ան ագռաւը մեռաւ, ու հրեշտակ
ները Աբրահամին գոգը տարին զանիկա. Հա
23 րուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ։ Եւ գժոխ
քին մէջը երբոր տանջանքի մէջ էր՝ իր աչ
քերը վերցնելով հեռուէն տեսաւ Աբրահամ
24 ու Ղազարոսը անոր գոգը հանգչող։ Եւ
ինքը ազաղակեց ու ըսաւ, Հայր Աբրահամ,
ողորմի ինծի ու խրկէ Ղազարոսը, որ իր մա
տին ծայրը ջուրը թաթխէ, ու զովացընէ իմ
լեզուս, ինչու որ ես այս բոցին մէջ կը տանջուիմ.
25 Եւ Աբրահամ ըսաւ, Որդեակ, յիշեցիր երբ,

ե Հմր. ու։
ը Գուն. գ. 37. Ա՛ա
գ. 13։ ԺԲ. 31։
Գլ. ժա. 41։ ա
Տիմ. գ. 17. 18. 19։
ը կորսուածին։
ժ Ամանաքին։
ի Ա՛ա. ի՛ա. 21։ Գլ.
ԺԲ. 17։
ի Ա՛ա. գ. 24։
ի Կամ ինչը պիտի մե
նայ։

ի Ա՛ա. ի՛ա. 14։
ղ Գլ. ժ. 29։
ի Ա՛ղ. ի. 9։
ձ ա՛ա քնաց. ԺԶ. 7։
ղ Ա՛ա. ի. 17. ժա.
18. 19. Գլ. ի. 29։
ճ Ա՛ղ. Ա՛ր. 28. 27։
Ես. ի՛ա. 3. ժա. 4։
Ա՛ա. ի. 18. ա
Գնա. ա. 25։
ն Ա՛ա. ի. 32. ԺԲ.
9. Ա՛ր. ժ. 31։
ա Կոր. ի. 10. 11։
ղ Ձ՛ա. ժգ. 12։
ո Ես. կգ. 24. Ա՛ր.
Բ. 43. ի՛ա։
պ Ծն. իա. 12. Գլ.
գ. 24։

որ գուն քու կնանդիդ տուներ քու բարիք-
ներդ առիր , նոյնպէս ալ Պատրաս՝ չարիքներ-
հետեւ անիկա [հոս] կը մխիթարուի , ու գուն կը
26 տանջուիս : Եւ աս ամէն բաներէն՝ ի զատ՝ մեր
ու ձեր միջտեղը մեծ անդունդ մը կայ հաս-
տատած , ուստիկ որ ուզէ ձեզի անցնիլ ու
գալներդ չկրնան , ոչ ալ ուզէ մեզի [հոս]
27 Նէեզ անցնին : Ան ալ ըսաւ , Ուրեմն կ'աղաչեմ
քեզի , հայր , որ անիկա իմ հօրս տունը խրր-
28 կես , քանզի հինգ եղբայր ունիմ , որ նէեզ
անոնց վկայութիւն տայ , որ չերկայ թէ ա-
29 նոնք ալ աս չարչարանքին տեղը գան : Եւ
Աբրահամ ըսաւ անոր , Անոնք Մովսէսը ու
մարգարէները ունին , թող անոնց մտիկ ընեն :
30 Ան ալ ըսաւ , Չէ , հայր Աբրահամ , հապա թէ
որ մեռելներէն մէկը անոնց երթայ , պիտի
31 ապաշխարեն : Եւ անիկա ըսաւ անոր , Թէ որ
Մովսէսին ու մարգարէներուն մտիկ չեն ը-
ներ , ոչ ալ թէ որ մեռելներէն մէկը յարու-
թիւն առնելու երթայ , պիտի հաւնգուիս :

ԳԼ· ԺԹ

1 Ե ըսաւ իր աշակերտներուն , Անկարելի է
որ գայթակղութիւններ չգան , բայց վայ ա-
2 նոր , որուն ձեռքովը կու գան : Անոր աւելի
ազէկ է , որ անոր պարանոցէն խշտ ազացքի
քար մը կախուի , ու անիկա ծովը ձգուի ,
քան թէ աս պզտիկներէն մէկը գայթակղեցնէ :
3 Զգուշացէք ձեր անձերուն : Թէ որ քու եղ-
բայրդ քեզի դէմ մեզանչէ , յանդիմանէ զա-
4 նիկա , ու թէ որ ապաշխարէ , ներէ անոր : Եւ
թէ որ օրը եօթը անգամ քեզի դէմ մեզանչէ՝
ու օրը եօթը անգամ դառնայ քեզի ու ըսէ ,
Կ'ապաշխարեմ , ներեցս անոր :
5 Եւ առաքեալները ըսին Տէրոջը , Մեր հա-
6 ւատքը աւելցուր : Ինչ Տէրը ըսաւ , Թէ որ
մանանեխի հատի չափ հաւատք ունենայիք ,
աս թմենիին կրնայիք ըսել , Ամմատքի խրր-
յուէ ու ծովուն մէջը տնկուէ , ան ալ պիտի
հնազանդէր ձեզի :
7 Բայց ձեզմէ ով է ան մարդը՝ որ ունենայ մէկ
երկրագործ կամ հովիւ ծառայ մը , որ անիկա
երթար ագարակէն դառն մտնէ , չուտուլ պրա-
8 նիլ : Մանր թէ Անոնիր անոր . Հապա չըսեր
անոր թէ Պատրաստուէ իմ ընթրիքս , ու գո-
տիդ կապած ինծի սպասաւորութիւն ըրէ ,
մինչև որ ես ուտեմ ու խմեմ . ու ետքը դուն
9 ալ կերթ ու խմէ : Միթէ չնորհակալ կ'ըլլայ
ան ծառային , իրեն հրամայուած բաները
10 կատարելուն համար . չեմ կարծեր : Նոյնպէս
ալ դուք երբոր բոլոր ձեզի հրամայուած բա-
ները ընէք , ըսէք թէ Մենք անպիտան ծա-
ռաներ ենք , քանզի ան որ պարտական էինք
ընելու՝ ըրինք :
11 Եւ եղաւ որ երբ ինքը Երուսաղէմ կ'եր-
թար , Սամարիայի և Գալիլեայի միջտեղէն
12 կ'անցնէր : Ու երբոր մէկ գիւղ մը պիտի մտ-
նէր , տասը բորոտ մարդիկ հանդիպեցան
13 անոր , որոնք հեռուն կայնեցան , Եւ ձայ-
ներնին վերացուցին ու ըսին , Յիսուս վարդա-
14 պետ , ողորմի մեզի : Եւ տեսնելով անոնց
ըսաւ , Գացէք դուք ձեզ քահանաներուն
ցուցուցէք . ու եղաւ որ երբ կ'երթային մտք-
15 բանեցան : Եւ անոնցմէ մէկը երբոր տեսաւ
թէ բժշկուեցաւ , նա դարձաւ ու մեծ ձայ-
16 նով փառք կու տար Աստուծոյ . Ու երեսը
վրայ անոր ատքը իյնալով՝ շնորհակալ կ'ըլ-
17 լար անոր . և ինքը Սամարացի էր : Պատաս-
խանի առաւ Յիսուս ու ըսաւ , Չէ՞ որ տասն
18 ալ մաքրուեցան , իսկ ան ինը ո՞ր են . Ա-
օտարազգիէն ի զատ դարձեալ չգտնուեցաւ՞ որ
19 դառնալով Աստուծոյ փառք տայ : Եւ ը-
սաւ անոր , Ելիր գնա , քու հաւատքդ քեզ
բժշկեց :
20 Ու երբոր փարիսեցիներէն հրին հարցուցին՝
թէ Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի
գայ , պատասխանի առաւ անոնց ու ըսաւ ,
Աստուծոյ թագաւորութիւնը դիտումով եկած
21 բաներով չգայ . Ու պիտի չըսեն թէ Ահա
հոս է , կամ Ահա հոն , ընդունի որ ահա Աստու-
ծոյ թագաւորութիւնը ձեր ներսի կողմն է :
22 Աշակերտներուն ալ ըսաւ . Օրեր պիտի
գան որ դուք մէկ Որդւոյ մարդոյ օրերուն մէկը
տեսնելու պիտի փափաքիք , ու պիտի չտես-
23 նէք : Եւ ըսեն ձեզի թէ Ահա հոս է ,
կամ Ահա հոն , մի երթաք ու մի հետեւիք :
24 Քանզի որպէս որ փայլակը երկինքի
տակը մէկ կողմէն փայլատակելով՝ միւս երկ-
նից տակը միւս կողմը կը լուսաւորէ , նոյն-
պէս ալ պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ իր օրը :
25 Բայց առաջ պիտի պէտք է որ քաշէ շատ չարչարանքներ կրէ ու մերժուի այս ազ-
26 գէն : Եւ ինչպէս որ Նոյի օրերը եղաւ , անոնց
27 պիտի ըլլայ Որդւոյ մարդոյ օրերն ալ : Կ'ուտէին , կը խմէին , կին կ'առնէին , երկան կը

---

1 Ես · ը · ՝ · ի ·
ա · Ըստ · ը · ՝ · ի ·
ե · Ըստ · ժ · ՝ · ի ·
ժե · ա ·
4 Ըստ · ժը · ա · ՝ ·
ը · Ըստ · ժը · ՝ · ի ·
ի · Ըստ · ժը · ՝ · ի ·
ժե

ապուէին , մինչև ան օրը որ Նոյ տապանը մտաւ , և ջրհեղեղը եկաւ ու ամէնը կտրուն-
28 ցուց ։ Նմանապէս՝ ինչպէս որ Ղովտին օրերը եղաւ , կ՚ուտէին , կը խմէին , ծախու կ՚առ-
29 նէին , կը ծախէին , կը տնկէին , կը չինէին ։ Բայց ան օրը որ Ղովտ Սոդոմէն ելաւ , երկինքէն կրակ ու ծծումբ տեղաց և բոլորն ալ կոր-
30 սընցուց ։ Նոյնպէս պիտի ըլլայ ան օրը՝ որուն
31 մէջ Որդին մարդոյ պիտի յայտնուի ։ Ան օրը՝ ան որ տանիքին վրայ է և իր կարասիները տանը մէջ , թող վար չիջնէ զանոնք առնելու ։ և ան որ արտին մէջն է՝ նոյնպէս թող
32 նա չդառնայ ։ Յիշեցէք Լոտին
33 կինիկը ։ Ով որ իր կեանքը կ՚ուզէ ապրեցընել՝ պիտի կորընչցնէ զանիկա ։ և ով որ կը
34 կորընչցընէ՝ պիտի ապրեցընէ զանիկա ։ Ձեզի կ՚ըսեմ , Ան գիշերը երկու հոգի մէկ անկողնի մէջ կըլլան , մէկը պիտի առնուի ու
35 միւսը ձգուի ։ Երկու կինիկ մէկտեղ ալիալու կըլլան , մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի ։ Երկու հոգի արտի մէջ կըլլան , մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի ։
36
37 ասոր դէմ ըսաւ ։ Ան ալ բաւ անոնց , որ մեռելին կոյ , հոն պիտի ժողովուին արծիւները ։

ԳԼ ԺԸ

1 Անոնց առակ մին ալ բաւ ու բանիս վրայով՝ թէ պէտք է ամէն ատեն ալօթք ը-
2 նել ու չձանձրանալ ։ Բաւ , Մէկ գատաւոր մը կար քաղաքի մը մէջ , որ Աստուծմէ չէր
3 վախնար ու մարդէ չէր ամչնար ։ Եւ նոյն քաղաքին մէջ այրի մը կար , որ անոր կու գար ու կ՚ըսէր , Իրաւունք ըրէ ինծի — ըսաւ
4 դիմ իմ ոսոխիս ։ Եւ անիկա ժամանակ մը չէր ուզեր ։ բայց ետքը բաւ իր մտքին մէջ , Թէ և Աստուծմէ չեմ վախնար ու
5 մարդէ չեմ ամչնար , Գանէ ասոր այրիին պիտ ձանձրացնելուն համար իրեն իրաւունք ընեմ , որ չգայ ամէն ատեն պիտ խափանձէ ։
6 Եւ Տէրը բաւ , Լսեցէք՝ անիրաւ դատաւորը
7 ինչ կ՚ըսէ ։ Հապա Աստուած իր ընտրեալները իրաւունք պիտի չընէ՞ , որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ՚աղաղակեն , թէև երկայնամտու-
8 ալ ըլլայ անոնց վրայ ։ Ձեզի կ՚ըսեմ , որ շուտով անոնց իրաւունք պիտի ընէ ։ բայց Որդին մարդոյ երբոր գայ՝ արդեօք հաւատք պիտի գտնէ՞ երկրի վրայ ։
9 Եւ ոմանք որոնք իրենց անձերուն վրայ կը վստահանային թէ արդար են , և ուրիշները կ՚անարգէին , ան առակը բաւ ։
10 Երկու մարդ եղան տաճարը ալօթք ընելու ,
11 մէկը փարիսեցի ու միսը հարկատու ։ Փարիսեցին կայներ էր , ու առանձին այսպէս ալօթք կ՚ընէր ։ Ով Աստուած , կը շնորհակալ եմ քեզմէ , որ ուրիշ մարդոց պէս չեմ՝ յափշտակող , անիրաւ , շնացող , և կամ ան
12 մաքսաւորին պէս ։ Երկու անգամ ծոմ կը պահեմ , ու բոլոր առոցածիս
13 տասանորդը կու տամ ։ Եւ մաքսաւորը հեռուն կայներ էր , ու չէր ուզեր աչքն ալ երկինքը վերցընել , հապա իր կուրծքը ծեծելով կ՚ըսէր , Աստուած , ողորմի ինծի մեղաւո-
14 րիս ։ Ձեզի կ՚ըսեմ թէ ասիկա ան միսն էր ուրիշին արդարացած իր տունը իջաւ ։ Վասն զի ով որ իր անձը կը բարձրացընէ՝ պիտի խոնարհի , և ով որ իր անձը կը խոնարհեցընէ՝ պիտի բարձրանայ ։
15 Մանր ազաք ալ բերին իրեն , որ անոնց դպչի ։ ու աշակերտները անոնց կը յանդիմանէին ։
16 Բայց Յիսուս անոնք իրեն կանչելով բաւ , Թող տուէք մանր ազգը որ ինծի գան , և մի արգիլէք անոնք , Քանզի որ Աստուծոյ Թագաւորութիւնը ա-
17 նոնցինը է ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի , Ով որ Աստուծոյ Թագաւորութիւնը պզտիկ ազգի պէս չընդունի , բնաւ պիտի չմտնէ անոր մէջը ։
18 Եւ մէկ իշխան մը հարցուց անոր ու բաւ , Բարի վարդապետ , ի՞նչ գործ գործեմ որ յա-
19 ւիտենական կեանքը ժառանգեմ ։ Եւ Յիսուս բաւ անոր , Ինչո՞ւ զիս բարի կ՚անուանես ։ մէկէն՝ զատ բարի չկայ , ոչ Աստուած ։
20 Պատուիրանքները գիտես ։ Շնութիւն մի ընիր , Սպանութիւն մի ընիր , Գողութիւն մի ընիր , Սուտ վկայութիւն մի ընիր , Քու հայ-
21 րդ ու մայրդ պատուէ ։ Ան ալ բաւ , Ամէնը ամէնէն մանկութենէս իվեր պահեր եմ ։
22 Ա՛ս լսելով Յիսուս բաւ անոր , Մէկ բան մընի ալ պակաս է քեզի ։ Քու բոլոր ունեցածդ ծախէ՝ և ազքատներուն բաշխէ , ու երկինքը գանձ պիտի ունենաս , և եկո՛ւր իմ հետևէս ։
23 Անիկա երբոր ասա բաներ լսեց՝ արամեցաւ , ին-
24 չու որ շատ հարուստ էր ։ Եւ Յիսուս երբոր

ա Գն. ԺԲ ։
բ Գն. ԺԲ. 10. 24 ։
գ Ը Ելս. ա. 7 ։
դ Մատ. խդ. 17 ։ Մարկ. Ժգ. 13 ։
ե Գն. ԺԲ. 16 ։
զ Մատ. Ժ. 39. Ժգ. 25. Մարկ. Ը. 35 ։
է Գն. Ժ. 5. խա. 1 ։
ը Գն. Ժ. 24 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Մատ. խդ. 40. 41 ։ Ա Ընթ. գ. 16 ։
թ Ցաքհ. լԲ. 39 ։ Մատ. խդ. 23 ։
ժ Գն. Ժ. 26 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժա Գն. Ժ. 26 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ժթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
ի Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իա Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
իթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լա Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խա Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լա Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
լթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խա Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խբ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խգ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խդ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խե Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խզ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խէ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խը Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։
խթ Գն. Ժ. 28 ։ Ցաքհ. Ժբ. 13 ։ Ա Ընթ. գ. 16 ։

ամէնից արտասած տեսաւ , բաւ , Ո՛րչափ դժուար է անոնց՝ որ հարստութիւն ունին ,
25 Աստուծոյ թագաւորութիւնը մտնել ։ Քանզի դիւրին է որ ուղտը անցնի ծակէն անցնի , քան թէ հարուստը Աստուծոյ թագաւոր-
26 թիւնը մտնէ ։ Եւ անոնք որ լսեցին կ'բսէին ,
27 Ա՛ւ ո՞վ կրնայ փրկուիլ ։ Եւ ինքը բաւ , Որ-
դոց կարելի անկարելի եղած բաներըը Ա-
28 աստուծոյ կարելի են ։ Պետրոս բաւ , Ահա մենք ամէն բան թողուցինք և
29 քեզ հետևեցանք ։ Եւ անոնց բաւ անոնց , Ճշմարիտ կ'բսեմ ձեզի Թէ Որդ մը չկայ՝ որ թողուց տուն , կամ ծնողք , կամ եղբայր-
30 ներ , կամ կին , կամ որդիներ՝ Աստուծոյ թա-
գաւորութեանը համար ,
31 Որ պիտի չառնէ բազմապատիկ աս աստենս մէջ , և գալու աշ-
խարհին մէջ յաւիտենական կեանքը ։
Եւ առաւ երկուքը իր քովը առնելով՝ ը-
32 սաւ անոնց , Ահա մենք կերուսաղէմ կ'երթանք , և մարգարէներուն ձեռքովը Որդւոյ մար-
դոյ համար բոլոր գրուածները պիտի կա-
33 տարուին ։ Ընչու որ հեթանոսներուն պիտի մատնուի , ու ծաղր պիտի բլլայ և պիտի նա-
34 խատուի , ու պիտի թքնեն անոր , Եւ պիտի ծեծեն ու սպաննեն անիկա , և երրորդ օրը յարութիւն պիտի առնէ ։ Բայց անոնք աս բաներէն մէկին ալ չհասկըցան ։ ու աս խօսքը անոնցմէ ծածկուած էր , և բաած բաները չէ-
35 ին խմնար ։
Ա՛ւ եղաւ որ երբ ինքը երիքովին կը մո-
տենար , կոյր մը ճամբուն քովը նստեր էր մու-
36 թալ ։ Երբոր լսեց բազմութիւնը անցնիլը ,
37 հարցուց թէ ի՞նչ է ան ։ Եւ իրեն ըսին թէ
38 Յիսուս Նազովրեցին կ'անցնի ։ Ուստի սպա-
ղակեց ու բաւ , Յիսուս՝ Որդի Դաւթի , ողոր-
39 մէ ինծի ։ Եւ անոնք որ առջևէն կ'երթային՝ կը յանդիմանէին զանիկա , որ լռէ ։ Բայց ա-
նիկա՝ ալ աւելի կ'սպասակէր , Որդի Դաւթի ,
40 ողորմէ ինծի ։ Եւ Յիսուս կանգ առնելով հրամայեց բերել որ զանիկա իրեն բերին , ու
երբոր անիկա մօտեցաւ , հարցուց անոր ու
41 բաւ , Ի՞նչ կ'ուզես որ քեզի բնեմ ։ անիկա
42 ալ բաւ , Տէր , որ աչքերս բացուին ։ Եւ Յի-
սուս բաւ անոր , Թող բացուին ։ Քու հա-
43 ւատքդ քեզ բժշկեց ։ Եւ իսկոյն անոր աչ-
քերը բացուեցան , ու անոր հետևէն կ'երթար , ԵՒ փառք կու տար Աստուծոյ ։ բոլոր ժողո-
վուրդն ալ տեսնելով՝ գԱստուած կը գովա-
բանէին ։

ԳԼ ։ ԺԹ

1 Ջերիքով Հերոսագործ ։ 11 Տասը Ասորի տասներ ։ 13 Փրխասո-
իչու վրայ հնծած ։ փառաւոր հանդէսով երթասլիմ կը հըս-
նէ ։ 41 քաղաքին վրայ կ'պզտայ ։ 43 տասներին գործը չէ հաներ
գործերը և փառաւորները ։ 47 ամէն որ տասներին մէջ կը տար-
փչեր ։ իսկ հրեից գլխաւորները կ'սպասեին կործանութեան ըս-
կո ։ բայց ժողովուրդն կը վախնար ։

1 Եւ մտնելով երիքովի միջնէն կ'անցնէր ։ (2) Եւ
ահա մարդ մը կար՝ անունը Զաքէոս բաւած ,
որ մեծատուներէ էր ու հարստատ մէկ մըն էր ։
3 Եւ կ'ուզէր տեսնել թէ ով է Յիսուս , ու
բազմութենէն չէր կրնար , ինչու որ հասակով
4 կարճ էր ։ Եւ առաջ վազեց ու ժանտաթզե-
նիի մը վրայ ելաւ , որ զանիկա տեսնէ ։ ին-
5 չու որ անկէ պիտի անցնէր ։ Ու երբոր Յիսուս
ան տեղը եկաւ , վեր նայելով զանիկա տե-
սաւ , ու բաւ անոր ։ Զաքէոս , շուտ բրէ ,
տակէն վար իջիր , ինչու որ պէտք է ինծի այս-
6 օր քու տունդ կենալ ։ Եւ արագութեամբ վար
իջաւ , և ուրախութեամբ ընդունեց զանիկա ։
7 Երբոր ամէնն ալ տեսան , կը տրտնջէին ու կ'բ-
սէին ։ Թէ Մեղաւոր մարդու քով մտաւ իջևա-
8 նելու ։ Եւ Զաքէոս կայնեցաւ ու բաւ
Տէրոջը ։ Տէր , ահա իմ ունեցածիս կէսը ա-
ղքատներուն կու տամ , Ու թէ որ զրպարտու-
թեամբ մէկու մը գրկանք բրած եմ , չորեք-
9 պատիկ կը հատուցանեմ անոր ։ Եւ Յիսուս ը-
սաւ անոր , Այսօր աս տանը փրկութիւն ե-
կաւ ։ Ընչու որ ասիկա ալ Աբրահամի որդի
10 է ։ Վասն զի Որդի մարդոյ եկաւ որ կոր-
ուսածը փնտռէ ու փրկէ ։
11 Ու երբոր անոնք աս բաները կը լսէին , ա-
ւելի մէկ մը բաւ իր երուսաղէմ մօտենա-
լուն համար , Ու անոնց անանկ կարծելուն
համար թէ շուտ մը Աստուծոյ թագաւոր-
12 թիւնը պիտի յայտնուի ։ Ընաւ բաւ , Մէկ
ազնուական մարդ մը հեռու երկիր մը գնաց
իրեն թագաւորութիւն առնելու և դառնա-
13 լու ։ Եւ իր տասը ծառաները կանչելով՝ տա-
ւ անոնց տասը անուոց , ու բաւ անոնց , Գա-
14 նեցուցէք մինչև որ ես գամ ։ Եւ անոր քաղաքացիները զանիկա կ'ատէին , ու դես-
պաններ խրկեցին անոր հետևէն , բսելով թէ
Չենք ուզեր որ ասիկա մեր վրայ թագաւո-
15 րութիւն բնէ ։ Ու եղաւ որ երբ անիկա թա-
գաւորութիւնը առնելով հոն դարձաւ , իրեն
կանչել տուաւ ան ծառաները որուն որ բա-
տակը տուեր էր , որ գիտնայ թէ ով ինչ շահ
16 բրած է ։ Եւ առջինը եկաւ ու բաւ , Տէր ,
17 քու մնասդ տասը մնաս շահ բրաւ ։ Եւ բաւ
անոր , Ապրիս , բարի ծառայ , որովհետև

4 Ընտիր · ժա · 33 ։ Աստ · ժԲ · 33 ։ Աստ · ժ · 35 ։
5 Երեմ · իբ · 17 ։ Զաք · ը · 8 · Աստ · ժԲ · 26 · Գլ · ա · 37 ։
7 Աստ · ժԲ · 47 ։
8 ը Օբ · լգ · 3 ։ Ճառ · Խբ · 19 ։ Աստ · ժգ · 21 · ժԼ · 21 · Խ · 37 · Աստ · ժ · 38 ։
9 Ա՛ստ · Խբ · Խա · ծգ · Աստ · Խե · 2 · Գլ · ա · 5 ։
10 Ղկ · ժ · 16 ։
11 Գլ · ժԼ · 19 ։
12 Գլ · Խ · 36 · Գաղ · գ · 21 · ժա · 18 · Աստ · Բ · 11 · Գլ · Խ · 30 ։
13 Ա՛ստ · ժգ · 21 ։
14 Գլ · գ · 14 ։
15 Ես · Խբ · 3 · Ա՛ստ · ժբ · 3 · ը Ա՛ստ · ժԼ · 6 ։
17 Հռ · ժգ · 2 · Ա՛ստ · ժբ · 21 ։
Ա՛ստ · ժբ · 21 · Տ՛ես Ա՛ստ · ժ · 3 · ժԼ · 24 ։
Գաղ · ա · 8 ։
Ա՛ստ · ԺԼ · 34 ։
Ա՛ստ · ժգ · 34 ։
Ճառ · ա · 33 ։

քիչ բաներին մէջ ւհաւատարիմ եղար , տասը
18 քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր : Ու
երկրորդը եկաւ ու ըսաւ , Տէր , քու մնաց
19 հինգ մնաս շահ բրաւ : Եւ ըսաւ անոր , Դուն ալ
20 ալ հինգ քաղաքի վրայ եղիր : Եւ ուրիշ մը
եկաւ ու ըսաւ , Տէր , ահա քու մնաց որ
21 թաշկինակի մէջ ծրարած կը պահէի . ւՔանի
դի կը վախնայի քեզմէ , ւթունդ որ դուն խիստ
մարդ մըն ես , չդրած բանդ կ'առնես ու
22 չհերմանածդ կը հնձես : Եւ անոր ըսաւ ա-
նոր , ւԱրդ բերնէդ քեզ պիտի դատեմ , ով
չար ծառայ : ւԳիտէիր որ ես խիստ մարդ
մըն եմ , չդրած բանս կ'առնեմ ու չհեր-
23 մանածս կը հնձեմ . Եւ ինչո՞ւ հարիար իմ ըս-
տակս ափոխաւորներուն չտուիր , որ ես ե-
24 կած ատենս շահովը առնէի անիկա : Եւ հոն
կայնողներուն ըսաւ , Առէք ատկէ մնաց ու
25 տուէք անոր որ տասը մնաս ունի : (Եւ ըսին
26 իրեն , Տէր , անիկա տասը մնաս ունի :) ւԱն-
դի կ'ըսեմ ձեզի , Թէ ւամէն ունեցողին պիտի
տրուի . և չունեցողին ունեցածն ալ անկէ
27 պիտի առնուի : Բայց այն իմ թշնամիներս
որոնք չկին ուզեր որ իրենց վրայ թագաւոր
ըլլամ , հոս բերէք ու իմ առջեւս ազատնել
28 ցի՛ք : Եւ ասը ըսելովը իրեն ւկանաչ
դնաց երուսաղէմ երթալու :
29 ւԱ՛ն եղաւ որ երբ Բեթփագէին ու Բեթա-
նիային մօտեցաւ՝ գետ՝ ի ան լեռը որ Ձիթե-
ղենաց լե կ'ըսուի , իր աշակերտներէն երկուքը
30 խրկեց , Եւ ըսաւ , Գացէք դէպի դիմացը եղած
գեղը . և անոր մէջ մտնելնուդ պէս պիտի
գտնէք կապուած աւանակ մը , որուն վրայ
բնաւ մարդ մը նստած չէ . արձրկեցէք անիկա
31 ու բերէք : Եւ թէ որ մէկը ձեզի հարցընէ թէ
ինչո՞ւ կ'արձրկէք , ասանկ ըսէք անոր , Թէ
32 Տէրոջը պէտք է : Երթալ գացին անոնք որ
խրկուեցան , ինչպէս որ իրենց պրուցեր էր՝
33 գտան : Ու երբոր աւանակը կ'արձրկէին , ա-
նոր տէրերը ըսին անոնց , ինչո՞ւ կ'արձրկէք
34 աւն աւանակը : Անոնք ալ ըսին , Տէրոջը պէտք
35 է : Եւ զանիկա Յիսուսին բերին , Ու իրենց
հանդերձները աւանակին վրայ ձգելով՝ Յի-
36 սուս անոր նստցուցին : ւԱ՛ն երբոր կ'երթար , իրենց
37 հանդերձները ճամբուն վրայ կը փուէին : Ու
երբոր ալ մօտեցաւ , և Ձիթենեաց լեռանը
գալ՝ ի վայրէն կ'իջնէր , աշակերտներուն բոլոր
բազմութիւնը սկսաւ ուրախութեամբ զՈ-
աստած արձակել բարձր ձայնով ան բոլոր հրաշք-
38 ներուն համար՝ որ տեսեր էին , Ու կ'ըսէին ,
ւՕրհնեալ է ան թագաւորը որ Տէրոջը անու-
նովը կու գայ . ւերկինքի մէջ խաղաղութիւն ,
39 ու փառք բարձրութեանց մէջ : Եւ բազմու-
թեանը մէջէն փարիսեցիներուն մէկ քանիները
ըսին անոր , Վարդապետ , ատ քու աշակերտ-
40 ներդ յանդիմանէ : Եւ անիկա պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց , Ձեզի կ'ըսեմ , Թէ որ
ատոնք լուռ կենան , ւքարերը պիտի ազա-
ղակեն :
41 Ու երբոր մօտեցաւ՝ քաղաքը տեսնելով
42 ւլացաւ անոր վրայ և ըսաւ , Գոնէ ատ քու
օրուանդ մէջ դիտնայիր քու խաղաղութիւնդ ,
43 բայց հիմա ծածկուեցաւ քու աչքերէդ , ին-
չու որ օրեր պիտի գան քու վրադ՝ որ թշ-
նամիներդ քու չորս կողդ պատնէշ պիտի
չինեն , ու քեզ պիտի պաշարեն , և ամէն կող-
44 մէ քեզ նեղը պիտի ձգեն . Ու հիւանդատակ
պիտի բնեն քեզ ու քու մէջդ եղած զաւակ-
ներդ , և քար քարի վրայ պիտի չթողուն քու
մէջդ , ւանոր համար որ չգիտցար քու այցելու-
թեան ժամանակդ :
45 ւԵւ տաճարը մտնելով՝ սկսաւ դուրս հա-
46 նել անոր մէջ ծախողները և գնողները . Եւ
ըսաւ անոնց , ւԳրուած է թէ իմ տունս ա-
ղօթքի տուն է , ւքայց դուք ասիկա աւազակ-
ներու որջ շինիք :
47 Եւ ամէն օր տաճարին մէջ կը սորվեցնէր .
Բայց քահանայապետները և դպիրները և
ժողովուրդին երէց աւրէնները կը փնտռէին
48 թէ սպանեն զանիկա , Ու բան մը չէին
կրնար գտնել թէ ինչ ընեն , ինչու որ բոլոր
ժողովուրդը անոր կախուեր էին մտիկ ընե-
լու :

Գ Լ · Ի

1 Փրկութեան իր իշխանութեան լուրովը կը պատրաստէ Յով-
հաննէսի ծնունդը հայրը մարգարէ : 8 Ընդլիի տատը : 21
Փրկութեան պատմութիւնը կ'սկսի տալը ի վեր : 27
Յովհաննէսի չինչ բանով ազգակիցները կը պատրաստուէին : 41
Փրկիչ Իշխան Դաւթի սերնդէն կ'ելլայ : 52 Իր աշխարհա-
ւորութեան կը պատրաստուի 23 տարի հետո :

1 ՈՒ եղաւ որ ան օրերուն մէկը՝ երբոր տա-
ճարին մէջ ժողովուրդին կը սորվեցնէր և
աւետարանը կը քարոզէր , քահանայապետ-
ները և դպիրները ծերերուն հետ մէկտեղ
2 վրայ հասան , Եւ անոր խօսեցան՝ ըսելով ,
Ըսուր մեզի՝ Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես
ատ բաներդ , կամ ո՞վ է ատ իշխանութիւնը
3 քեզի տուողը : Պատասխան տուաւ ու ըսաւ
անոնց , Ես ալ ձեզի բան մը հարցընեմ՝ և ը-
4 սէք ինծի . Յովհաննէսին մկրտութիւնը եր-
5 կինքէ՞ն էր թէ մարդոց ալէ : Եւ անոնք մէկտեղ

1 Ա Ա Ա

6 Նրին խորհեցան ու բսին, Թէ որ բանիւք երկինքն
պիտի բանայ, Հասցա ինչու չհաւատացիք
ատ. իսկ Թէ որ բանիւք Մարգոսիմ, բոլոր
ժողովուրդը մեզ պիտի քարկածեն. Վինչու որ
հաստատ համոզուած են Թէ Յովհաննէս մար-
7 գարէ էր. Եւ պատասխան առին Թէ չէին
8 գիտեր ուսկից էր. Եւ Յիսուս բսաւ անոնց,
Եւ ալ ձեզի չեմ բսեր Թէ ինչ իշխանութիւնով
կ'ընեմ ատ բաները.

9 Այսու ատ առակը գրուցել ժողովուրդին.
Մի Մարդ մը այգի մ'ունէր և զանիկա մը-
չակներու յանձնեց, ու ինքը օտար երկիր եր-
10 թալ տաս ժամանակ մնաց. Եւ առնելին
ծառայ մը իրկնեց մշակներուն, որ այգիին պը-
առուկէն անոր առն. իսկ մշակները ծեծելին
11 զանիկա ու պարապ ճամբեցին. Եւ ուրիշ ծա-
ռայ մըն ալ իրկնեց. իսկ անոնք զանիկա ալ
ծեծելին, անարգելին ու պարապ ճամբեցին.
12 Ու երրորդ մըն ալ իրկնեց. իսկ անոնք զանի-
13 կա ալ վիրաւորելին ու դուրս հանելին. Ան-
առնելը այգիին տէրը բսաւ, Ի՞նչ ընեմ. իմ
սիրելի որդիս իրկնեմ, գուցէ զանիկա անոնք
14 լաւ մը նային. Բայց մշակները երբոր տեսան
զանիկա, իրարու հետ խորհուրդ բրին՝ բսե-
լով. Ասիկա է ժառանգը, եկէք զանիկա սպա-
նենենք՝ որ ժառանգութիւնը մերը ըլլայ.
15 Եւ զանիկա այգիէն դուրս հանելին ու սպան-
նելին. ուստի այգիին տէրը ի՞նչ պիտի ընէ
16 անոնց. Գ'ուգայ գայ ու կորսընցնէ ատ մշակնե-
րը, և այգիը ուրիշներու պիտի տայ. Երբոր
17 անոնք ասիկա լսին, Քան լիցի. Եւ ինքը անոնց
նայելով բսաւ. Հապա ի՞նչ է ատ գրուածը,
Թէ Ան քարը որ շինողները մերժեցին, ա-
18 նիկա անկիւնին գլուխը եղաւ. Ամէն ով որ
ատ քարէն վրայ իյնայ՝ պիտի կտոր-կտոր ե-
ղած վրայ որ իյնայ՝ պիտի փոշիի զանիկա.
19 Եւ քահանայապետները ու գպիրները կը
փնտռէին Թէ ընդ-նոյն ժամուն ձեռք զար-
նեն անոր, բայց ժողովուրդէն վախցան. քան-
զի իմացան որ ատ առակը իրենց համար ը-
սաւ.

20 Ու նայ յարձակ ընդ ապաւելով, իրկնցին
քանի մը խաթերայ մարգիկ՝ արուեստ կեղծա-
ւորութիւնով բնդրելին զանիկա խօսքէն
նէին, որ զանիկա խաղալով բանէն՝ ափսո-
Թիւնան և կառավարչին իշխանութիւնը զանի-
21 կա մատնելու. Ու անոնք հարցուցին բսելով,
Վարդապետ, գիտենք որ շիտակ կը խօսիս
ու կը սորվեցնես, և ապաստութիւն չես բներ,
հապա ճշմարտութիւնովը Աստուծոյ ճամբան
22 կը սորվեցնես. Մեզի արժան է կայսրին
23 տուրք տալ Թէ չէ. Եւ անոնց խարտանութիւնը
հասկընալով՝ բսաւ անոնց, Ինչու

24 գիս կը փորձէք. Ցուցուցէք ինծի դահեկան
մը. Որուն պատկերը ու գիրը ունի ըսաւ, Գա-
25 ռասան տուին ու բսին, Կայսրինը. Ու ին-
քը բսաւ անոնց, Ուրեմն ան որ կայսրինն է
կայսրին տուէք, և ան որ Աստուծոյն է Աս-
26 տուծոյ. Եւ չկրցան գանիկա խօսքով
մը բռնել ժողովուրդին առջեւը. ու զար-
նապով անոր պատասխանին վրայ լուռ կեցան.
27 Եւ Սադուկեցիներէն անոնք ելան, (Ո-
րոնք հակառակ կ'ըսեն Թէ յարու-
28 թիւն չկայ,) և անոր հարցուցին ըսելով,
Վարդապետ, Մովսէս մեզի գրեց, Թէ որ
մէկուն եղբայրը կնիկ ունենալով մեռնի ու
բոլոր, ու մեռած ատենը զաւակ չունենայ,
անոր եղբայրը առնէ ան կնիկը և իր եղբօրը
29 զաւակ հանէ. Արդ եօթը եղբայրներ կային.
ու առաջինը կնիկ մը առնելով՝ զաւակ չու-
30 նեցած մեռաւ. Երկրորդն ալ առաւ ան կնիկ-
31 կը, և ինքն ալ մեռաւ առանց զաւակի. Եր-
րորդն ալ առաւ զանիկա, Նմանապէս եւթն
32 ալ. ու զաւակ չձգելէն ու մեռան. Ետեւէն
33 ևսքը կնիկն ալ մեռաւ. Ուրեմն յարութեան
առնեն անոնցմէ որուն կնիկը պիտի բլլայ,
34 ինչու որ եօթն ալ զանիկա կնիկ ունեցան. Եւ
Յիսուս պատասխան տալով անոնց բսաւ. Ա-
յս աշխարհիս որդիքը կնիկ կ'առնեն ու կիրան
35 կը տրուին. Բայց անոնք որ արժան սեպ-
ուին այն աշխարհին հասնելու ու մեռելներէն
յարութիւն առնելուն, ոչ կնիկ կ'առնեն և ոչ
36 կիրան կը տրուին. Որովհետև ալ չեն կրնար
մեռնիլ. Հրեշտակներուն հաւասար են,
ու Աստուծոյ որդիք են, Ինչու որ յարու-
37 թիւն են. Բայց մեռելներուն յարութիւն
առնելը Մովսէս ալ խնացուց մորենիին դր-
ուագիրը, երբոր կը կոչէ Տէրը՝ Աբրահա-
մին Աստուածը, ու Իսահակին Աստուածը,
38 և Յակոբին Աստուածը. Ու Աստուած մեռել-
ներուն Աստուածը չէ. Հապա կենդանիներուն,
39 Վինչու որ ամէնը անոր կենդանի են. Եւ գր-
պիրներէն մէկ քանին պատասխան տուին ու
40 բսին, Վարդապետ, ազէկ բսիր. Ու ալ մէկը
հանդրձակութիւն չէր բներ անոր բան մը
հարցընելու.

41 Եւ բսաւ անոնց, Ինչպէս կ'բսեն Թէ Քրիս-
42 տոս Դաւիթի որդին է. Եւ ինքը Դաւիթ
Սաղմոսարանին գրքին մէջ կ'բսէ, Տէրը իմ
43 Տէրոջս բսաւ, Նստէ իմ աջ կողմս, Մինչև որ
քու թշնամիներդ ոտքերուդ պատուանդան
44 բնեմ. Ուրեմն Դաւիթ որ զանիկա Տէր կը
կոչէ, ինչպէս անիկա անոր որդին կ'բլլայ.
45 Եւ բոլոր ժողովուրդին առջեւը բսաւ իր
46 աշակերտներուն, Զգուշացէք գպիրներէն,
որոնք կ'ուզեն փառաւոր հանդերձներով պը-

ատրիլ ։ 'և չուկանելոցն մէջ բարեներ կը սի-
բեն ։ ու ժողովարաններուն մէջ՝ առաջին ա-
ԹոռներըՀ և ընթրիքներու մէջ՝ առաջին
47 բազմոցներըՀ ։ 'Որոնք որբևարբինեցուն տուներ-
րը կ'ուտեն ։ ու հաչտ երևնալու համար ա-
զօթքը կ'երկրնցընեն ։ ասոնք առելի գատա-
պարտութիւն պիտի ընդունին ։

ԳԼ · ԻԱ

1 Քրիստոս կը գալի ապրած արքաներն ։ 5 կը նախատէ տա-
ճարին ու երուսաղէմին կործանումը ։ 23 Նաև վերջին պատա-
հարները ։ 34 կը յորդորի զգոյ ու արթուն ըլլալու ։

1 Ու Յիսուս մտաւ ու կ'անցնէր Երիքով քա-
2 ղաքէն ։ Եւ ահա մարդ մը որուն անունը
3 Զաքէոս էր ։ Ան մեծ մաքսաւոր էր ու մեծա-
4 տուն էր ։ Ան կ'ուզէր տեսնել Յիսուսը թէ
ո՞վ է ։ Բայց չէր կրնար ամբոխին պատճա-
ռով ։ Վասն զի կարճահասակ էր ։ Ուստի
5 առաջ վազեց ու ելաւ սիկամորի ծառի մը
վրայ որպէսզի զայն տեսնէ ։ Որովհետև
6 անկէ պիտի անցնէր ։ Երբոր Յիսուս եկաւ
այն տեղը՝ վերուելով նայեցաւ ու ըսաւ
7 անոր ։ Զաքէոս՝ իջիր շուտով ։ Վասն զի
այսօր ես պիտի մնամ քու տանդ մէջ ։
8 Ան ալ շուտով իջաւ ու ուրախութեամբ
ընդունեց զայն ։ Բոլորն ալ տեսնելով՝ կը
տրտնջային ։ Թէ մեղաւոր մարդու մը
9 հիւրասէր եղաւ ։ Զաքէոս ոտքի կեցաւ ու
Տէրոջ ըսաւ ։ Ահա Տէր՝ կէսը իմ ունե-
ցուածքներուս աղքատներուն կու տամ ։
Եւ եթէ մէկէն բան մը խլած եմ՝ չորս
10 կրկինը կը հատուցանեմ ։ Յիսուս անոր
ըսաւ ։ Այսօր այս տան փրկութիւն եղաւ ։
Վասն զի ինքն ալ Աբրահամու որդի է ։
11 Որովհետև Մարդու Որդին եկաւ որ կո-
րուսեալը փնտռէ ու ազատէ ։ Երբ անոնք
այս բաները կը լսէին՝ նա առաջ մի առակ
ալ ըսաւ ։ Վասն զի Երուսաղէմին մօտ էր
ան ։ Ու անոնք կը կարծէին թէ Աստուծոյ
12 արքայութիւնը պիտի յայտնուի յանկարծ ։
Ուստի ըսաւ ։ Մարդ մը ազնուական մը
հեռու երկիր մը գնաց ։ Որպէսզի արքայու-
թիւն մը առնէ ու դառնայ ։ Եւ կանչեց իր
տասը ծառաները ու տասը մնա տուաւ
անոնց ։ Եւ ըսաւ անոնց ։ Մինչև որ ես
գամ՝ առուտուր ըրէք ։ Բայց իր քաղաքա-
ցիները զինք կ'ատէին ։ Ու դեսպաններ
ետևէն ղրկեցին ։ Ըսելով ։ Չենք ուզեր որ
15 այս մարդը մեր վրայ թագաւոր ըլլայ ։ Ան
ատեն երբ ինք արքայութիւնը առած դար-
ձաւ ։ Հրամայեց որ այն ծառաները որոնց
որ տուած էր փողը՝ իր առջև կանչուին
որպէսզի գիտնայ թէ ինչ առուտուր ըրին ։
16 Առաջինը եկաւ ու ըսաւ ։ Տէր՝ քու մնա
տուածդ տասը մնա շահեցուց ։
17 Ան ալ անոր ըսաւ ։ Եւ իմ անուանս համար
18 տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունե-
ցիր ։ Երկրորդը եկաւ ու ըսաւ ։ Տէր՝ քու
19 մնա տուածդ հինգ մնա շահեցուց ։ Ան ալ
անոր ըսաւ ։ Դուն ալ հինգ քաղաքի վրայ
20 իշխանութիւն ունեցիր ։ Ու միւսը եկաւ
ու ըսաւ ։ Տէր՝ ահա քու մնաս որ ես ծա-
21 ռայիս ունէի ։ Որ թաշկինակի մէջ դրած
էի ։ Վասն զի քեզմէ կը վախնայի ։ Որով-
հետև դուն խիստ մարդ մըն ես ։ Կ'առնես
որ չես դրած ։ Ու կը հնձես որ չես ցա-
22 նած ։ Անոր ըսաւ ։ Քու բերնովդ քեզ կը
դատեմ ։ Դուն չար ծառայ ։ Գիտէիր որ
ես խիստ մարդ մըն եմ ։ Որ չես դրած կ'ա-
ռնեմ ։ Եւ որ չեմ ցանած կը հնձեմ ։
23 Ուրեմն ինչո՞ւ համար փողս չտուիր
սեղանաւորներուն ։ Որ ես գալով տոկոսով
24 առնէի զայն ։ Ան ատեն ըսաւ անոնց որ
կեցած էին ։ Առէք անկէ մնան տասը մնա
25 տուածը ։ Ու տուէք տասը մնա ունեցո-
ղին ։ Անոնք ըսին անոր ։ Տէր՝ տասը մնա
26 ունի ։ Ըսեմ ձեզի թէ ամէն մէկ ունեցո-
ղին պիտի տրուի ։ Ու չունեցողէն անգամ
որ ունի՝ պիտի առնուի ։ Ինչ որ ունի ։
27 Բայց իմ թշնամիներս որ չուզեցին որ
ես անոնց վրայ թագաւորեմ ։ Անոնք ալ
բերէք ։ Ու առջևս սպանէք ։
28 Ասոնք ըսելէ ետքը ։ Ան առջևէն կ'երթա-
29 յր ։ Երուսաղէմ ելլելով ։ Երբ որ մօտեցաւ
Բեթփագէի ու Բեթանիոյ ։ Ձիթենեաց կո-
30 չուած լերան քով ։ Իր աշակերտներէն
երկուքը ղրկեց ։ Ըսելով ։ Գացէք ձեր
դիմացի գիւղը ։ Ուր որ մտնէք՝ պիտի գտ-
նէք էշի ձագ մը կապուած ։ Որուն վրան
մարդ մը երբեք չէ նստած ։ Զայն արձա-
31 կեցուցէք ու բերէք ։ Եթէ մէկը ձեզի հար-
ցնէ ։ Ինչո՞ւ համար կ'արձակէք ։ Ան-
32 պէս ըսէք անոր ։ Տէրը պէտք ունի ։
Ուղարկուածները գացին ։ Ու ինչպէս որ
33 ըսած էր ։ Այնպէս գտան ։ Երբ էշի ձագը
արձակեցին ։ Անոր տէրերը ըսին անոնց ։
34 Ինչո՞ւ համար էշի ձագը կ'արձակէք ։ Ան-
ոնք ալ ըսին ։ Տէրը պէտք ունի ։
35 Ու զայն բերան ու խնամատարները պիտի
տասը ։ Բերան պիտի չկրնան գէմ խօսիլ կամ գէմ կռ-
16 նալ ձեր ամէն հակառակորդները ։ Եւ պա-
տի մնատուք ծնողքներէ ու եղբայրներէ և
ազգականներէ ու բարեկամներէ ։ Ան ձեզմէ
17 պիտի սպաննեն ։ Եւ իմ անուանս համար
18 ամէնուն ատելի պիտի ըլլաք ։ Բայց մէկ
19 մազ մը ձեր գլխէն պիտի չկորսուի ։ Ձեր համ-
բերութիւնովը հոգիներդ պիտի առնաք ։
20 Ու երբոր տեսնէք Երուսաղէմը չորս կող-
մէն զօրքերով պատած ։ անոնած գիտցէք որ
21 անոր աւերումը մօտ է ։ Ան ատեն Հրէաստա-
նի մէջ եղողները լեռները թող փախչին ։ ու
անոր մէջ եղողները թող հեռանան ։ և անոնք
որ արուարձանները են՝ թող չմտնեն անոր մէջը ։
22 Վասն զի ան ջրերը վրէժխնդրութիւն օրեր
23 են ։ Որ բոլոր գրուածները կատարուին ։ Բայց
վայ այն օրերը յղի եղողներուն ու ծիծ տուող-
ներուն ։ Ինչո՞ւ որ մեծ նեղութիւն պիտի ըլլայ
երկրին վրայ ։ ու բարկութիւն այս ազ-
24 ժողովուրդին վրայ ։ Եւ սուրի բերնով պիտի
իյնան ։ ու բոլոր ազգերուն մէջ գերի պիտի տա-
րուին ։ ու Երուսաղէմ ազգերուն ոտքով կոխուած
պիտի ըլլայ ։ մինչև որ ազգերուն ժամանակ-
25 ները լմննան ։ Ու արեգակին և լուսնին ու
աստղերուն վրայ նշաններ պիտի ըլլան ։ ու երկ-
րի վրայ ազգերը ապշութենէ պիտի ապրեցո-
պին ։ և ծովը ու ալիքները պիտի գոռան ։
26 Մարդոց սիրտերը պիտի նուաղին երկիւղ վա-
խէն՝ և աշխարհի վրայ գալու բաներուն սպա-
սելէն ։ Ինչո՞ւ որ երկնից զօրութիւնները պի-
27 տի շարժին ։ Եւ անոնք պիտի տեսնեն
Որդի մարդոյ ամպի մէջ եկած զօրութիւնով
28 ու մեծ փառքով ։ Ու երբոր այս բաները սկսին
ըլլալ ։ երկը ու գլուխնիդ բարձրացուցէք ։
Վասն զի ձեր փրկութիւնը մօտ է ։
29 Եւ առակ մը բսաւ անոնց ։ Թէնի ու
30 ամէն ծառերը ։ Երբոր կը բողբոջին ։
տեսնելով՝ գուք ձեզմէ կ'իմանաք թէ ալ
31 ամառը մօտ է ։ Նոյնպէս ալ գուք երբոր այս
բաները եղած տեսնէք ։ գիտցէք որ Աստու-
32 ծոյ թագաւորութիւնը մօտ է ։ Ձեզի ճշմարիտ կ'ը-
սեմ ձեզի ։ որ այս ազգը պիտի չանցնի ։ մին-
33 չև որ այս ամէն բաները ըլլան ։ Երկինք ու
երկիր պիտի անցնին ։ բայց իմ խօսքերս չեն
34 պիտի անցնին ։ Իսկ գուք զգուշացէք ձեր
անձերնուն ։ չըլլայ որ սիրտերիդ կերուխա-
տումով ու գինովութիւնով և աշխարհային գրա-
ղումներովդ ծանրանայ ։ ու յանկարծակի ան
35 օրը ձեր վրայ հասնի ։ Վասն զի բոլոր երկ-

բին երկար բնակութիւնըն ամէնուն վրայ ։ 36 Բայց տիքի մը պէս պիտի հաւանիս ։ Վերատես ա-
ղիտուն կեցէք ։ ։ու ամէն ատեն ազօթք բրէք , որ արժանի բլլաք ան բոլոր բլլալու բաներ-
բէն ազատուելու ։և Որդւոյ մարդոյ առջեւը կայնելու ։
37 ։Ու ցորեկներըը տաճարին մէջ կը սորվեցը-
նէր , ։և գիշերները կ'ելլէր Ձիթենեաց բուսած
38 լեռը կը կենար ։ Եւ բոլոր ժողովուրդը առ-
աւօտուն կուգար իրեն կ'երթայինն տաճարը՝ իր խօսքը լսելու ։

ԳԼ· ԽԲ

1 Հրեայք զատկացիքն կ'ըսեն Բրխատի գեմ· 2 Սատանան
կը դրդեն Յուդան որ մատնէ զԲրիստոս· 7 Նախապատրաստե-
լութիւնը կը պատրաստեն զաթիչը· 13 Բրիստոս իր աշակերտները կը ուղարկէ
մատնէ· 21 իր մատնիչին ով բլլալը կ'իմացնէ· աստիճան անոր ա-
նունը տալու· 24 իր աշակերտներուն փառասիրութենէն կը զգու-
շացնէ· 27 Գինովցնելն իմն իր հաստատը պիտի ըլլայ
պատիւ· 34 բայց երկար անդամ պիտի ուրանայ իր Տէրը· 39 ա-
զօթք կ'ընէ Գեթսեմանեայ պարտէզին մէջ· և սրտին ցաւովը
կը յուզի· 47 մէկ հարուածով մը կը հաստատի· 50 Աշակերտն
պիտին կը լքանին· 54 Պետրոս երկար անդամ կ'ուրանայ իր
Տէրը· 63 Բրիստոս նախատուիլէն անարգուելէն և չարչարան-
քը կրելու· 66 ու կը խոստովանի թէ Քրիստոս Աստուծոյ Որդին է ։

1 ։Բայց երբ Յիսուս այս բոլոր խօսքերը
2 կատարեց , ըսաւ իր աշակերտներուն ,
3 Գիտէք որ երկու օրէն Զատիկ կ'ըլլայ ,
և Մարդոյ Որդին պիտի մատնուի խաչե-
4 լելու համար ։ Այն ատեն քահանայապետները
և ժողովուրդին երէցները Կայիափա կոչուած
5 քահանայապետին դահլիճը ժողվուեցան ,
6 և խորհուրդ ըրին որ Յիսուսը նենգութեամբ
7 բռնեն և սպաննեն ։ Բայց կ'ըսէին , Տօնին
8 չըլլայ , որ ժողովուրդին մէջ խռովութիւն
9 չլլայ ։ Երբ Յիսուս Բեթանիա էր , Սիմոն
10 բորոտի տանը մէջ , հացի սեղանին քով ,
11 կին մը եկաւ անոր մօտ՝ մարմարէ սրուակ
մը բոլոր թանկագին իւղով , և իւղը թափեց
12 անոր գլխուն վրայ , երբ նստած էր ։ Աշա-
կերտները տեսնելով զայրացան ըսելով ,
13 Ինչո՞ւ այս կորուստը եղաւ ։ Որովհետև այս
իւղը կրնար շատ գնով մը ծախուիլ և աղ-
14 քատներուն տրուիլ ։ Յիսուս գիտնալով ըսաւ
15 անոնց , Ինչո՞ւ կը նեղացնէք այս կինը ։ Որով-
հետև գեղեցիկ գործ մը ըրաւ ինծի հետ ։
16 Աղքատները միշտ ձեզի հետ ունիք , բայց
ես միշտ ձեզի հետ չունիք ։ Որովհետև այս
կինը իմ մարմինս թաղելու համար ըրաւ զայն ։
17 Ամէն ճշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի , որ ամբողջ
աշխարհի մէջ ուր որ այս աւետարանը քարոզուի ,
անոր ըրածն ալ պիտի պատմուի անոր յիշատակին համար ։
18 Այն ատեն տասներկուքէն մէկը , որուն անունը Յուդա Իսկարիովտացի էր ,
քահանայապետներուն գնաց , 19 և ըսաւ , Ինչ որ ինծի տաք , ես ձեզի
Յիսուսը մատնեմ ։ Անոնք ալ երեսուն արծաթ դրամ հաշուեցին անոր ։
20 Ուստի ժամանակ մը որ գտնէր , մատնելու համար զայն կը փնտռէր ։
21 Իսկ առաջին օրը Խմորեղէնէ զուրկ հացերուն , աշակերտները Յիսուսի
մօտ եկան ըսելով , Ուր կ'ուզես որ պատրաստենք քեզի համար Զատիկը
22 ուտելու ։ Ան ալ ըսաւ , Գացէք քաղաքը մարդու մը , և ըսէք անոր ,
Վարդապետը կ'ըսէ , Իմ ժամանակս մօտ է , քու տունդ պիտի անեմ
23 զատիկը իմ աշակերտներուս հետ ։ Աշակերտները Յիսուսի հրամայածին
պէս ըրին , և զատիկը պատրաստեցին ։
24 Իրիկունը տասներկուքին հետ նստաւ ։
25 Եւ անոնք ուտելու ատեն ըսաւ , Ամէն ճշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի ,
որ ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ ։ Անոնք շատ տրտմեցան , և ամէնքը
սկսան ըսել անոր , Տէ՛ր , միթէ ես եմ ։ Ան ալ պատասխանեց ըսելով ,
26 Որ ձեռքը ինծի հետ ամանին մէջ կը մխէ , նա պիտի մատնէ զիս ։
Մարդոյ Որդին կ'երթայ , ինչպէս անոր համար գրուած է , բայց վա՛յ
այն մարդուն որով Մարդոյ Որդին մատնուի ։ Այդ մարդուն աղէկ կ'ըլլար
27 եթէ չծնած ըլլար ։ Յուդա որ զայն մատնեց , պատասխանեց ըսելով ,
Միթէ ես եմ , Վարդապետ ։ Ան ալ ըսաւ անոր , Դուն ըսիր ։
28 Ուտելու ատեն Յիսուս հաց առաւ , օրհնեց , կտրեց և տուաւ աշակերտներուն ,
և ըսաւ , Առէ՛ք կերէ՛ք , այս է իմ մարմինս ։ 29 Ապա բաժակ մը առաւ ,
գոհացաւ և տուաւ անոնց , ըսելով , Ասկէ բոլորդ խմեցէք ։ 30 Վասն զի
այս է իմ արիւնս նոր ուխտին , որ շատերու համար կը թափուի ։
31 Այն գիշեր Յիսուս ըսաւ անոնց , Ես ձեզի համար կը թափուիմ ։
Ամէնքդ ալ այս գիշեր ինծմէ պիտի գայթագղիք ։ Վասն զի գրուած է ,
Հովիւը պիտի զարնեմ , և հօտին ոչխարները պիտի ցրուին ։
32 Բայց յարութենէս ետքը ձեզմէ առաջ Գալիլիա պիտի երթամ ։
33 Պետրոս ըսաւ անոր , Թէև ամէնքդ ալ գայթագղին ինծմէ , ես երբեք
34 պիտի չգայթագղիմ ։ Յիսուս ըսաւ անոր , Ճշմարտութեամբ կ'ըսեմ քեզի ,
որ այս գիշեր աքաղաղը չկանչած , դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս ։
35 Պետրոս ըսաւ անոր , Թէև քեզի հետ մեռնելու ըլլամ , ես երբեք չեմ
ուրանար զքեզ ։ Նոյնպէս ալ ամէն աշակերտներն ըսին ։
36 Յետոյ Յիսուս անոնց հետ եկաւ Գեթսեմանի կոչուած տեղը , և ըսաւ
աշակերտներուն , Նստեցէ՛ք հոս , մինչև որ ես երթամ հոն աղօթք ընեմ ։
37 Եւ Պետրոսն ու Զեբեդեայի երկու որդիները հետը առաւ , և տրտմիլ
և տագնապիլ սկսաւ ։ 38 Յետոյ ըսաւ անոնց , Հոգիս մինչև մահ տրտում է ։
Հոս մնացէ՛ք և ինծի հետ արթուն կացէ՛ք ։ 39 Եւ քիչ մը առաջ երթալով ,
երեսին վրայ ինկաւ աղօթելով և ըսելով , Հայր իմ , եթէ կարելի է ,
այս բաժակը ինձմէ անցնի ։ Բայց ոչ թէ ինչպէս ես կ'ուզեմ , հապա
ինչպէս դուն կ'ուզես ։ 40 Եկաւ աշակերտներուն քով , և գտաւ զանոնք
քնացած , և Պետրոսին ըսաւ , Ինչպէ՞ս , ինծի հետ մէկ ժամ արթուն
41 չկրցա՞ք կենալ ։ Արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք , որ փորձութեան մէջ
չիյնաք ։ Հոգին պատրաստ է , բայց մարմինը տկար ։ 42 Դարձեալ երկրորդ
անգամ գնաց , և աղօթեց ըսելով , Հայր իմ , եթէ չկրնայ այս բաժակը
ինձմէ անցնիլ , չխմած , կատարուի քու կամքդ ։ 43 Եկաւ անոնց քով ,
և դարձեալ քնացած գտաւ զանոնք , որովհետև աչքերնին ծանրացած էին ։
44 Եւ զանոնք թողլով , դարձեալ գնաց , և երրորդ անգամ նոյն խօսքերը
ըսելով աղօթեց ։ 45 Յետոյ աշակերտներուն եկաւ , և ըսաւ անոնց ,
Քնացէ՛ք հիմա և հանգչեցէ՛ք ։ Ահա մօտեցաւ ժամը , և Մարդոյ Որդին
մեղաւորներու ձեռքը կը մատնուի ։ 46 Ելէ՛ք , երթանք ։ Ահա մատնիչս
մօտեցաւ ։
47 Երբ դեռ կը խօսէր , ահա Յուդա , տասներկուքէն մէկը , եկաւ ,
և անոր հետ բազմութիւն մը սուրերով և գաւազաններով , քահանայապետներէն
և ժողովուրդին երէցներէն ղրկուած ։ 48 Մատնիչը անոնց նշան տուած էր
ըսելով , Զոր համբուրեմ , նա է ։ Բռնեցէ՛ք զանիկա ։ 49 Եւ անմիջապէս
Յիսուսի մօտեցաւ , և ըսաւ , Ողջո՛յն , Վարդապետ ։ Եւ համբուրեց զանիկա ։
50 Յիսուս ալ ըսաւ անոր , Բարեկա՛մ , ինչո՞ւ եկար ։ Այն ատեն մօտեցան ,
ձեռք արկին Յիսուսի և բռնեցին զանիկա ։ 51 Եւ ահա Յիսուսի հետ եղողներէն
մէկը ձեռքը երկնցուց , սուրը քաշեց , և քահանայապետին ծառան զարկաւ ,
և ականջը կտրեց անոր ։ 52 Յիսուս ալ ըսաւ անոր , Դարձո՛ւր սուրդ իր
տեղը , վասն զի ամէն սուր վերցնողներ սուրէն պիտի կորսուին ։ 53 Կամ
կարծեցի՞ր թէ չեմ կրնար հայրս աղաչել , և ան հիմա քովս տասներկու
լեգէոնէ աւելի հրեշտակներ չի ղրկեր ինծի ։ 54 Բայց ինչպէ՞ս կատարուին
գրուածները , որ այսպէս պէտք է ըլլալ ։ 55 Այն ատեն Յիսուս ամբոխին
ըսաւ , Ինչո՞ւ սուրերով և գաւազաններով ելած էք զիս բռնելու համար ։
Ամէն օր տաճարին մէջ նստած կը սորվեցնէի , և չբռնեցիք զիս ։
56 Բայց այս ամէնը եղաւ , որպէսզի մարգարէներուն գրուածները կատարուին ։
Այն ատեն աշակերտները ամէնքն ալ անոր թողլով փախան ։
57 Յիսուսը բռնողները Կայիափա քահանայապետին մօտ տարին , ուր դպիրները
և երէցները հաւաքուած էին ։ 58 Պետրոս ալ հեռուէն անոր հետևեցաւ
մինչև քահանայապետին դահլիճը , և ներս մտնելով սպասաւորներուն հետ
նստաւ , որպէսզի տեսնէ վերջը ինչ պիտի ըլլայ ։ 59 Քահանայապետները
և ամբողջ ատեանը սուտ վկայութիւն կը փնտռէին Յիսուսի դէմ , որպէսզի
մահուան մատնեն զանիկա ։ 60 Բայց չգտան , թէև շատ սուտ վկաներ
եկան ։ Վերջապէս երկու հոգի եկան , 61 և ըսին , Այս մարդը ըսաւ ,
Կրնամ աստուածային տաճարը քակել , և երեք օրուան մէջ շինել ։
62 Քահանայապետը ելաւ , և ըսաւ անոր , Ոչինչ պատասխանելիք ունի՞ս
այս բաներուն համար , որ կը վկայեն քեզի դէմ ։ 63 Բայց Յիսուս լռեց ։
Քահանայապետը ըսաւ անոր , Կը հրամայեմ քեզի կենդանի Աստուծոյ
անունով , որ մեզի ըսես եթէ դուն Աստուծոյ Որդին Քրիստոսն ես ։
64 Յիսուս ըսաւ անոր , Դուն ըսիր ։ Բայց ես ձեզի կ'ըսեմ , յետոյ պիտի
տեսնէք Մարդոյ Որդին զօրութեան աջ կողմը նստած , և երկնքի ամպերուն
վրայ գալու ։ 65 Այն ատեն քահանայապետը իր հագուստները պատռեց ,
ըսելով , Հայհոյեց ։ Ինչո՞ւ ալ վկաներու պէտք ունինք ։ Ահա հիմա
լսեցիք անոր հայհոյութիւնը ։ 66 Ինչ կը կարծէք ։ Անոնք ալ պատասխանեցին
ըսելով , Մահուան արժանի է ։ 67 Այն ատեն անոր երեսին թքեցին ,
և բռունցքով զարկին զանիկա ։ Ուրիշներ ալ ապտակեցին զանիկա ։
68 Ըսին , Մարգարէացո՛ մեզի , Քրիստո՛ս , թէ ո՞վ է որ զքեզ զարկաւ ։
69 Պետրոս դուրսը նստած էր աւլիին մէջ ։ Եւ աղախին մը անոր մօտեցաւ ,
ըսելով , Դուն ալ Գալիլացի Յիսուսի հետ էիր ։ 70 Ան ալ բոլորին առջեւ
ուրացաւ ըսելով , Չեմ գիտեր թէ ինչ կ'ըսես ։ 71 Երբ դուրս ելաւ
դրան սեմը , ուրիշ աղախին մը զանիկա տեսաւ , և անոնց որ հոն էին
ըսաւ , Այս մարդն ալ Յիսուս Նազովրեցիին հետ էր ։ 72 Ան ալ երդումով
ուրացաւ , թէ չեմ ճանչնար զայդ մարդը ։ 73 Քիչ մը վերջ ալ հոն կեցողները
մօտեցան , և Պետրոսին ըսին , Անշուշտ դուն ալ անոնցմէ մէկն ես ,
որովհետև քու խօսքդ ալ քեզ կը մատնէ ։ 74 Ան ալ սկսաւ անիծել և
երդումով ուրանալ թէ չեմ ճանչնար զայդ մարդը ։ Եւ անմիջապէս աքաղաղը
կանչեց ։ 75 Պետրոս յիշեց Յիսուսի խօսքը որ ըսած էր անոր ,
Աքաղաղը չկանչած , դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս ։ Եւ դուրս
ելլելով դառնապէս լացաւ ։

---

1 Ամբողջ ժողովուրդին երէցները և դպիրները Յիսուսի դէմ խորհուրդ
2 ըրին , որպէսզի մահուան դատապարտեն զանիկա ։ Եւ կապեցին զանիկա ,
տարին և Պիղատոս կուսակալին յանձնեցին ։
3 Այն ատեն իր մատնիչ Յուդան , տեսնելով որ դատապարտուեցաւ ,
զղջացաւ , և երեսուն արծաթ դրամները քահանայապետներուն և երէցներուն
4 դարձուց ըսելով , Մեղանչեցի անմեղ արիւն մատնելով ։ Ան ալ ըսին ,
5 Մեզի ի՞նչ է այդ ։ Դուն գիտես ։ Ինքն ալ արծաթ դրամները տաճարին
մէջ նետեց , մեկնեցաւ , գնաց և ինքզինքը խեղդեց ։
6 Քահանայապետները առին արծաթ դրամները , և ըսին , Չի կրնար
սրբարանին գանձարանը դնել , վասն զի արիւնի գին է ։
7 Խորհուրդ ըրին , և անոնցմով կնկան արտը գնեցին , որպէս զի
8 պանդուխտներուն թաղման տեղ ըլլայ ։ Ուստի այդ արտը մինչև այսօր
9 Արիւնի արտ կոչուի ։ Այն ատեն կատարուեցաւ Երեմիա մարգարէին
խօսքը որ ըսած էր , Եւ առին երեսուն արծաթ դրամները , Իսրայէլի
որդիներէն գնահատուածին գինը ,
10 և տուին զանոնք կնկան արտին համար , ինչպէս Տէրը հրամայեց ինծի ։
11 Յիսուս կուսակալին առջեւ կեցաւ ։ Կուսակալը հարցուց զանիկա ըսելով ,
Դուն Հրեից թագաւո՞րն ես ։ Յիսուս ալ ըսաւ անոր , Դուն ըսիր ։
12 Երբ քահանայապետներն և երէցները զանիկա կը մեղադրէին , ոչինչ
13 պատասխանեց ։ Այն ատեն Պիղատոս ըսաւ անոր , Չե՞ս լսեր որչափ
14 բաներ կը վկայեն քեզի դէմ ։ Եւ ոչ մէկ խօսքի պատասխանեց անոր ,
15 այնպէս որ կուսակալը շատ զարմացաւ ։ Տօնին կուսակալը սովոր էր
ժողովուրդին համար մէկ բանտարկեալ մը ազատել , զոր կամենային ։
16 Այն ատեն անուանի բանտարկեալ մը ունէին , որուն անունը Յիսուս
17 Բարաբբաս էր ։ Երբ անոնք հաւաքուած էին , Պիղատոս ըսաւ անոնց ,
Ո՞ր մէկը կ'ուզէք որ ձեզի համար ազատեմ , Յիսուս Բարաբբա՞ն ,
18 թէ Յիսուս որ Քրիստոս կոչուի ։ Գիտէր թէ նախանձէն մատնած էին
19 զանիկա ։ Երբ դատաստանի աթոռին վրայ նստած էր , կինը ղրկեց
անոր ըսելով , Դուն և այդ արդար մարդուն մի՛ խառնուիր , վասն զի
այսօր երազին մէջ շատ տանջուեցայ անոր համար ։
20 Բայց քահանայապետները և երէցները ժողովուրդին համոզեցին ,
որպէսզի Բարաբբան խնդրեն , և Յիսուսը կորսնցնեն ։
21 Կուսակալը ըսաւ անոնց , Ո՞ր մէկը կ'ուզէք որ ձեզի համար ազատեմ ։
Ան ալ ըսին , Բարաբբան ։
22 Պիղատոս ըսաւ անոնց , Ուրեմն Յիսուսին որ Քրիստոս կոչուի ,
ի՞նչ ընեմ ։ Բոլորն ալ ըսին , Թող խաչուի ։
23 Կուսակալը ըսաւ , Ինչո՞ւ , ի՞նչ չարութիւն ըրաւ ։ Բայց անոնք աւելի
24 պոռացին ըսելով , Թող խաչուի ։ Պիղատոս տեսնելով որ ոչինչ կ'օգնէ ,
այլ աւելի խռովութիւն կը շարժուի , ջուր առաւ , ձեռքերը ժողովուրդին
25 առջեւ լուաց ըսելով , Անմեղ եմ այս մարդուն արիւնէն ։ Դուք տեսէք ։
Ամբողջ ժողովուրդը պատասխանեց ըսելով , Անոր արիւնը մեր վրան
26 և մեր զաւակներուն վրան ։ Այն ատեն Բարաբբան անոնց համար ազատեց ,
իսկ Յիսուսը մտրակելէ յետոյ յանձնեց անոնց , որպէս զի խաչուի ։
27 Կուսակալին զինուորները Յիսուսը առին դատարանը տարին , և ամբողջ
28 գունդը անոր առջեւը հաւաքեցին ։ Հագուստները հանեցին անկէ ,
և կարմիր թիկնոց մը հագուցուցին անոր ։
29 Փշերէ պսակ մը հիւսեցին , և գլխուն դրին , և եղէգ մը աջ ձեռքը տուին ։
Անոր առջեւ ծունկի գալով զայն ծաղրելով ըսին , Ողջո՛յն , Հրեից թագաւո՛ր ։
30 Եւ թքելով անկէ եղէգը առին , և գլխուն զարկին ։
31 Ծաղրելէ յետոյ թիկնոցը հանեցին անկէ , իր հագուստները հագուցուցին
անոր , և տարին զանիկա խաչելու ։
32 Դուրս ելլելով Կիւրենացի Սիմոն անուն մարդ մը գտան , զոր
33 ստիպեցին որ անոր խաչը տանի ։ Եկան Գողգոթա կոչուած տեղը ,
34 որ կը նշանակէ Գանգուկի տեղ , և անոր տուին քացախ խառնուած
35 դառնութեամբ ։ Երբ համտեսեց , չուզեց խմել ։ Խաչելէ յետոյ
36 հագուստները վիճակ ձգելով բաժնեցին ։ Եւ նստելով հոն կը պահէին
37 զանիկա ։ Անոր գլխուն վերեւ իր դատապարտութեան պատճառը գրած
էին , Այս է Յիսուս Հրեից թագաւորը ։
38 Այն ատեն անոր հետ երկու աւազակ խաչեցին , մէկը աջ կողմը ,
39 և մէկը ձախ կողմը ։ Անցորդները կը հայհոյէին զանիկա ,
40 գլուխները շարժելով և ըսելով , Դուն որ կործանեցիր տաճարը ,
և երեք օրուան մէջ կը շինես , ազատէ՛ զքեզ ինքզինքդ ։ Եթէ Աստուծոյ
41 Որդին ես , իջի՛ր խաչէն ։ Նոյնպէս ալ քահանայապետները դպիրներուն
42 և երէցներուն հետ զանիկա ծաղրելով ըսին , Ուրիշները ազատեց ,
43 ինքզինքը չի կրնար ազատել ։ Եթէ Իսրայէլի թագաւորն է , հիմա
իջնէ խաչէն , և հաւատանք անոր ։ Յուսացաւ Աստուծոյ , ազատէ հիմա
զանիկա , եթէ կ'ուզէ զայն ։ Վասն զի ըսաւ , Աստուծոյ Որդին եմ ։
44 Նոյնպէս ալ աւազակները որ անոր հետ խաչուած էին , զանիկա
45 կը նախատէին ։ Ժամը վեցին մինչև ինն ամբողջ երկիրը խաւար
46 պատեց ։ Ժամը իննին մօտ Յիսուս բարձր ձայնով աղաղակեց ըսելով ,
Ելի , Ելի , լամա սաբաքթանի ։ Այսինքն , Աստուած իմ , Աստուած իմ ,
47 ինչո՞ւ զիս թողուցիր ։ Հոն կեցողներէն ոմանք լսելով ըսին ,
48 Ելիան կանչէ այս մարդը ։ Եւ անմիջապէս անոնցմէ մէկը վազեց ,
սպունգ մը առաւ , քացախով լեցուց , եղէգան վրայ դնելով տուաւ
49 անոր խմցնել ։ Ուրիշներ ալ ըսին , Թո՛ղ տուր , տեսնենք թէ Ելիան
50 պիտի գա՞յ զանիկա ազատելու ։ Յիսուս նորէն բարձր ձայնով աղաղակեց ,
51 և հոգին աւանդեց ։ Եւ ահա տաճարին վարագոյրը վերէն վարը
երկուքի պատռուեցաւ , երկիրը դղրդեցաւ , և վէմերը պատռտուեցան ։
52 Գերեզմանները բացուեցան , և շատ մարմիններ հանգուցեալ սրբերուն
53 որ քնացած էին յարութիւն առին ։ Եւ գերեզմաններէն ելլելով ,
Յիսուսի յարութենէն յետոյ մտան սուրբ քաղաքը , և շատերուն երեւցան ։
54 Հարիւրապետը և անոր հետ Յիսուսը պահողները երկրաշարժը և
տեղի ունեցած բաները տեսնելով շատ վախցան , և ըսին , Արդարև
55 այս մարդը Աստուծոյ Որդին էր ։ Հոն շատ կիներ ալ կային հեռուէն
նայելով , որոնք Յիսուսի հետևած էին Գալիլիայէն սկսեալ , և անոր
56 կը ծառայէին ։ Անոնց մէջ էին Մարիամ Մագդաղենացի , Յակոբոսի և
Յովսէի մայր Մարիամ , և Զեբեդեայի որդիներուն մայրը ։
57 Երբ իրիկուն եղաւ , Արիմաթիացի հարուստ մարդ մը եկաւ , անունը
Յովսէփ , որ նաև Յիսուսի աշակերտ եղած էր ։
58 Ան Պիղատոսի գնաց , և Յիսուսի մարմինը խնդրեց ։ Այն ատեն
59 Պիղատոս հրամայեց որ մարմինը տան ։ Յովսէփ առաւ մարմինը ,
60 և մաքուր սինդոնի մէջ փաթթեց , և իր նոր գերեզմանին մէջ դրաւ ,
զոր ինքն ժայռին մէջ փորած էր ։ Մեծ քար մը գլորեց գերեզմանին
61 դրան , և գնաց ։ Հոն Մարիամ Մագդաղենացի և միւս Մարիամը
նստած էին գերեզմանին դիմաց ։
62 Հետևեալ օրը , որ Պատրաստութեան օրէն յետոյ էր , քահանայապետները
և Փարիսեցիները Պիղատոսի հաւաքուեցան ,
63 և ըսին , Տէ՛ր , յիշեցինք որ այս խաբեբան կենդանութեան մէջ ըսաւ ,
Երեք օրէն յարութիւն պիտի առնեմ ։
64 Ուստի հրամայէ որ երեք օր մինչև անոր գերեզմանը ապահովեն ,
որպէսզի գիշերով գան իր աշակերտները և գողնան զանիկա , և ժողովուրդին
ըսեն , Մեռելներէն յարութիւն առաւ ։ Եւ վերջին խաբէութիւնը առաջինէն
65 աւելի չարը ըլլայ ։ Պիղատոս ըսաւ անոնց , Ունիք պահակներ ։
Գացէ՛ք ապահովեցէ՛ք ինչպէս գիտէք ։
66 Անոնք ալ գացին գերեզմանը ապահովեցին , քարին կնիքը դնելով ,
և պահակները պահ տալով ։

---

1 Շաբաթուան առաջին օրը , կանուխ , երբ դեռ մութ էր , Մարիամ
Մագդաղենացի և միւս Մարիամը եկան գերեզմանը տեսնելու ։
2 Եւ ահա մեծ երկրաշարժ մը եղաւ , որովհետև Տէրոջ հրեշտակը երկնքէն
իջաւ , մօտեցաւ , քարը գլորեց , և անոր վրան նստաւ ։
3 Անոր տեսքը կայծակի պէս էր , և հագուստը ձիւնի պէս սպիտակ ։
4 Պահակները անոր երկիւղէն դողդողացին , և մեռելի պէս եղան ։
5 Հրեշտակը կիներուն պատասխանեց ըսելով , Դուք մի՛ վախնաք ։
Գիտեմ որ խաչուած Յիսուսը կը փնտռէք ։
6 Հոս չկայ , վասն զի յարութիւն առաւ , ինչպէս ըսաւ ։ Եկէ՛ք տեսէ՛ք
7 տեղը ուր Տէրը դրուած էր ։ Եւ շուտով գացէ՛ք ըսէ՛ք անոր աշակերտներուն ,
Յարութիւն առաւ մեռելներէն ։ Եւ ահա Գալիլիա կ'երթայ ձեզմէ առաջ ,
հոն պիտի տեսնէք զանիկա ։ Ահա ձեզի ըսի ։
8 Անոնք ալ վախով և մեծ ուրախութեամբ գերեզմանէն շուտով ելլելով
9 վազեցին աշակերտներուն լուր տալու ։ Եւ ահա Յիսուս անոնց հանդիպեցաւ
ըսելով , Ողջո՛յն ։ Անոնք ալ մօտեցան , ոտքերէն բռնեցին , և երկիր
10 ինկան անոր առջեւ երկրպագելով ։ Յիսուս ըսաւ անոնց , Մի՛ վախնաք ։
Գացէ՛ք եղբայրներուս ըսէ՛ք որ Գալիլիա երթան , հոն պիտի տեսնեն զիս ։
11 Անոնք երթալու ատեն , ահա պահակներէն ոմանք քաղաքը եկան ,
և քահանայապետներուն պատահած բոլոր բաները պատմեցին ։
12 Անոնք ալ երէցներուն հետ ժողովուեցան , և խորհուրդ ընելով
զինուորներուն շատ դրամ տուին ըսելով ,
13 Ըսէ՛ք , Գիշերով գալով մենք քնացած ատեն անոր աշակերտները
14 գողցան զանիկա ։ Եւ եթէ կուսակալին ականջին հասնի այս բանը ,
մենք կը համոզենք զանիկա , և ձեզ հոգս չենք տար ։
15 Անոնք ալ դրամները առին , և ինչպէս սորվեցուցին անոնք , ըրին ։
Եւ այս խօսքը մինչև այսօր Հրեաներուն մէջ տարածուած է ։
16 Իսկ տասնմէկ աշակերտները գացին Գալիլիա , լերան մը վրան ,
17 զոր Յիսուս անոնց հրամայած էր ։ Եւ երբ զանիկա տեսան ,
երկրպագութիւն ըրին , բայց ոմանք տարակուսեցան ։
18 Յիսուս մօտեցաւ , և խօսեցաւ անոնց ըսելով , Ինծի տրուած է
19 երկինքի և երկրի ամբողջ իշխանութիւնը ։ Գացէ՛ք ուրեմն , և
աշակերտ ըրէ՛ք բոլոր ազգերը , մկրտելով զանոնք Հօր և Որդւոյ և
20 Սուրբ Հոգւոյ անունով , և սորվեցնելով անոնց պահել ամէն բան ,
զոր ես ձեզի պատուիրեցի ։ Եւ ահա ես ձեզի հետ եմ միշտ ,
մինչև աշխարհի վախճանը ։ Ամէն ։

31 Եւ Տէրը բաւ , Սիմոն , Սիմոն , ահա Սատանան ձեզ փնտռեց , որ ցորենին պէս խոր-
32 րայէ . Բայց ես քեզի համար աղօթք արի որ քու հաւատդ չպակսի . և դուն երբոր դար-
33 ձիր հաստատէ զեղբայրներդ : Հաստատակ , իսկ ինքը բաւ անոր , Տէր , ես պատրաստ եմ քեզի հետ բանտը երթալու ալ , մեռնելու ալ :
34 Եւ անիկա բաւ , Պետրոս , քեզի կ'ըսեմ որ այսօր հաւը պիտի չխօսի՝ մինչև որ դուն երեք անգամ ուրանաս՝ ըսելէ թէ զիս չես ճանչնար :
35 Եւ բաւ անոնց , Երբոր ձեզ խրկեցի առանց քսակի ու պարկի և կօշիկներու , բանի
36 մը կարաս եղա՞ք : Անոնք ալ բսին , Բանի մըն ալ չէ . հարց բաւ , Բայց հիմա ան որ քսակ ունի՝ թող հետը առնէ , նոյնպէս ալ պարկը . և ան որ չունի , թող իր հանդերձը ծախէ
37 ու իրեն թուր մը ծախու առնէ . քանզի կ'ըսեմ ձեզի որ ասա գրուած բանն ալ պէտք է որ իմ վրաս կատարուի , Եւ անօրէններու հետ անցաւեցաւ . քանզի իրիկ որ ինծի համար
38 գրուած է՝ կատարուելու վրայ է : Անոնք ալ բսին , Տէր , ահա հոս երկու թուր կայ . ան ալ բաւ անոնց , Հերիք է :
39 Եւ ելաւ իր սովորութեանը պէս Ձիթենեաց լեռը գնաց . աշակերտներն ալ իր ետևէն
40 գացին : Երբոր ան տեղը հասաւ՝ բաւ ա-նոնց , Աղօթք րրէք որ փորձութեան մէջ չը-
41 մնանք : Ինքը անոնցմէ դադրեցաւ քարկոխի մը չափ , ու ծնկան վրայ դալով աղօթք
42 կ'ընէր , Ո՛ հայր , թէ որ կ'ուզես՝ ան գաւաթը ինծմէ անցուր . բայց չէ թէ իմ
43 կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ : Ու երկինքէն հրեշտակ մը երեցաւ անոր և կը զօրացընէր զանիկա . ու առատիկ նեղութեան մէջ
44 ըլլալով՝ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք կ'ընէր . և իր քրտինքը արիւնի մեծ կաթիլներու պէս էր , որ գետինը կը թափուէր :
45 Եւ աղօթքէն ելլելով աշակերտներուն գաւ-ը եկաւ , ու գտաւ անոնք տրտմութենէն
46 քնացած . և բաւ անոնց , Ինչո՞ւ կը քնա-նաք . յարիք աղօթք րրէք որ փորձութեան մէջ չմտնէք :
47 Ու երբոր դեռ կը խօսէր , ահա մէկ բազմութիւն մը , և Յուդա տասներկուքէն մէկը անոնց առջևէն կ'երթար , ու Յիսուսին մօտեցաւ որ զանիկա համբուրէ :
48 Բայց Յիսուս բաւ անոր , Յուդա , համբու-
49 րանքո՞վ կը մատնես Որդին մարդոյ : Երբոր ա-

ղ = Պետ . ե . 8 .
ի Ընտր . բ 9 .
ա Ցակ . ժե . 9 . 11 . 11 .
ե Ա՛ղ . դա . 13 . Ցակ . բա . 11 . 16 . 17 .
ի Ա՛ած . իչ . 34 . Ա՛ար . ժգ . 30 . Ցակ . ժգ . 28 .
ա Ա՛ած . ժ . 9 . Գէ . բ . 3 . ժ . 4 .
բ Ես . ծգ . 12 . Ա՛ար . ժե . 28 .
գ Ա՛ած . իչ . 36 . Ա՛ար . ժգ . 34 . Ցակ . ժգ . 1 .
դ Գէ . բա . 37 .
ե Ա՛ած . գ . 13 . իչ . 41 . Ա՛ար . ժգ . 28 .
զ Ա՛ած . իչ . 48 .
է Ա՛ած . իչ . 54 . Ա՛ար . ժգ . 43 .
ը Ա՛ած . իչ . 59 . Ա՛ար . ժգ . 33 .
թ Ցակ . ժե . 1 . 2 . 3 . 4 . 5 . 6 . 7 . 8 . 9 . 10 . 11 . 12 . 13 . 14 . 15 . 16 . 17 . 18 . 19 . 20 . 21 . 22 . 23 . 24 . 25 . 26 . 27 . 28 . 29 . 30 . 31 . 32 . 33 . 34 . 35 . 36 . 37 . 38 . 39 . 40 . 41 . 42 . 43 . 44 . 45 . 46 . 47 . 48 . 49 . 50 . 51 . 52 . 53 . 54 . 55 . 56 . 57 . 58 . 59 . 60 . 61 . 62 . 63 . 64 . 65 . 66 . 67 .

նար բոլորովին եղայներէն անհաւատ ինչ որ պիտի ըլլար . բսին անոր , Տէր , իմ տասով գայեակ-
50 ցիր : Եւ անոնցմէ մէկը քահանայապետին ծառային զարկաւ ու մէկդի հանեց անոր ա-
51 կանջը . Պատասխան տուաւ Յիսուս ու բաւ , Թող տանէք մինչև աս տեղը . և դպ-
52 պաւ անոր ականջին ու բժշկեց զանիկա . Եւ Յիսուս իր վրայ եկող քահանայապետներուն ու տաճարին իշխաններուն ու ծերերուն բ-ւաւ , Իբր թէ աւազակի՞ վրայ ելած տէր-
53 պով ու բրիւերով , Ամէն օր ձեզի հետ էի տաճարին մէջ , և ինծի ձեռք չզարկիք . Բայց աս է ձեր ժամանակը ու խաւարին իշխանութիւնը :
54 Եւ զանիկա բռնելով տարին ու քահանայապետին տունը մտցուցին . Պետրոս ալ հե-
55 տևեցաւ հեռուն . Երբոր կրակ վառեցին գաւիթին մէջ ու միասին նստան , Պետրոս ալ անոնց մէջը նստաւ անոնց միջը : Մէկ ազա-խին մը տեսնելով զանիկա որ կրակին քովը նստեր էր , նայեցաւ անոր ու բաւ , Այ-
57 րա անոր հետն էր : Բայց Պետրոս ուրացաւ զանիկա ու բաւ , Կնիկ , ես անիկա չեմ ճանչ-
58 նար : Եւ փոքր մը հետը մէկ ուրիշ մը տեսաւ զանիկա ու բաւ , Դուն ալ անոնցմէ հա՛ . և Պետրոս բաւ , Մարդ , ես չեմ :
59 Եւ ժամու մը չափ անցնելէն հետո՝ ուրիշ մըն ալ կը պնդէր ու կ'ըսէր , Ճիշտ ասիկա ալ
60 անոր հետն էր , ինչու որ Գալիլեացի է : Բայց Պետրոս բաւ , Մարդ , չեմ գիտեր ինչ կը դրուցես դուն . և քանի որ իր խօսքը բերա-
61 նէն էր՝ հանկոյն հաւը խօսեցաւ : Եւ Տէրը դարձաւ ու Պետրոսին նայեցաւ . Պետրոս ալ միտքը բերաւ Տէրոջը խօսքը որ իրեն ըսեր էր թէ Դուն հաւը չխօսած՝ երեք անգամ
62 պիտի ուրանաս զիս : Ու Պետրոս դուրս ելլելով դառնապէս լացաւ :
63 Եւ ան մարդիկը որ Յիսուսը կը պահէին ,
64 Ծաղր կ'ընէին զանիկա ու կը ծեծէին . Եւ ա-նոր աչքերը ծածկելով՝ անոր երեսին կը զար-նէին , ու կը հարցընէին իրեն բսելով , Մար-
65 գարէացիր՝ ո՞վ է ան որ քեզի զարկաւ : Եւ ուրիշ շատ բաներ կը զրուցէին իրեն հայհո-յելով :
66 Ու երբոր առտու եղաւ՝ Ժողովուրդին Ծե-րակոյտը , քահանայապետներն և գրիչները Ժողովեցան , ու տարին զանիկա իրենց ա-ռաջարկ՝ և բսին , Թէ որ Քրիստոսը դուն ես՝
67 բսէ մեզի : Բաւ անոնց , Թէ որ ձեզի բսեմ

68 ալ՝ պիտի չհաւատաք։ Եւ թէ որ ձեզի ցնդ
ը հարցընեմ, ինծի պատասխան պիտի չտաք։
69 Ահա ալ այս պիտի արձակէք։ Ասիկ եմեն որ
գին մարգոյ Աստուծոյ գթառատ ալ կոպիտ
70 պիտի ընան։ Եւ ամէնքը լսեն։ Ուրեմն
գան Աստուծոյ որդի՞ն ես։ ինչպէս ալ բաս
71 անես։ Պատ կ՚բան թէ ես եմ։ Եւ անոնք
լսեն։ Ահ ի՞նչ պէտք է մեզի վկայութիւն։
ինչու որ մենք ինքնիւ առանց բերնէն լսեցինք։

ԳԼ· ԻԹ

1 Ամէն որ դռնէն չի մտներ ոչխարաց գաւիթը, հապա ուրիշ տեղէ մը կը բարձրանայ, նա գողցող է ու աւազակ։ 2 Բայց որ դռնէն կը մտնէ, ան է ոչխարաց հովիւը։ 3 Դռնապանն ալ անոր համար կը բանայ, ոչխարներն ալ անոր ձայնը կը լսեն, ու իր ոչխարները անունով կը կանչէ ու հանէ զանոնք։ 4 Երբ իր ոչխարները հանէ, անոնց առջեւէն կ՚երթայ, ոչխարներն ալ անոր ետեւէն կ՚երթան, որովհետեւ անոր ձայնը կը ճանչնան։ 5 Օտարի մը ետեւէն երբեք չեն երթար, հապա անկէ կը փախչին, որովհետեւ օտարներուն ձայնը չեն ճանչնար։ 6 Յիսուս այս առակը ըսաւ անոնց, բայց անոնք չհասկցան թէ ինչ բաներ կ՚ըսէր իրենց։

7 Ուրեմն Յիսուս նորէն ըսաւ անոնց. Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, ես եմ ոչխարաց դուռը։ 8 Ինչքան որ եկան ինծմէ առաջ, գողեր ու աւազակներ են, բայց ոչխարները չլսեցին անոնց։ 9 Ես եմ դուռը։ Ով որ ինծմով մտնէ, պիտի ազատի, ու պիտի մտնէ ու պիտի ելլէ ու արօտ պիտի գտնէ։ 10 Գողը չի գար, եթէ չըլլայ որ գողնայ ու սպաննէ ու կորսնցնէ։ Ես եկայ որ կեանք ունենան ու առատութեամբ ունենան։ 11 Ես եմ բարի հովիւը։ Բարի հովիւը իր կեանքը կու տայ ոչխարներուն համար։ 12 Բայց վարձկանը, որ հովիւ չէ, որուն ոչխարները իրեն չեն պատկաներ, կը տեսնէ որ գայլը կու գայ, ոչխարները կը թողու ու կը փախչի, գայլն ալ կը յափշտակէ զանոնք ու կը ցրուէ։ 13 Վարձկանը կը փախչի, որովհետեւ վարձկան է ու ոչխարներուն համար հոգ չունի։

14 Ես եմ բարի հովիւը, ու իմ ոչխարներս կը ճանչնամ ու իմ ոչխարներս ալ զիս կը ճանչնան, 15 ինչպէս որ Հայրը զիս կը ճանչնայ ու ես Հայրը կը ճանչնամ։ Ու ոչխարներուս համար իմ կեանքս կու տամ։ 16 Ուրիշ ոչխարներ ալ ունիմ որ այս գաւթէն չեն, զանոնք ալ պէտք է առնեմ, ու անոնք ալ ձայնիս պիտի լսեն, ու մէկ հօտ մը պիտի ըլլայ, մէկ հովիւ։ 17 Ասոր համար Հայրը զիս կը սիրէ, որովհետեւ իմ կեանքս կու տամ, որպէսզի զայն նորէն առնեմ։ 18 Ոչ ոք զայն ինծմէ կ՚առնէ, հապա ես ինքնիս կու տամ։ Իշխանութիւն ունիմ զայն տալու, ու իշխանութիւն ունիմ զայն նորէն առնելու։ Այս պատուէրը առի Հօրմէս։

19 Այս խօսքերուն համար նորէն պառակտում եղաւ հրեաներուն մէջ։ 20 Շատեր անոնցմէ կ՚ըսէին. Դեւ ունի ու խելագարած է, ինչո՞ւ կը լսէք զանիկա։ 21 Ուրիշներ կ՚ըսէին. Դեւահարի խօսքեր չեն ասոնք։ Կրնա՞յ դեւը կոյրերուն աչքերը բանալ։

22 Երուսաղէմի մէջ նորոգութեան տօնը եղաւ, ձմեռ էր։ 23 Յիսուս Սողոմոնի սրահին մէջ կը պտտէր։ 24 Հրեաները շուրջը առին զինք ու ըսին անոր. Մինչեւ ե՞րբ պիտի մեր հոգին կասկածի մէջ ձգես։ Եթէ դուն Քրիստոս ես, յայտնապէս ըսէ մեզի։ 25 Յիսուս պատասխանեց անոնց. Ըսի ձեզի ալ ու չհաւատացիք։ Գործերը որ ես կ՚ընեմ իմ Հօրս անունովը, անոնք կը վկայեն իմ մասիս։ 26 Բայց դուք չեք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք։ 27 Իմ ոչխարներս կը լսեն իմ ձայնս, ես ալ կը ճանչնամ զանոնք, ու անոնք ետեւէս կու գան։ 28 Ես ալ յաւիտենական կեանք կու տամ անոնց, ու անոնք յաւիտեան պիտի չկորսուին, ոչ ոք ալ զանոնք ձեռքէս պիտի խլէ։ 29 Հայրս որ անոնք ինծի տուաւ, ամէնէն մեծ է, ոչ ոք ալ չի կրնար խլել Հօրս ձեռքէն։ 30 Ես ու Հայրը մէկ ենք։

31 Հրեաները քարեր առին որ քարկոծեն զինք։ 32 Յիսուս պատասխանեց անոնց. Շատ բարի գործեր ցուցուցի ձեզի Հօրմէս, անոնցմէ ո՞ր գործին համար կ՚ուզէք քարկոծել զիս։ 33 Հրեաները պատասխանեցին անոր. Բարի գործի համար չենք քարկոծեր զքեզ, հապա հայհոյութեան համար, որովհետեւ դուն մարդ ես, ինքզինքդ Աստուած կ՚ընես։ 34 Յիսուս պատասխանեց անոնց. Ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞ թէ Ես ըսի, դուք աստուածներ էք։ 35 Եթէ զանոնք աստուածներ ըսաւ, որոնց որ Աստուծոյ խօսքը եկաւ, եւ Գիրը չի կրնար ջնջուիլ, 36 ինչպէ՞ս կ՚ըսէք ինծի, որ Հայրը սրբացուց ու աշխարհ ղրկեց, թէ հայհոյեցիր, որովհետեւ ըսի թէ Աստուծոյ Որդին եմ։ 37 Եթէ իմ Հօրս գործերը չեմ ըներ, ինծի մի՛ հաւատաք։ 38 Բայց եթէ ընեմ, թէեւ ինծի չհաւատաք, գործերուն հաւատացէք, որպէսզի գիտնաք ու հաւատաք թէ Հայրը ինծի մէջ է ու ես Հօրը մէջ եմ։ 39 Ասոր վրայ նորէն կ՚ուզէին բռնել զինք, բայց անոնց ձեռքէն ազատեցաւ։

40 Յետոյ գնաց նորէն Յորդանանի անդին, այն տեղը ուր Յովհաննէս առաջ կը մկրտէր, ու հոն կեցաւ։ 41 Շատեր եկան անոր մօտ ու կ՚ըսէին. Յովհաննէս նշան մը չըրաւ, բայց Յովհաննէսի ըսածները այս մարդուն համար ճշմարիտ եղան։ 42 Ու հոն շատեր հաւատացին անոր։

ԳԼ· ԺԱ

1 Մարդ մը հիւանդ էր, Ղազարոս անունով, Բեթանիայէն, Մարիամի ու անոր քոյրը Մարթայի գիւղէն։ 2 Մարիամ այն է որ օծեց Տէրը անուշահոտ իւղով ու սրբեց անոր ոտքերը իր մազերով, որուն եղբայրը Ղազարոս հիւանդ էր։ 3 Ուրեմն քոյրերը մարդ ղրկեցին Յիսուսի ու ըսին. Տէ՛ր, ահա որ զոր դուն կը սիրես հիւանդ է։ 4 Յիսուս լսելով ըսաւ. Այս հիւանդութիւնը մահուան համար չէ, հապա Աստուծոյ փառքին համար, որպէսզի Աստուծոյ Որդին անով փառաւորուի։ 5 Յիսուս կը սիրէր Մարթան ու անոր քոյրը ու Ղազարոսը։ 6 Երբ լսեց որ հիւանդ է, ուրեմն երկու օր մնաց հոն ուր որ էր։ 7 Ետքը յետոյ ըսաւ աշակերտներուն. Նորէն Հրէաստան երթանք։ 8 Աշակերտները ըսին անոր. Վարդապե՛տ, հիմա հրեաները քարկոծելու կը փնտռէին զքեզ, ու նորէն հոն կ՚երթաս։ 9 Յիսուս պատասխանեց. Տասներկու ժամ չէ՞ որ ցերեկուան մէջ է։ Եթէ մարդ ցերեկուան մէջ քալէ, չի գար, որովհետեւ այս աշխարհին լոյսը կը տեսնէ։ 10 Բայց եթէ մարդ գիշերուան մէջ քալէ, կը գար, որովհետեւ լոյս չունի։ 11 Այս խօսքերը ըսաւ ու ետքը անոնց ըսաւ. Մեր բարեկամ Ղազարոս քնացաւ, բայց կ՚երթամ որ զարթնցնեմ զայն։ 12 Աշակերտները ըսին անոր. Տէ՛ր, եթէ քնացաւ, պիտի ապրի։ 13 Յիսուս իր մահուան համար խօսեցաւ, բայց անոնք կարծեցին թէ քունի հանգիստին համար կ՚ըսէ։ 14 Ուրեմն Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց. Ղազարոս մեռաւ։ 15 Ձեզի համար կ՚ուրախանամ որ հոն չէի, որպէսզի հաւատաք։ Բայց երթանք անոր մօտ։ 16 Թովմաս, որ Երկուորեակ կը կոչուի, ըսաւ աշակերտակիցներուն. Եկէ՛ք մենք ալ երթանք, որպէսզի անոր հետ մեռնինք։

17 Ուրեմն Յիսուս երբ եկաւ, գտաւ որ չորս օր էր արդէն որ գերեզմանին մէջ էր։ 18 Բեթանիա Երուսաղէմին մօտ էր, հինգ տասնորդ ասպարէզ հեռու։ 19 Շատ հրեաներ եկած էին Մարթայի ու Մարիամի մօտ, որպէսզի մխիթարեն զանոնք եղբօրը համար։ 20 Մարթա երբ լսեց թէ Յիսուս կու գայ, ընդառաջ գնաց անոր, բայց Մարիամ տունը նստած էր։ 21 Մարթա ըսաւ Յիսուսի. Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս պիտի չմեռնէր։ 22 Բայց հիմա ալ գիտեմ որ զոր որ խնդրես Աստուծմէ, Աստուած քեզի պիտի տայ։ 23 Յիսուս ըսաւ անոր. Եղբայրդ պիտի յարութիւն առնէ։ 24 Մարթա ըսաւ անոր. Գիտեմ որ յարութեան ատեն, վերջին օրը, պիտի յարութիւն առնէ։ 25 Յիսուս ըսաւ անոր. Ես եմ յարութիւնը ու կեանքը։ Ով որ հաւատայ ինծի, թէեւ մեռած ալ ըլլայ, պիտի ապրի։ 26 Ու ով որ ապրի ու հաւատայ ինծի, յաւիտեան պիտի չմեռնի։ Այս բանին կը հաւատա՞ս։ 27 Ան ալ ըսաւ անոր. Այո՛, Տէ՛ր, ես հաւատացած եմ որ դուն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գար։

28 Այս ըսելէ ետքը գնաց ու իր քոյրը Մարիամ ինքնիրեն կանչեց ու ըսաւ գաղտնի. Վարդապետը եկաւ ու քեզ կը կանչէ։ 29 Մարիամ երբ լսեց, շուտով ելաւ ու անոր մօտ եկաւ։ 30 Յիսուս դեռ գիւղին մէջ չէր մտած, հապա հոն էր ուր Մարթա ընդառաջ եկաւ անոր։ 31 Հրեաները որ անոր հետ տունը նստած էին մխիթարելու զայն, երբ տեսան որ Մարիամ շուտով ելաւ ու դուրս գնաց, անոր ետեւէն գացին, կարծելով թէ գերեզմանը կու գայ որ հոն լալու։ 32 Մարիամ երբ եկաւ ուր որ Յիսուս էր, տեսնելով զայն ոտքերուն առջեւ ինկաւ ու ըսաւ անոր. Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս պիտի չմեռնէր։ 33 Յիսուս երբ տեսաւ որ կու լար ինք ալ ու հրեաները որ անոր հետ եկած էին ալ կու լային, հոգիով խռովեցաւ ու ինքզինքը ցնցեց, 34 ու ըսաւ. Ուր դրիք զայն։ Ըսին անոր. Տէ՛ր, եկո՛ւր ու տե՛ս։ 35 Յիսուս արտասուեց։ 36 Ուրեմն հրեաները ըսին. Տե՛ս որ որքա՜ն կը սիրէր զայն։ 37 Բայց անոնցմէ ոմանք ըսին. Ասիկա որ կոյրի մը աչքերը բացաւ, չկրցա՞ւ ինչպէս որ այս մարդուն մեռնիլը չթողուց։

38 Յիսուս նորէն խռովելով գերեզմանին եկաւ։ Քարայր մըն էր ան ու քար մը դրուած էր անոր վրայ։ 39 Յիսուս ըսաւ. Վերցուցէ՛ք քարը։ Մեռելին քոյրը Մարթա ըսաւ անոր. Տէ՛ր, արդէն գարշահոտ է, որովհետեւ չորս օրէ ի վեր հոն է։ 40 Յիսուս ըսաւ անոր. Չըսի՞ քեզի թէ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը պիտի տեսնես։ 41 Ուրեմն քարը վերցուցին։ Յիսուս վերցուց աչքերը վերի ու ըսաւ. Հա՛յր, կը գոհանամ քեզմէ որ լսեցիր ինծի։ 42 Ես գիտէի թէ միշտ կը լսես ինծի, բայց ասոր համար ըսի որ շուրջիս կեցող ամբոխը հաւատայ թէ դուն զիս ղրկեցիր։ 43 Այս ըսելէ ետքը բարձր ձայնով աղաղակեց. Ղազա՛րոս, արի՛ դուրս։ 44 Մեռելը դուրս եկաւ, ձեռքերն ու ոտքերը կապուած էին գերեզմանոցի կտաւներով, ու դէմքը սրբոցով մը փաթթուած էր։ Յիսուս ըսաւ անոնց. Արձակեցէ՛ք զայն ու թո՛ղուցէք որ երթայ։

45 Ուրեմն շատ հրեաներ որ եկած էին Մարիամի մօտ ու տեսան ինչ որ ըրաւ Յիսուս, հաւատացին անոր։ 46 Բայց անոնցմէ ոմանք գացին Փարիսեցիներուն ու ըսին անոնց ինչ որ ըրաւ Յիսուս։ 47 Ուրեմն քահանայապետները ու Փարիսեցիները ժողով հաւաքեցին ու ըսին. Ի՞նչ ընենք, որովհետեւ այս մարդը շատ նշաններ կ՚ընէ։ 48 Եթէ զայն այսպէս թողունք, բոլորը պիտի հաւատան անոր, ու Հռոմայեցիները պիտի գան ու պիտի առնեն մեր տեղն ու ազգը։ 49 Բայց անոնցմէ մէկ մը, Կայիափա անունով, որ տարուան համար քահանայապետ էր, ըսաւ անոնց. Դուք բնաւ բան մը չգիտէք, 50 ու չեք խորհիր թէ մեզի համար աւելի օգտակար է որ մէկ մարդ մը ժողովուրդին համար մեռնի, քան թէ ամբողջ ազգը կորսուի։ 51 Ասիկա ինքնիրմէն չըսաւ, հապա որովհետեւ տարուան համար քահանայապետ էր, մարգարէացաւ որ Յիսուս պիտի մեռնի ազգին համար, 52 ու ոչ միայն ազգին համար, հապա որպէսզի նաեւ Աստուծոյ ցրուած զաւակները մէկտեղ ժողվէ։ 53 Ուրեմն այդ օրէն սկսեալ խորհուրդ ըրին որ զայն սպաննեն։

54 Ուրեմն Յիսուս այլեւս յայտնապէս չէր պտտիր հրեաներուն մէջ, հապա հոնկէ գնաց անապատին մօտ գտնուող գաւառը, Եփրեմ անունով քաղաքը, ու հոն կը բնակէր աշակերտներուն հետ։ 55 Հրեաներուն Զատիկը մօտ էր, ու շատեր գիւղերէն Երուսաղէմ ելան Զատիկէն առաջ, որպէսզի իրենց անձերը սրբեն։ 56 Յիսուսի կը փնտռէին ու տաճարին մէջ իրարու կ՚ըսէին կեցած ատեննին. Ի՞նչ կը կարծէք, չի՞ գար տօնին։ 57 Քահանայապետները ու Փարիսեցիները հրաման տուած էին որ եթէ մէկը գիտնայ թէ ուր է, յայտնէ, որպէսզի բռնեն զայն։

ԳԼ· ԺԲ

1 Զատիկէն վեց օր առաջ Յիսուս եկաւ Բեթանիա, ուր որ Ղազարոս էր, զոր յարուցած էր մեռելներէն։ 2 Հոն ընթրիք պատրաստեցին անոր, ու Մարթա կը սպասարկէր, իսկ Ղազարոս անոնցմէ մէկն էր որ անոր հետ սեղանին նստած էին։ 3 Մարիամ ալ առաւ ֆունտ մը մաքուր նարդոսի իւղ, թանկագին, ու օծեց Յիսուսի ոտքերը ու իր մազերով սրբեց անոր ոտքերը։ Տունը բուրմունքով լեցուեցաւ։ 4 Աշակերտներէն մէկը, Յուդա Սիմոնի Իսկարիովտացին, որ պիտի մատնէր զայն, ըսաւ. 5 Ինչո՞ւ այս իւղը չծախեցին երեք հարիւր դահեկանի ու չտրուեցաւ աղքատներուն։ 6 Ասիկա աղքատներուն համար չէր որ կ՚ըսէր, հապա որովհետեւ գող էր ու քսակը իրեն յանձնուած էր, ու ինչ որ կը դրուէր անոր մէջէն կ՚առնէր։ 7 Յիսուս ըսաւ. Թո՛ղ զայն, որ թաղման օրուան համար պահէ զայն։ 8 Աղքատները միշտ ձեզի հետ կան, բայց ես միշտ ձեզի հետ չեմ։

9 Ուրեմն հրեաներուն մեծ բազմութիւն մը գիտցաւ թէ հոն է, ու եկան ոչ միայն Յիսուսի համար, հապա որպէսզի տեսնեն նաեւ Ղազարոսը զոր յարուցած էր մեռելներէն։ 10 Քահանայապետները խորհուրդ ըրին որ Ղազարոսն ալ սպաննեն, 11 որովհետեւ շատ հրեաներ անոր պատճառով կ՚երթային ու կը հաւատային Յիսուսի։

12 Հետեւեալ օրը մեծ բազմութիւն մը որ տօնին եկած էր, լսելով որ Յիսուս Երուսաղէմ կու գայ, 13 արմաւենիի ճիւղեր առին ու ելան դիմաւորելու զայն ու կ՚աղաղակէին. Օսաննա՛։ Օրհնեալ է որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի Թագաւորը։ 14 Յիսուս էշ մը գտաւ ու հեծաւ անոր վրայ, ինչպէս գրուած է. 15 Մի՛ վախնար, Սիոնի դուստր, ահա քու Թագաւորդ կու գայ, էշու մանուկի վրայ նստած։ 16 Իր աշակերտները նախ չհասկցան այս բաները, հապա երբ Յիսուս փառաւորուեցաւ, յետոյ յիշեցին որ այս բաները անոր համար գրուած էին ու անոր համար ըրին։ 17 Ուրեմն ամբոխը որ անոր հետ էր, երբ որ Ղազարոսը գերեզմանէն կանչեց ու մեռելներէն յարուցանեց զայն, վկայութիւն կու տար։ 18 Ասոր համար ալ ամբոխը ընդառաջ եկաւ անոր, որովհետեւ լսած էին որ ասիկա նշան ըրած էր։ 19 Ուրեմն Փարիսեցիները ըսին իրարու. Կը տեսնէ՞ք որ ոչինչ կ՚օգտուիք։ Ահա աշխարհ ետեւէն գնաց։

20 Հոն էին հեթանոսներէն ոմանք որ եկած էին տօնին համար երկրպագելու։ 21 Անոնք Գալիլիոյ Բեթսայիդա քաղաքէն Փիլիպպոսի մօտ եկան ու խնդրեցին անկէ ըսելով. Տէ՛ր, կ՚ուզենք տեսնել Յիսուսը։ 22 Փիլիպպոս գնաց ու Անդրէասին ըսաւ, Անդրէաս ու Փիլիպպոս գացին ու Յիսուսին ըսին։ 23 Յիսուս պատասխանեց անոնց ըսելով. Եկաւ ժամը որ Մարդու Որդին պիտի փառաւորուի։ 24 Ճշմարիտ, ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, եթէ ցորենի հատիկը հողին մէջ չիյնայ ու չմեռնի, մենակ կը մնայ, բայց եթէ մեռնի, շատ պտուղ կու տայ։ 25 Ով որ իր կեանքը կը սիրէ, զայն կը կորսնցնէ, ու ով որ իր կեանքը այս աշխարհի մէջ կը ատէ, զայն յաւիտենական կեանքի համար պիտի պահէ։ 26 Եթէ ինծի ծառայէ, ետեւէս գայ, ուր որ ես ես, ծառաս ալ հոն պիտի ըլլայ։ Եթէ ինծի ծառայէ, Հայրը պատիւ պիտի տայ անոր։

27 Հիմա հոգիս խռովեցաւ։ Ի՞նչ ըսեմ։ Հա՛յր, փրկէ զիս այս ժամէն։ Բայց ասոր համար եկայ այս ժամուն։ 28 Հա՛յր, փառաւորէ քու անունդ։ Ձայն մը եկաւ երկնքէն. Փառաւորեցի ու նորէն պիտի փառաւորեմ։ 29 Ամբոխը որ հոն կեցած էր ու լսած էր, ըսաւ թէ որոտ եղաւ։ Ուրիշներ ըսին. Հրեշտակ մը խօսեցաւ անոր։ 30 Յիսուս պատասխանեց ու ըսաւ. Ձայնս ձեզի համար եկաւ, ոչ թէ ինծի համար։ 31 Հիմա դատաստան է այս աշխարհին, հիմա այս աշխարհին իշխանը դուրս պիտի հանուի։ 32 Ես ալ երբ որ երկրէն վերացուիմ, բոլորը ինծի պիտի քաշեմ։ 33 Ասիկա կ՚ըսէր թէ ինչ մահով պիտի մեռնէր։ 34 Ամբոխը պատասխանեց անոր. Մենք Օրէնքէն լսեցինք թէ Քրիստոսը յաւիտեան կը մնայ, ուրեմն ինչպէ՞ս կ՚ըսես թէ Մարդու Որդին պիտի բարձրացուի։ Ո՞վ է այս Մարդու Որդին։ 35 Յիսուս ըսաւ անոնց. Լոյսը դեռ քիչ ժամանակ մը ձեզի հետ է։ Քալեցէ՛ք մինչ լոյս ունիք, որպէսզի խաւարը ձեզ չբռնէ։ Խաւարի մէջ քալողը չգիտեր ուր կ՚երթայ։ 36 Մինչ լոյս ունիք, լոյսին հաւատացէ՛ք, որպէսզի լոյսի որդիներ ըլլաք։ Այս բաները ըսաւ Յիսուս ու գնաց ու պահուըտեցաւ անոնցմէ։

37 Թէեւ այսքան նշաններ ըրած էր անոնց առջեւ, բայց չհաւատացին անոր, 38 որպէսզի Եսայի մարգարէին խօսքը կատարուի որ ըսաւ. Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր լուրին, ու Տիրոջ բազուկը ո՞ւմ յայտնուեցաւ։ 39 Ասոր համար չկրցան հաւատալ, որովհետեւ Եսայի նորէն ըսաւ. 40 Աչքերնին կուրցուց ու սիրտերնին կարծրացուց, որպէսզի աչքերով չտեսնեն ու սրտով չհասկնան ու չդառնան, ու ես զանոնք չբժշկեմ։ 41 Եսայի ասոնք ըսաւ, որովհետեւ անոր փառքը տեսաւ ու անոր մասին խօսեցաւ։ 42 Բայց նոյնիսկ իշխաններէն շատեր հաւատացին անոր, բայց Փարիսեցիներուն պատճառով չէին խոստովաներ, որպէսզի ժողովարանէն դուրս չհանուին, 43 որովհետեւ մարդոց փառքը սիրեցին աւելի քան Աստուծոյ փառքը։

44 Յիսուս բարձր ձայնով աղաղակեց ու ըսաւ. Ով որ ինծի հաւատայ, ոչ թէ ինծի հաւատայ, հապա զիս ղրկողին։ 45 Ու ով որ զիս տեսնէ, զիս ղրկողը տեսած է։ 46 Ես լոյս եկայ աշխարհ, որպէսզի ով որ ինծի հաւատայ, խաւարի մէջ չմնայ։ 47 Ով որ իմ խօսքերս լսէ ու չհաւատայ, ես չեմ դատեր զայն, որովհետեւ աշխարհը դատելու համար չեկայ, հապա աշխարհը փրկելու համար։ 48 Ով որ զիս կ՚անարգէ ու իմ խօսքերս չի ստանար, ունի զայն որ դատէ զայն, խօսքը զոր խօսեցայ, ան պիտի դատէ զայն վերջին օրը։ 49 Որովհետեւ ես ինքնիրմէս չխօսեցայ, հապա Հայրը որ զիս ղրկեց, ինք պատուէր տուաւ ինծի թէ ինչ ըսեմ ու ինչ խօսիմ։ 50 Ու գիտեմ որ անոր պատուէրը յաւիտենական կեանք է։ Ուրեմն ինչ որ կը խօսիմ, ինչպէս Հայրը ըսաւ ինծի, այնպէս կը խօսիմ։

ԳԼ· ԺԳ

1 Զատիկէն առաջ Յիսուս գիտնալով որ ժամը եկած է որ այս աշխարհէն անցնի Հօրը մօտ, ինչպէս որ սիրեց իր աշխարհի վրայ եղող իրեններն, մինչեւ վերջը սիրեց զանոնք։ 2 Ընթրիքի ատեն, երբ որ սատանան արդէն սրտին մէջ դրած էր Սիմոնի Իսկարիովտացի Յուդայի որ մատնէ զայն, 3 Յիսուս գիտնալով որ Հայրը ամէն բան ձեռքերուն տուած է ու Աստուծմէ ելած է ու Աստուծոյ կ՚երթայ, 4 ելաւ ընթրիքէն, վերի հագուստները հանեց ու սրբոց մը առնելով գոտիացաւ։ 5 Ետքը ջուր դրաւ լուացարանի մէջ ու սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ ու սրբել սրբոցով որ գոտիացած էր։ 6 Ուրեմն Սիմոն Պետրոսի եկաւ, ան ալ ըսաւ անոր. Տէ՛ր, դուն ինծի ոտքերս պիտի լուա՞ս։ 7 Յիսուս պատասխանեց ու ըսաւ անոր. Ինչ որ ես կ՚ընեմ, դուն հիմա չես գիտեր, բայց ետքը պիտի հասկնաս։ 8 Պետրոս ըսաւ անոր. Երբեք ոտքերս պիտի չլուա՛ս։ Յիսուս պատասխանեց անոր. Եթէ չլուանամ զքեզ, իմ հետս բաժին չունիս։ 9 Սիմոն Պետրոս ըսաւ անոր. Տէ՛ր, ոչ միայն ոտքերս, հապա նաեւ ձեռքերս ու գլուխս։ 10 Յիսուս ըսաւ անոր. Ով որ լուացուած է, ոտքերէն զատ ուրիշ բան մը չունի որ լուացուի, հապա ամբողջ մաքուր է։ Դուք մաքուր էք, բայց ոչ բոլորդ։ 11 Որովհետեւ գիտէր իր մատնողը, ասոր համար ըսաւ. Ամէնքդ մաքուր չէք։

